24382

Ծաղկեփունջ

Թիֆլիս

1910.

891.99 ; 192
Ծ - 22

20 03

14319

ԾԱՂԿԵՓՈՒՆՋ

Ամենատարածուած ընտիր երգերի
ընդարձակ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գինն է 40 կոպ.

ԵՐՐՈՐԴ ՏԻՊ.

ՀՐԱՏ. Խ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Աշըղ-Ջիւանու հետեւեալ աշխատութիւնները. Ռ. Կ.
Ջիւանի քնարը, առ. հատ. . . . » 50
» » երկր. հատ. . . . » 50
Աշըղ-Ղարիբի հէքիաթը, հանդերձ երգերով, » 40
Քեարամի և Ասլիի հէքիաթը . . . » 60
Շահ Իսմայէլի հէքիաթը . . . . » 50
Մելիք-Շահի հէքիաթը . . . . » 30
Արշալոյս և Լուսաբերիկ . . . » 30
Հայ աշուղներ . . . . . » 30
Քամալեանց Ս-ի հետեւեալ առակները եւ հէքիաթները
Խուլ Խաչիկ, բ. տիպ. . . . . » 25
Քաջ Աղասի, սիրելի հերոս . . . » 25
Սասունցի Յովհան . . . . » 30
Ազգային Առակները . . . . » 25
Սիրտ գրքից, պատկերազարդ . . . » 40
Գալօ-ափօ բ. տիպ. . . . . » 12
Երկու գրոյց { ա. Երեք խոստովանութիւն / բ. Երեք ոսկու պատմութիւն } 25
Երկու աղբէրացեղ, բ. տիպ. . . . » 30
Շէն թագաւորի աղջիկ, բ. տիպ. . . » 25
Աստուած աղքատի կռնըպում . . . » 20
Հէքիաթներ . . . . . . » 30
Աստուած չըճանաչող . . . . » 10
Անմեռ աշխարհ . . . . . » 8
Երկրասիրութիւններ . . . . » 50
Փոքրոգի բարեկամներ . . . . » 15
Մոլինար, գ. տիպ. . . . . » 25
Վարդանանց և Ղեւոնդեանց մասին գրոյց . » 25
Վարդան սպարապետ, Մխիթար երէցի գրոյց » 30
Աղայեանցի. Քեօրօղլի . . . . » 15

Арм.
2-3963а
Ам-1629

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Խ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

891.99-192
Ծ-22
2-3963а

ԾԱՂԿԵՓՈՒՆՋ

*Ամենատարածուած ընտիր երգերի
ընդարձակ ժողովածու*

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Инв. № 21513
14319

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԷՊՕԽԱ», Գանովսկայա, № 3.
1910

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

—

«Ծաղկեփունջ» երգարանի երկրորդ հրատարակութիւնը «Հերմէս» տպարանի փակման պատճառով՝ այնպիսի անկանոն, ուշ ու պակաս տպագրուեց, որ ես չցանկանալով զգալի քանակութեամբ գրքեր ոչընչացնել, որոշեցի լրացնել պակաս մնացած թերթերը. բայց երբ այդ պակասների տպագրութիւնը վերջացրած կազմարարին էի յանձնում, նոր միայն նկատեցի որ, նախկին ունեցածս թերթերը ինչ ինչ պատճառներով բոլորովին փչացել էին... ուստի կամայ-ակամայ ստիպուեցայ մնացած թերթերն էլ տպագրութեան տալ, այսպիսով՝ «Ծաղկեփունջը» հակառակ իմ դիտաւորութեան՝ լոյս տեսաւ Երրորդ տպագրութեամբ, որ իսկի ցանկալի չէր։

Ցանկալի չէր՝ որովհետև՝ նախ այս հրատարակութիւնն էլ քիչ տարբերութեամբ համարեա միևնոյն ծախք կլանելով, տպագրուեց շատ քիչ օրինակ. երկրորդ Տաճկա-Հայաստանում ներմուծուած սահմանադրական ազատ կարգերը շատ տարածուած երգերի կիրառութիւնը, ոչ միայն աւելորդ դարձրին, այլ նոյնիսկ որոշ չափով վնասակար, և այդ պատճառով էլ սոյն տպագրութեան մէջ տեղ չպիտի գտնէին, որքան էլ նրանք գեղեցիկ շարադրուած և յայտնի բանաստեղծների մտածութեան արդիւնք լինէին... բայց ինչպէս ասեցի վերոգրեալ հանգամանքները զրկեցին ինձ անհրաժեշտ փոփոխութիւններ անելու և մի քանի յայտնի հեղինակների թոյլտւութիւն ստանալու հնարաւորութիւնից, որոնցից յատկապէս ներողութիւն եմ խնդրում...

Գալով «Ծաղկեփունջի» առանձնայատկութեան՝ կասեմ միայն այն, որ թէև «Ժողովածու»-իս երկրորդ

93044-ԱՀ
1044-2002
1495-63

հրատարակութիւնն ես որն է քննադատութեան չենթարկեց, բայց ես առանձնապէս ընթերցող ժողովուրդը աւելի անաչառ քննադատ համարելով՝ և «Ծաղկեփունջի» կարճ միջոցում այնքան ժողովրդականանալ նկատի ունենալով, յաւակնութիւն ունիմ կարծելու, որ «Ծաղկեփունջը» չնայած իր թերութիւններին դեռ մինչև օրս էլ՝ թէ արտասահմանում և թէ Կովկասում լոյս տեսած բազմաթիւ երգարանների մէջ ամենալաւագոյնն է, թէ իր բովանդակութեամբ և թէ իր գնի մատչելիութեամբ...

Վերջացնելով խօսքս՝ յոյս ունիմ որ ինձ կյաջողուի մօտ ապագայում «Ծաղկեփունջը» ազատել իր բոլոր թերութիւններից և դարձնել այն՝ զուտ ժողովրդական երգերի մի ընդարձակ ժողովածու, ուր ամփոփուած կլինեն՝ ոչ միայն Կովկասում տարածուած ժողովրդական երգերը, այլ և Տաճկա-Հայաստանի գաւառներում երգուողները, որոնք լինելով ժողովրդի ստեղծագործութեան արդիւնք, ոչ պակաս հետաքրքիր և գեղարուեստական են։

Խ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 Փ Ն Ջ Ի Կ

Այս գեղանի անձեռագործ ծաղկանոցից
Կուզէի քեզ մի փունջ հիւսել հոտաւէտ,
Թարմ ծաղիկներ քաղած սրտիս խոր ծոցից,
Որոնց բոյրը վայելէիր դու յաւէտ։
Իբրև անանց մշտադալար մի գարուն,
Կանաչէին նրանց բողբոջներ մատաղ,
Ոռոգուած իմ գեղուն յոյզերի ծովում,
Աճած, սնուած ջերմ սիրոյս բոցավառ։
Եւ կուզէի նրանց ցողեր սրսկել,
Ցողեր մայլ և թախծալի երկնքից,
Որոնք իբրև բիւրեղացած կաթիլներ,
Լինէին լուռ վկաներ իմ տանջանքի։

Վ. Նալբանդեան

---

2 Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՜վ ինչ անուշ և ինչպէս զով,
Առաւօտուց փչես հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով,
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա, անցիր սրտէս ի բաց,

Ո՛հ, ինչ աղու և սրտագին,
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, երգէ սրտէս ի բաց,

Ո՛հ, ինչ մրմունջ հանես վտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քո հայելւոյդ մէջ անապակ,
Նային գիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկ ու հովն Հայոց,
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց,
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց,

Պէշիկթաշլեան

3 ԱԶԱՏՆ ԱՍՏՒԱԾ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգևել:

Ես անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թևերով,
Ազատութիւնը գրկեցի:

Մինչ գիշերն անհանգիստ,
Օրօրոցում կապկապուած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած:

Խնդրում էի նորանից,
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապեր,
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասեցի,
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ,
Ազատութիւն դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից:

Ազատութիւն ինձ կրկնեց.
Ճակատագիր վերևից,
Ազատութեան դու զինուոր,
Կամիս գրուել այս օրից:

Ո՛հ փշոտ է ճանապարհ,
Քեզ շատ փորձանք կսպասէ,
Ազատութիւնը սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է:

Ազատութիւն գոչեցի,
Թող որոտայ իմ գլխին,
Կայծակ փայլակ հուր երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախաղան,
Մինչի մահու անարգ սիւնը,
Պիտի գոռամ պիտի կոչեմ,
Անդադար ազատութիւնը:

Մ. Նալբանդեան

4 ԱԶՆԻՒ ԸՆԿԵՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Իմ թշնամիք ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զ'գնահատուած ոչ ոքից:
Բայց հաւատեաւ անձնանուէր,
Ազգիս մշակ կ'հաշուիմ:

Ազնի՛ւ ընկեր, չը մոռանաս.
Անդաւաճան, ջերմ սիրով

Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա և դու նոյն շաւղով։
Խեղճութիւնը հայոց ազգի
Կարեկցաբար մտածիր,
Ոսկէ գրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։
Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խղճով.
Այնտեղ Վարդանն, անմահ Վարդան,
Իւր խնկելի քաջերով։
Հայրենիք,—սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջև։
Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև։
Իմ մտերիմ, մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով։

Ս. Շահազիզ

---

5 Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր յերկրէն փախ տայ ձմեռ,
Չքնաղ երկիրն մերս Արմենիոյ,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր.
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերը հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև։
Տեսի դաշտերն Ոնուրիոյ,
Լեռն Լիբանան և իւր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկը իւր կոնտոլներ։
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև։

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի,
Հասակ մը ուր հէգին ի տենչ,
Յիշատակաց իւր կարօտի,
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյս տալով վերջին բարև.
Երթամ ննջեմ յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արև։

---

6 ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ։
«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապուած.
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։
«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։
«Նայիր նորան երեք գոյնով,
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ
Թող կործանուի Աւստրիան։
«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում,
Կարէ օգնել իւր եղբօրը,
Ջանց չարեցի քո սիրուն։
«Ահա իմ գործ, առ դրօշ,
Տուր ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք—
Պատերազմի վառ հանդէս։

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի՜, որ իւր ազգի,
Ազատութեան կը զոհուի:
«Գնա՛ եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա՛ թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:
«Գնա՛, մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին,
Քո թիկունքը, թող նա չասէ,
Թէ վատ է Իտալացին»:
Ասաց, տւեց օրիորդը,
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ:
Եղբայրն առաւ և ողջունեց.
Իւր սիրական քնքոյշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր:
—Քոյրի՛կ,—կանչեց քաջ պատանին—
Մնաս բարեաւ սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալիան:
Ասա՛ց, վազեց դէպի հանդէս,
Աւստրիացւոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէրժ,
Ազատութիւն Իտալիան:
Ո՛հ, իմ սիրտը կտրատւում է
Տեսնելով այսպէս սէրը,
Դէպի թշւառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:
Ո՛հ... արտասուքս ինձ խեղդում են,
Էլ չեմ կարող բան խօսել,
Չէ... թշւառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են:

Մ. Նալբանդեան

7. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ:
Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եզերքին
Դարե՜ւ դարե՜ւ խփելով
Փախչում էին լալագին:
—Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սգաւոր ես ինձ նման:
Ինչո՞ւ արցունք ցայտում են,
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:
Մի պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ՛ խայտալով,—
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով:
Վարդի թփեր թո՛ղ բունին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:
Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին,
Ճկուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին:
Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վճիտ,
Ջուրը մտնեն միշտ արձակ:—
Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,

Ամպի նման գոռալով
Էսպէս խօսեց յատակից·
«Խիղճա՛ս, անմի՛տ պատանի,
Նիրհս ինչո՞ւ դարևոր,
Վրդովում ես նորոգում,
Իմ ցաւերս բիւրաւոր։
«Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին,
Ոսկից գլուխ պճնուի,
Իւր զարդերով թանկագին։
«Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ, —
Տէրերն ինձ են ատելի,
Տէրերին ես օտար եմ...
«Կար ժամանակ որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պճրանքով·
Փախչում էի ափերէս։
«Յստակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչև ցայգ
Ջրիս միջին էր լողում։
«Ի՞նչս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞րը բերկրալի տեղերս։
«Տուրքը ջրի ամէն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ,
Մայրախնամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ.
«Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Յակոբի աղբիւրին,
Պիտի ցօղեմ արտօրայքն,
Իմ ատելի օտարին։
Կամ՝ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կըկզած,

Իւր նամազը կատարէ,
Թուրքը կամ Պարսիկը հոտած։
«Մինչ իմ որդիք.— ո՛վ գիտէ —
Ծարաւ, նօթի, անտէրունջ,
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...
«Հեռու հեռու քշեցին
Բնիկ ազգն իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգն անկրօն, մոլեկան։
«Դոցա՞ համար զարդարեմ,
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ,
Ծպոտ, պղծած աչերը։
«Բանի որ իմ զաւակունք,
Այսպէս կու մնան պանդուխտ, —
Ինձ միշտ սգւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»
Էլ չը խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին.
Օղակ օղակ օձի պէս,
Առաջ սողաց մոլեգին։

Գամառ-Քաթիպա

---

8 ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրի՛կ. ասաց դուստր հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես համար, թիւ չկայ։
Ասում են որ՝ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում,
Ճշմարի՞տ է, ասա՛ հա՛յրիկ,
Իմ ո՞րտեղ է փայլում»։
—Այո՛, դստրի՛կ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,

Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար։
«Հայրիկ տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքից,
Միւս անգամ այլ չերևեց»։
—Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խեղճ ասածը չը գիտէր։
Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածված,
Մի մարդ չկար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած։
«Հայրիկ, տես տես միւս աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չը թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքից,
Միւս անգամ այլ չերևեց։
—Ո՛հ, սիրական, խաղաղ մնայ,
Բանակալի դա աստղ էր,
Որ աշխարհ՛ն իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր։
Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում,
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում։
«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Զորս կողմը բակ բռնել է»։
—Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա՛,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչ մի մարդու
Ոչինչ վնաս տուած չէ։
Այն լուսաւոր բակն է նորա,
Առաքինի գործերը,

Աղօթք արա՛, որ երկարին
Նորա կեանքի թելերը։
Շատ օր չանցաւ, երկնքից
Մի այլ վառ աստղ պակասեց,
Ո՞վ աստղիկն էր, որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց։
Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լռութիւն.
Մի սրտաթափ, մազերն արձակ
Վազեց աղջիկ սգաւոր,
Դէպի գեղի գերեզմանը,
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ։
«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր։
Իմ աստղիկին տամ նոյնպէս,
Որ չփայլի՝ հերիք է.
Այս աշխարհ՛ն ինձ առանց քեզ,
Մութն ու խաւար մի բանտ է»։
Մի մարդ չկար որ նկատէր
Որ հետևեալ գիշերին,
Պակասեցաւ երկնքից,
Մի պայծառ աստղ խնդագին։
Երրորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղեցաւ իւր հօր մօտին,
Մարմինը խեղճ աղջկան։
«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծը թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքից,
Միւս անգամ այլ չերևեց»...

Մ. Նալբանդեան

9 ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր,
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս, որ երազ էր։
Կարկաչահոս աղբիւրն այն տեղ,
Թաւալում էր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ։
Եւ մեղեդին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՜խ, ափսոս որ երազ էր։
Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուքս գնում էին.
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

Ս. Շահազիզ

---

10 ԽՐԱՏ

Անմտածել վեր վարէ խօսքերդ, ճարտար եղիր,
Քեզ ճոռոմախօս կասեն, ուզում ես յիմար եղիր.
Քանիմ նախադասութիւն գրքերից բերան արա,
Միշտ ուսմիկ դասի մէջ գիտնական հանճար եղիր։
Ծանր կողմը կշեռքի աչքի առաջ ունեցիր,
Ճշմարտութիւնը սաէ համ նորից արդար եղիր,
Սուխծասիրտ անձի մօտ կզկթիր, եղիր կատու,
Եթէ տեսար տկար մարդ, արիացիր՝ չար եղիր։
Ժամանակի պահանջն է անուժին կողոպտելը,
Թէ խիղճդ քեզ խայթում է արտաքուստ արդար եղիր.
Ջիւան քեզ ո՞վ կիմանայ, դու գիտես քո հաշիւը,
Խօսքերով սուտ մղդասէր, փողի սիրահար եղիր։

---

11 ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԸ

Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար, ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։
Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարին գերանդիով հնձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիներու հովումը։
Ա՛յ մարդ՝ վեր-կաց սառը ջրով լուացվի՛ր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։
Հունձդ կապէ՛, բարդդ բարդէ՛, տուն արի,
Հանգստացի՛ր, երբ քո հունձդ կատարի,
Բե՛ր գերանդիդ կախէ պատին քո տանը,
Ես իրիկուն կը պատրաստեմ սեղանը։
Ա՛յ մարդ՝ հերիք ինչ որ այսօր քնեցիր,
Աչքդ մէկ բա՛ց, տես թէ ո՞րչափ ուշացար,
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լռել է մեր գղիրը ձայնիլէն։
Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քնել, սիրակա՛ն,
Արեգական շողը հասաւ մեր դրան,
Մի՛ ծուլանար, ժամանակդ խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ։

Գամառ-Քաթիպա

---

12 ԾՈՎԱԿ

Ձայն տո՛ւր, ո՛վ ծովակ ի՞նչու լռում ես,
Ողբակից լինել չը կամի՞ս դժբաղդիս,
Շարժեցէք զեփիւռք, ալիքը՝ վէտ-վէտ,
Խառնեցէք արտասուք [illegible] հետ։

1044-2002

Հայաստանի մէջ անձքերին վկայ,
Սկզբից մինչև ցարդ խնդրեմ ինձ ասա,
Մի՞թէ միշտ այսպէս կըմնայ Հայաստան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան։
Մի՞թէ միշտ այսպէս ազգս խղճալի,
Կըլինի ծառայ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է հայ և հայի որդին։
Արդեօք գալու՞ է մի օր ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ հայ ազգը,
Դիմէ դէպի իւրեանց սիրուն հայրենիք։
Դժուար այդ, միայն Տեսուչդ վերին,
Կենդանացրու հայութեան հոգին,
Ծագիր նոցա դու, քո լոյս գիտութիւն,
Որով իբր էակ նոքա բանական,
Կը լինին գործքովք Տիրոջ փառաբան։

Րաֆֆի

13 Ը Ն Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն։
Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
Այնպէս է հոգեկան լուսատու լապտերը մարդուն,
Ընկեր եմ ասում, աստուածավախ ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։
Թշնամիները իր վերայ գալած ժամանակը,
Կտրիճ հարազատ ընկերն է սուսերը մարդուն,
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ջիւան աշըդ,
Չի սպիտակիլ ամենևին մէկ հերը մարդուն։

14 ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացւեցաւ ժամանակ է զարթնելու,
Էրթամ ախոռ, գոմշուկներս լծեմ՝ գութան վարելու,
Դէհ, գոմշուկներ, ելէք, ելէք, արտը էրթանք աշխատենք
Հարկ ու խարջի վախտն մօտ է, վօթենք արուն ու քրտինք,
Հայի գութան, հայի գութան որի՞ համար կը ջանաս,
Ո՛վ քեզմով կտանջւի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս,
Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ ազատ օրս կորուցի,
Անվախ սիրտս վհատեցաւ հոգիս թուրքին մատնեցի։
Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն
վերջ ունի,
Դուն տեսա՞ր որ մեր դուշմանը ամօթ, խելք ու
գութ չունի։
Արի՛ փշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կռելու,
Կռենք—կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կռւելու։
Եղբարք հայեր, առէք խոփը, տանք դարբնին կռելու,
Կռել—կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու։

Գամառ-Քաթիպա

15 Կ Ռ Ո Ւ Ն Կ

Կռունկ ուստի՞ կուգաս ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս,
Մի վազեր երամիդ շուտով կը հասնիս,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս
Թողեր եմ ու եկել մլքերս ու այգիս,
Քանի որ ա՜խ կանեմ կու քաղւի հոգիս,
Կռունկ պահ մի կացիր ձայնիկդ ի հոգիս,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս։
Քեզ խաբար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քանց ջրի տօլապ,
Կռունկ Պաղդադ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս։

Ոչ գլուր գիտեմ և ոչ կիրակին,
Զարկած է գիս շամփուր բռնած կրակին,
Այրիլս չեմ հոգար ձիգնէ կարօտ եմ,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:
Պաղդադու կուգաս կերթաս ի Սահրաթ,
Թղթիկ մը գրեմ տամ քեզ ամանաթ,
Աստուած թող վկայ լինի քո վրադ,
Տարեալ հասուցես զայն իմ սիրելեաց:
Գրել եմ մէջ թղթիս թէ հոս մնացի,
Օրիկն ի օրեր աչերս չը բացի,
Սիրելիքս, ձեզանից կարօտ մնացի,
Կռունկ մեր աշխարհից խաբրիկ մը չունի՞ս:
Սրտներս կամեցաւ ելանք գնացինք,
Այս սուտ աստուրիս դարդերն իմացանք,
Աղու հացակեր մարդկանց կարօտ մնացինք,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:
Աստուրիս բաներ կամաց կամաց է,
Եթէ Աստուած լսէ դռնակ մը բացէ,
Ղարիպին սիրտն է սուգ աչքերն ի լաց է,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:
Աստուա՛ծ, քեզանէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ,
Ղարիպին սիրտն է խոց ջիկարն է վէրէմ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հէրէմ,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:
Աշուն է մօտեցել գնալու ես թէտբիր,
Երամ ես ժողվեր հաղարներ ու բիւր,
Ինձ պատասխան չտուիր ելար ու գնացիր,
Կռունկ մեր աշխարհէն գնա հեռացիր:

---

16 ԵՐԳ ՎԱՀԱՆԱՅ

Բա՛մ, փորոտան բարձուստ բոմբիւնք
յԱյրարատեան դաշտն ի վայր,
Արի արանց արիւնք յեռանդն
Աստատնան ի հրապայր,

Հրաւէր հայրենեաց հնչակի ընդհանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր,
Որք երկնաւորի պսակին էք կարօտ
Ու որ երկրաւորիս փառաց երկնայորդ:
Հապճ՛ն արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապճ՛ն ի զէն գունդագունդ
Ցնծեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէն ի վրէժ, ճ՛ն անդր յառա՛ջ,
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,
Օ՜ն անդր յառա՛ջ մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառա՛ջ, յառաջ յառաջ,
Հապճ՛ն յառա՛ջ:

---

17 ԱՆԻ ԲԱՂԱՔ

Անի քաղաք նստեր կուլայ,
Չը կայ տէր՝ մի՛ լայ, մի լայ,
Կասես բէչ է թո՛ղ մնայ՝ լայ,
Ա՜խ Երբ լսեմ՝ մի՛ լայ, մի լայ:
Շատ ցաւերով կ՚այրիմ տապիմ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս գայ՝ մօտենայ,
Հէչ չէ՛ սաէ մի՛ լայ, մի՛ լայ,
Ա՛խ, Հա՛յ տղայ, խղճա՛ ինձի,
Տես քո Անին թէ ի՞նչպէս է,
Հերիք ես լամ, դու չ՚գթաս.
Զէ՞ քո Անին շատ ափսոս է:
Ախ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ,
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բաղդս ընաւ գիս մոռացաւ:
Կորուսեր եմ թագաւորներ,
Ժողվեր եմ գլխուս քոռ բուեր,

Որք միշտ կ՚երգեն՝ «Անին անցաւ՝
Անին անտէր աւերեցաւ»։
Եկար տեսար, դարձիր կերթաս,
Լալով ասե «բարեաւ մնաս»,
Աստուած սիրես՝ զիս չ՚մոռնաս,
Մասիս սարին երբ մօտենաս.
Ասես իմ քաջ Արարատին
«Նստեր կուլայ քո խեղճ Անին».
Կասէ երբ աւետիք կ՚տաս,
Թէ «իմ Անի՝ հերիք է լաս»։

18 ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թեւերով,
Նախշուն թեւերը պէս-պէս ձեւերով,
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։
Երկինք ու երկիր քեզ տօնեն գարուն,
Չի ես քան զամէն եղանակ սիրուն,
Նա անձրեւ ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկւոր հաւերուն։
Ոսկի արեւ փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փչէ լեռներէն.
Ա՜խ, ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն։
Գլխաքարշ կերթամ ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Զ՚կայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ է անդորր քուն։
Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
Տերեւթափ ծառին սաւերախիտ ալար.
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար։

Առաջ գնա՛, գարուն, դէպի հիւսիսն ի խոր
Գնա՛, կանաչցո՛ւր դու անդ սար ու ձոր,
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարեւ,
Քու ուրախ գալստեամբ նոցա զւարճացուր։
Կուգաս գալ տարի՝ դու ինձ կու գտնես,
Ո՛չ ի մեր այգին եւ ո՛չ ի պարտէզ,
Այլ անզարդ քնով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես։

Գամառ-Քաթիպա

19 ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՛ղջոյն ընդ քեզ Հայաստան,
Մեր դիւցազանց գերեզման,
Ողջո՛յն հայոց թագուհի
Պսակեալ փառօք հայրենի։
Երկինք զրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդք ծլին ոտքին տակ,
Իւր մէկ նայւածքն երկնագեղ,
Քու արտասւացդ ըլլան դեղ։
Ո՛հ, ինչ անուշ նւագներ,
Պիտի հնչեն սոխակներ,
Երբ քու ճակատդ պսակէ
Ծաղկէօնեան դափնիէ։
Մանուկն յօրոց կը խայտայ,
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ,
Երբոր նշոյլք կը ժպտին,
Հայ աստեղաց նորածին։
Ո՛հ, շիրմանցդ քով ալ հանգչի,
Անմահութեան վեհ ոգի,
Մինչ զւարթունք ի բարձանց,
Պսակս սփռեն հայկազեանց։
Փափուկ մատունք թո՛ղ դրօշմեն,
Այն տառերով ոսկեղէն.

Մեր սրտին մէջ «սէր և լոյս».
Մեր հոգւոյն մէջ կեանք և յոյս։
Քու վշտերուդ փոխանակ
Երկինք կանգնեց յաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման՝
Քեզի Օրէնք շնորհեցան։

Փափազեան

20 ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,
Թէ երգ թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ,
Թէ որ զարնեն փափուկ քնար։
Չունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։
Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր ենք մենք,
Որ մրրկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն ոխ չարանենք,
Ի մի համբոյր ցրուին 'ի բաց։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։
Երբ ալեոր Մայր Հայաստան,
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքըն դաժան,
Քաղցր արտասուած բուժին ցօղով։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։
Մէկ տեղ լացինք մենք 'ի հնում,
Եկէք դարձեալ յար անբաժան,
Խառնենք զարտօսր և ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկ տեղ յոգնինք, մէկ տեղ ցանենք,
Մէկ տեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Պէշիկթաշլեան

21 Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

«Ի՞նչ անենք»... Ամօթ այսպէս ասողին,
Ամօթ, բի՜ւր ամօթ յուսահատուողին,
Մա՜հ, մա՜հ, հազար մահ հէգ վհատուողին...
Եղբարք, ալ չասենք, «Հայե՛ր, ի՞նչ անենք»։
Ասէք՝ ի՞նչ կ'անէ ջուրը ընկածը,
Ասէք՝ ի՞նչ կանէ քաղցած սովածը,
Ասէք՝ ի՞նչ կ'անէ գերի ընկածը...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»։
Ջրամոյնք ճգնին՝ քանի ոյժ ունին,
Քաղցածը մաշէ շեմքը դրացիին.
Փախչել կհնարի կաշկանդուած գերին...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»։
Հարո՛ւստ, հէ՞ր ոսկիդ սնդուկը դրել ես,
Կորի՛ճ, ո՞ր օրւայ ոյժդ պահել ես,
Առ ի՞նչ, ազգասէ՛ր, ազգդ սիրել ես...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»։
Հարո՛ւստ, դիմացդ է ազնիւ ասպարէզ,
Հայրենիքին լաւ է քան թէ ոսկու դէզ,
Թէ մեռնիս՝ ոսկիդ հո՞ղ կտանես...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»։
Կորի՛ճ, ալ կ'անցնի քանի մի տարի,
Այդ թշիդ վարդը խալաւ կխամրի.
Չի թողնիր միայն յիշատակ բարի...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»։

Թէ ուզէ Հայը նա շատ բան կ՚անէ,
Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»։
Հայը կտրիճ է Վեհ Պատրիարքին
Յորդորակ սփռել բոլոր Հայ ազգին,
Թօթուել-զարթեցնել մեր թմրած հոգին...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»։

Գամառ-Քաթիպա

22 ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար։
Ինձ համար չէ կենաց բաղդը,
Ինձ համար չէ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար։
Ինձ համար չէ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար։
Ինձ համար չէ բարեկամաց,
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրւայ ուրախ ասելը,
«Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար։
Ինձ համար չէ ծնողաց լացը,
Ինձ համար չէ աղջկայ ախրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուիլը,
Բարեկամաց՝ չէ ինձ համար։
Բայց ինձ համար կռւոյ ժամը,
Կերթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահաուիթ սպանիչ գնդակը,
Անդ պատրաստուած է ինձ համար։

Պատկանեան

23 ԹԷ ԻՄ ԱԼԵՒՈՐ...

Թէ իմ ալևոր հերքս սենային,
Ոյժս ինձ յետ գար, կարիճ դառնայի,—
Նժոյգ ձի նստած, պեխս ոլորած,
Ձեռս թուր առած ես դաշտ կերթայի.
Ես դաշտ կերթայի—դաշտ Աւարայրի,
Ողողած ցօղած Հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի։
Կ՚ասէի Հայոց օրիորդներին,
«Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը,
Թողէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—
Ժանգոտած ու գուլ են մեր թրերը.
Տուէք բեհեզեայ մեզ ձեր շալիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը»
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից.—
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը»։
Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Սնդուկներս լի ոսկով, արծաթով,
Տատերու նման ես չէի լինիլ
Երբէք ագգասէր ունայն խօսքերով.
Տամպանեա գինու, Ա... Խ... տեղ՝
Կառնէի առատ գնդակ ու վառօդ,
Արձակ համարձակ կ՚երթայի հանդէպ
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով։
Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման.—
Ճուտաքայլ երթալ դէպի Հայաստան.
Խղճուկ հայ ազգին լինել օգնական,
Եւրոպ՛ Ասիա արեան գետերը
Կը վազեցնէի հեղեղի նման,
Մինչև որ թագ, գահ ու ազատ կրօն
Ինձնից չստանար թշուառ Հայաստան։

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ
Աստուած լինէի մեր հողագնդին,
Ի՜նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի
Մեր արիւնարբու թշնամեաց գնդին.
Նենգ... Թուրք մոլի, Պարսիկ ոխերիմ,
Դարեւոր ոսոխ դու Յոյն կրօնամոլ,
Գիտցի՛ք, որ իմ սուր երկսայրի սրից
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին։

Գամառ-Քաթիպա

24 ԻՄ ՄԱՀԸ

Եթէ աժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...
Տոգլիանան ցաւքս ու հոգիս,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։
Եթէ սնարս՝ իմ տխպար
Մամ մը վտիտ ու մահադէմ,
Ո՜հ, նշուլէ ցուրտ ճառագայթք,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։
Եթէ ճակտովս արտօսրաթօծ
Զիս պատանի մէջ ցուրտ դէրթ վէմ,
Փաթթեն, դնեն սև դագաղը,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։
Եթէ հնչէ տխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր յամր քայլ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։
Եթէ մարդիկն այն մահերգակ՝
Որք սև ունին ու խոժոռ դէմ՝
Համասփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։
Եթէ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սգալէն

Իմ սիրելիքը բաժանուին,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ։
Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնիմ...

Պ. Դուրեան

25 ԲԼԲՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ բլբուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջն Հայոց երգէ հոգոյս հետ։
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս՝ որ ի խաչն էր կից՝ թունդ տաւ.
Ի խաչին թևէն թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ։
Բլբուլ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ՝ բլբուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրաղբուցիկ,
Որ զՎարդան ի վարդը տեսնու կարմրիկ,
Զմեռն հանապազ կու գնայ կայ ի լաց,
Յարտաղ գայ գարունն ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յԵղիշէի ձայն.
Թէ պատասխանիկ մ' արդեօք տայ Վարդան։

Ղ. Ալիշան

26 ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ լռենք, եղբայրք, հիմի է՞լ
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը, մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
Ասացէք եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք,
Հիմի է՞լ լռենք,

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին.
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց՝
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապուած գերի ենք.
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ո՞ւր պտուենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնը հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից,
Պանդուխտ հալածեալ, եղբայրք ո՞ւր դիմենք՝
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է ի՞նչ անենք.
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլադգեստ գառին մեզ գլուխ դրաւ,

Սուրբ խորան չունինք, ուր ո՞ւր աղօթենք,
Հիմի է՞լ լռենք.

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Ձե՞ն ասիլ, որ Հայք արժանի էին,
Այդ սարկական անարգ վիճակին։
Մեր Սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոնց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Եկ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք.
Ու այնպէս լռենք։

Գամառ-Քաթիպա

---

27 ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի է՞լ խօսենք, եղբայրք հիմի է՞լ,
Երբ ընտանեկան երկպառակութեամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ապգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք.
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել էր Պարսից լիկ մատեան
Գունդը, մեր վաթսուն հազարի դիմաց
Երբ մեր վատութեամբ, ողջ կորուսել ենք.
Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք. երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոխրատնով լցինք Դուին Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,

Երբ այս ամէնը մենք կատարել ենք,
Հիմի՞ էլ խօսենք։

Հիմի՞ էլ խօսենք, երբ հրապարակում
Պարսիկն առակ արել է Հային,
«Եթէ Ասորու նման աշխարհում
Չկայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,
Էլ վատ է Հայը», մենք այս տանում ենք.
Հիմի՞ էլ խօսենք,

Հիմի՞ էլ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախւում է անարգ հացկատակներին,
Մինչ սորուկ մարդիկ նստած մեր գլխին,
Եւ մեզ կարծում են հող իրենց ոտքի,
Ու մենք մեզ կոխող ոտքը լիզում ենք.
Հիմի՞ էլ խօսենք։

Հիմի՞ էլ խօսենք, երբ Լուսաւորչի,
Բնիկ ժառանգի թեերը կտրած,
Անարգ Պարսիկը՝ այս ու այն թեմի՝
Կարգում է տեսուչ ըստ իւր չար մտաց,
Եւ մենք դեռ՝ «կեցցէ արքին» գոռում ենք
Հիմի՞ էլ խօսենք։

Հիմի՞ էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,
Որ դեռ շուն են, և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձեալ պատւում ենք.
Հիմի՞ էլ խօսենք։

Էլ մեր երեսին մնաց մի կաթիլ,
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ո՛չ, թէ չենք ուզում հողէց հող կորչել,
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք.
Ազգ, եկեղեցի փրկենք ազատենք.
Ապա թէ խօսենք։
Մ. Նալբանդեան

---

28 ԴՈՒ ԶՈ՞Վ ԽՆԴՐԵՍ...

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս՝
Անլաց աչօք դիտէ զորդիդ
Եւ իւր վէրքերն արիւնահոս,
Թրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տարի ի Զէյթուն։

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ,
Կակուղ ձեռամբ փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
Իբրև հրեշտակ նուագելով։
Զիս հանգչեցուր ի հող ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

«Նորեկ որդւոյս կենաց արև
Ձեզի համար փայլի, Հայեր»,
Այսպէս յայնժամ դու կերգէիր
Օրօրոցիս նստած քովիր։
Անոնց համար շիջաւ և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս.
Սակայն, մայր իմ, նայէ չորս դիս,
Արիւնառուշտ թուրքերը տես
Հազարներով փռւած գետին։
Կերաւ զանոնք մեր սուրն ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Որպէս վիշապ մռնչելով,
Յանկարծ մեզ վրայ յարձակեցան,
Ցնցեց Զէյթուն գլուխը ժայռոտ,
Իւր վհից մէջ թօթափեցան։
Կարմիր ներկաւ ձորք մեր ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ու ծափ զարկին մեր հարց սուերք,
Զի չէ մեռած Հայոց կրակ,

Ու ցնծային այնչափ զոհեր,
Չի լուծաւ վրէժ յարեան վտակ։
Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,
Հատուցանես զայն սիրուհոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կիջնեմ ի ծոցն անլոյս։
Խաչ մը անկէ վրաս ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Պէշիկթաշլեան

---

29 ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՈՅՆ

Ո՛չ փող զարկինք, ոչ արձագանք լեռնաստոյգ
Սարէ ի սար չարաշշուկ տարին լուր,
Ու չերգեցինք ողբոց երգերը սրտայոյզ,
Երբ պատանւոյն բացինք մայլ փոսին դուռ։
Գիշերական մունջ ստուերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով զհող փորեցինք,
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր զդաշտ բլուր և երկին։
Պէտք չէր դագաղ և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցէր ազատորդին քաջ որդին.
Նա յետ մարտին կարծես յոգնած կու հանգչէր
Ու վերարկուն կարմիր բաւ էր իւր անձին։
Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցից
Մեր քաջ Տէրտէրն, զինուոր Հայոց ու Աստուծոյ,
Գովեց զմահն և զքաջութիւնն իւր օրհնեց,
Թոյլ չի տւաւ հառաչմ՝ ու ճիչ հանելոյ։
Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշէն,
Տեսանք զգեղ ճակտին ու վէրքն պայծառ.
Մէյ մալ քամի յանկարծ փչեց ցրտաշունչ,
Լուսնին շողերն եկաւ գոցեց մթին ամպ,

Ու մեր սարերն գերթ ուրւականք անմռունչ
Սև գլուխնին անկած գետեն ապշութեամբ։
Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան
Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատւէր էր,
Ո՛չ այլ շքեղ արձանագիր, ոչ տապան,
Զինք մենակ թողուցինք իւր փառքին հետ։

Պէշիկթաշլեան

---

30 ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ու՞ր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ։
Ա՜խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ,
Անդ շինիր քո բոյնը, հայրենի կտուրի տակ։
Անդ հեռու ալեոր, հայր ունիմ սգաւոր,
Որ մենակ իւր որդուն սպասում է օրէ օր։
Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարև արա,
Ասա թող նստի լայ, իւր անբաղդ որդու վրայ։
Դու պատմէ՝ թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝ կեանքս մաշւել, եղել է կէս։
Ինձ համար ցերեկը՝ մութ է շրջում արեգը.
Գիշերը թաց աչքիս, քունը մօտ չի գալիս։
Ասիր, որ չի բացւած՝ թառամեցաւ մնացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝ հայրենի հողից զրկւած։
Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիր արագ,
Դէպի հայոց երկիրը, ծնած տեղս-Աշտարակ։

Դոդախեան

---

31 ԻՄ ՍԷՐԸ

Սիրում եմ այնպէս, որպէս չէ սիրած
Դեռ ոչ մի էակ արար աշխարհում,
Այդ սէրն է միայն որ սրտիս տիրած
Անշէջ վառւում է իմ ջերմ երգերում։

Բայց ես իմ սրտով չեմ երգում ներբող,
Երկնային պարգև սին գեղեցկութեան,
Պաշտում եմ մի սուրբ պատկեր լուսաշող,
Նա է իմ կուռքը երկրպագութեան:
Ո՛հ դու ես իմ սէր, սուրբ ազատութիւն,
Ես քեզ եմ միայն սիրում խելագար,
Քեզ եմ նւիրում իմ խինդ, իմ ուխտն,
Իմ կեանք, իմ արև զոհում քեզ համար...
Ո՛հ ազատութիւն անմարմին ոգի,
Թռիչ երազում ինձ երևցար,
Եւ իմ վառ սրտի, իմ վառ ցնորքի,
Դու միակ իշխող տիրուհին դարձար,
Ես զմայլում եմ քո լոյս պատկերով,
Քո հետ համբուրում ազատ անվտանգ,
Բայց յանկարծ դահիճն արնաներկ սրով,
Խզեց իմ սիրոյ մաքուր թոթովանք...
Ես քեզ կամեցայ, ով իմ լոյս հրեշտակ,
Ցարգևել սիրոյս վարդը նորաբաց.
Այժմ առ դիակս, վարդի փոխանակ,
Արնաներկ դիակ՝ քո սիրոյն զոհւած...

Ս. Ծատուրեան

32 ԹԷ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Թէ հայրենեաց պատկադիր:
Գողթնի քնարք լռել են,
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պատկել:
Մասեաց գագաթ թող գան բազմին,
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնը հոտոտել:
Փախէք ամպեր Շաւարշանէն,
Սլ իմ ցօղէք ձեր ցօղեր,

Շաւարշանը ոռոգւած է,
Հայոց քաջաց արիւնէն:
Եւ կը ծլին ու կը ծաղկին,
Այս դաշտի մէջ ոչ խոտ վարդ,
Այլ Վարդանայ խնկած երկիր,
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:
Բանդակագործ քաջ Եղիշէն,
Գրիչ ի ձեռն դայ յԱրտազ,
Զափէ ձեէ գրէ դրոշմէ,
Կամք, մահ, հաւատք Վարդանանց:

Գ. եպ. Սրւանձտեան

33 ԹԷ ԻՄՍ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Թէ իմս հայրենեաց քնար ագաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն,
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր,
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:
Թէ հայ մուսային սրտառուչ նւագ,
Դեռ կ՚եղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ Հայաստանի սև բաղդին հագագ,
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն:
Թէ իմ հայրենեաց կիսամեռիկ շունչ,
Դեռ լսի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լոիկ մնջիկ հեծէ անշշունչ,
Ո՛հ, անկարեկիր իմ լալիքս է այն:
Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն,
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն.
Զորս հազար տարւան պարծանաց դարուն,
Արձագանք տւողն՝ աղաղակս է այն:
Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր,
՝Ահա այս մաշւած իմ կուրծքս է այն,
Սև սև թերթերուն էջ սրտակտոր,
Արտասուօք գրւած՝ իմ աչիքս է այն:

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր,
Վարդագոյն ներկւած՝ իմ կողերս է այն,
Թէ աչքէ անցընես շամփրած նիզակներ,
Մահահոտ ցցւած՝ իմ թիկունքս է այն։
Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ,
Ինկած տեսանես՝ իմ ոյժս է այն.
Թէ զէնք, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր.
Փշրած կոտրած՝ ոսկորներս է այն։
Թէ արեամբ ներկեն ակունք եդեմին,
Նշխար քաջերուն իմ բիբերս է այն,
Թէ քաղցր ու ամբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն։
Թէ վճիտ գետերն, աղբիւրքն արծաթի,
Լալիք առւակեն՝ երակներս է այն.
Թէ Տիգրիս, Գեհոն, Փիսոն մանչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն։
Թէ սառնամանիք ձմրան բքաբեր,
Լեռներն է պատեր, իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշիկ հովեր,
Ցրտագին փչեն, իմ շնչիկս է այն։
Թէ վտակ վտակ ցօղէ զյիշատակ,
Զայս տրտմավաստակ, աչքերս է այն,
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան.
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն։
Թէ մթին խորշերն ու ձորեր լռեն,
Սևերով ծածկեն մենաստանս է այն.
Թէ ողբ կ՚կարդան վայրերն եդեմին,
Ճնշւած լերդերուս արձագանքն է այն։
Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ,
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթոգին խնդիւ՝
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն։
Եւ հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ,
Ընկած ապաբաղդ՝ իմ ճակատս է այն,

Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պսակ,
Դրած սգաւոր՝ գլուխիկս է այն։
Եւ կիսակործան տաճարն հայրենի,
Սև սուգ է պատեր՝ տաղաւարս է այն.
Ուր շիջելավառ կանթեղ դեռ հիւծէ,
Նւազ առ նւազ՝ իմ յոյսս է այն։
Ուր տխուր նստեր, մազերն են ծածկեր,
Իւր սևուկ աչքեր սիրականս է այն.
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հովեր,
Յուսով կոթներ՝ Հայաստանս է այն.
—Գերեզմանս է այն։
Ուր երբ տեսանեմ զիմ հէգն Հայաստան,
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն,
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն։

Մ. Հ. Ֆէլիկեան

34 ՇՈՒՇԱՆԻԿ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սիրտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,
Արդ հեռանաս՝ մեզ մութ պատէ անփարատ։
Քո սուրբ ձեռօք մեր վէրքեր շատ անգամ,
Լւանայիր, դեղ դնէիր ամեն ժամ,
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանքդ ազգիդ համար է ազատ։
Արդ հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զրկւի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից։
Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի,
Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատ քեզ ընկեր,
Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր։

Կարինեան

35 ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից,
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բուսած ծաղկի նման դաշտումը։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ դարձնում են,
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երէկը կրկնվում է միշտ այսօր։
Ասպարէզս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի.
«Դա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»։
— Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչերը կարճատես։
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Բանի բոպէ բաղդը ժպտաց ինձ պայծառ։
«Հա՛, ասացի. դարձել է իմ անիւը.
Լրացել է իմ վատ բաղդի չար թիւը»,
Յանկարծ՝ փչեց անտուրժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին։
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անապորոյն վիճակը,
Ա՛խ, մօտեցիր օրհասական օր մահուան,
Բե՛ր քու հետդ սև հող ու նեղ գերեզման։
Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վրէս ծածկած վերմակը,
Բայց, ա՜խ, երբոր կ՚անցնի ամիս ու տարի,
Կ՚մամռոտի գերեզմանը այն քարի.
Յետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը իմ յիշատակ—կըկորչին.
Բայց կ՚ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մնար, ամուր անկործան..

Ես երգեցի երգ ողորմ ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ.
Մի՞թէ այնքան անգութ կ՚լինի Լետա գետ,
Որ անունս անգամ կանէ նա անհետ։
Գամառ-Քաթիպա

---

36 ԱՐԻՔ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Արի՛ք Հայկազունք, առաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ՚ալ տանք,
Որ ազգն երբ գանի փրկարար կոչեց,
Նոր հոգի, նոր կեանք անոր պարգևեց։
Եկէք, բարեկամք առ բարձրեալն Աստուած
Ուղղեմք մեր մաղթանք սուրբ սրտէ բխած.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։
Ջրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան,
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց։
Յառաջադիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։
Ջնջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային։
Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ՚այնպիսի.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։
Հայերս անարգուած գրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց,

Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած՝
Մարդկութեան երկրորդ նշանն էր դրած.
Որուն շնորհիւ արդ ստացանք մենք,
Անոր յարդ տալով ապրինք ու երգենք։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ ևն։

Դուն ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,
Ալ այսուհետև մի՛ սգար լռիկ.
Զի ա՛լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,
Զքեզ հարս կ՚ուզեն տեսնել զարդարեալ։
Ալ մի՛ լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ, ևն։

Հայե՛ր, միանանք մեր մօր հետ օրհնենք
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ ի կեանք փառունակ։
Թող և մեր որդիք հետ անոնց անւան՝
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ, ևն։

Յ. Սվաճեան

37 ՆՈՐ ՏԱՐԻ

Երնէ՜կ, թէ այս Նոր տարին,
Վերջ տար Հայի ցաւերուն.
Զարը կորչէր ու բարին,
Բուն դնէր մեր սրտերուն։
Երնէ՜կ, թէ այս Նոր տարին,
Ազատ շնչէր Հայաստան,
Եւ շուրջ Մասիս մեր սարին,
Փայլէին արտ-անդաստան։
Երնէ՜կ, թէ այս Նոր տարին,
Ոտքի կանգնէր Հայաստան,
Եւ կխաքանդ մեր Կարին,
Լինէր քաղաք մեր ոստան։

Երնէ՜կ, թէ այս Նոր տարին,
Հայ սրտի մէջ ուժ հոսէր,
Ապաւինած իւր սրին,
Հայը քիւրդէն չի սարսէր։
Երնէ՜կ, թէ այս Նոր տարին,
Հայ ազգ ի մի գումարուէր։
Ի գլուխ Կարնոյ Հայ ամրին,
Հայի դրօշակ ծածանէր։
Հա՛յեր, երբէք չերկմտինք,
Կը կատարուի այդ ամէն,—
Եթէ խաղաղ մենք հանենք,
Փոքրոգութիւնը մեր սրտէն։

Գամառ-Քաթիպա

38 ՁԱՐԹԻՐ ՍԻՐՏ ԻՄ

Զարթի՛ր, սիրտ իմ վշտահար,
Նոր առաւօտ քեզ ծագեաց,
Պարք մուզայից շուրջ զքև,
Պահեն զգահոյդ յարհաւրաց։
Պանծա՛ դիւցազն մեծ արքայ փառօք,
Ճեմս առեալ յերթս քո երգով,
Ո՛չ, արև, ո՛չ լուսին, ո՛չ աստեղք, ո՛չ երկի՛ն,
Հասանին քոյդ փառաց, յաւերժացիր։
Ուրախութեան տօն է այս.
Բերկրեալ սրտից գեռահաս.
Պարք մուզայից շուրջ զքև,
Պահեն զգահոյդ յարհաւրաց։

39 ԶԷՅԹՈՒՆ ԱՆԿԱԽ

Զէյթո՛ւն, անկախ դու աշխարհիկ,
Քո սար ու ձոր են անառիկ,
Ամեն մի քար և անկինդ,
Շաղախել է քո արիւնդ։
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ։

Դեռ ես քո զօրեղ բազկում,
Ռուբինեանց երկիրն է շարժում,
Յիշատակ նախնի դիւցազանց,
Պատկերն է քո քաջ զաւակաց,
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ. հէլլէ։
Մըրախն է անեցած կայքդ,
Քո ապրուստն է և քո կայքն,
Բանութեան լուծը թուրք մարդու,
Էդ զէնքով ես թօթափել դու։
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ։
Կեցցէ Գրիգորեան հաւատը,
Հայ պահել է իր ժողովուրդը.
Ո՛չ մի կրօն աշխարհիս վրայ,
Զունի ազատ ոգին սորա։
Հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ, հէլլէ։

---

40 ԼՈՒՑ

Լռեց. ամպերը նկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին.
Մնացի մենակ՝ հոգիս վրդոված,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած։
Եւ այնուհետև ամեն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս։
Ա՜խ, ցոլա՛, փայլէ տխրադէմ Լուսին,
Գուցէ քու փայլից փայլ առա և Հայլին.
Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը - աշխարհը Հայաստան։

Գամառ-Քաթիպա

---

41 ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜հ մնաք բարով, Աստուած և արև,
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերև...
Աստղ մ'ալ ես կերթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ինչ են որ՝ եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին՝
Որք թռին այրել ճակատն երկնքին,
Այլ այն Աստուծոյն՝ շանթերու արմատ՝
Յաւելուն զէնքերն ու զարդերն հրատ...
Այլ ո՞հ ինչ կըսեմ... շանթահարէ զիս,
Աստուա՛ծ, խոկն հսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպրհի ձգտել՝ սուզել խորն երկնի,
Ընել աստղերու սանդուխն անալի...
Ողջո՜յն քեզ, Աստուած դողդոջ էակին՝
Շողին՝ փթըթին՝ ալեոյն ու վանքին,
Դու որ ճակատիս վարդն և բոցն աչերուս
Խլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տուիր աչացս, թեք տուիր սրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքէ,
Կեանք մ' անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հո՛ս մառախուղի մէջ համր՝ անշշունչ,
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար՝
Պլլըլիմ անուանդ, մըռընչեմ անդադար՝
Թո՛ղ անէծք մ'ըլլամ քու կողդ խրւիմ,
Թո՛ղ յորջորջեմ քեզ «Աստուա՛ծ ոխերիմ»։

Պ. Դուրեան

---

42 ՈՂՋՈՅՆ ՏՒԷՔ

Ողջոյն տուէք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն
Ողջոյն տուէք աւերակաց,
Արարատեան գաւառներուն։

Ողջոյն ունէք Աւարայրի
Արիւնաներկ սուրբ վայրերուն,
Ողջոյն ունէք տխուր լուսնի,
Որ լուսացնէ սեւ շիրիմներուն։
Ողջոյն ունէք պանդուխտ հայուն,
Թշուառ հայուն, չուառ հայուն,
Ո՛հ ձեռք ունէք, ո՛հ սիրտ ունէք,
Ո՛հ շունչ ունէք անշունչ հայուն։
Ողջոյն ունէք ոլոր մոլոր,
Մոլոր վազող գետակներուն,
Ողջոյն ունէք պղտոր բոլոր,
Աղի լեղի աղբիւրներուն։
Ողջոյն ունէք ո՛հ հող դարձած,
Արքայական պալատներուն,
Ողջոյն ունէք գետնատարած,
Սրբոց անբիծ մասունքներուն։
Ողջոյն ունէք ծաղկանց խումբ-խումբ,
Որ կան թաղուած հովիտներում,
Ուր հայ սոխակ թումբէ ի թումբ,
Կեանք է խնդրում դեռ. շատերուն։

43 ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թողնում եմ դէպի քեզ հոգւոյս անդադար.
Բայց աւա՜ղ, այս բանտում փակւած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես։
Հանապազ տանջւեցայ քո ճակատագրով,
Սրտումս շղթաների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ կամ լինել ազատ։
Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռւել,
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռնել,

Բայց, աւա՜ղ, այս բանտում փակւած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես։
Չ'գիտեմ, ինչպէս է կռւին հրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարւում է միշտ համբաւ սպանութեան ահեղ
Թափւում է ազգ. արիւն, բայց ես չեմ այնտեղ։
Ա՜խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս տեղ չարչարվիմ անծանօթ կապւած,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ ազատւած։

44 ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

Վիզներս ճկած՝ սրտով խոնարհենք.
Տիրանէր հպատակ լինինք ու ծառայ,
Նորա անունը աղօթքով յիշենք
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքենայ։
Քրտինք—վաստակի մեր տասանորդը,
Տանք նորա զօրքին, որ նա կշտանայ,
Ըլլանք սուլթանի մտերիմ ճորտը,
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ։
Թող նա մեր որդոց անմեղ արիւնով
Հաճոյքի համար սուրը լւանայ,
Սրտերուս կսկիծը զսպենք խնամքով,
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ։
Թող պարկեշտասուն մեր աղջիկներով
Սուլթանի տափոտ պասքը յագենայ,
Մեր ոսկին սէրայ տանինք փէշերով,
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ։
Ցուցնունք որ Հայը չէ տաճկին ոսոխ,
Այլ բարեացակամ սերտ ընկեր է նա.
Նորա զոհողն է և ոչ չարխօսող,
Խղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ։

—Լուռ կա՛ց, խե՜ղճ Հայ մարդ, մնա՛ յոյսէ
Քեզ շատ խաբեցին, էլ մի հաւատալ.
Կանցնեն ու կերթան շատ ու շատ դարեր,
Հայ ազգիս վերայ Թուրքը չի խղճալ։
Ինչո՞ւ կը մոռնաս Փրկչի առածը.
«Դուռը չբախած՝ ոչ ոք չի բանալ»,
«Ո՞վ ստացել է իւր չի հայցածը»,—
Հայ ազգի վերայ Թուրքը չի խղճալ։
Ազատ ըլլալ կուզես, գիտեմ փափագդ,
Բայց դու մի յուսալ հասնել այդ օրին.
Ո՞ւր է, դու գիտե՞ս, բաղդդ ու փառքդ
Ու ազատ կեանքդ։—Ի ծայր քո սուրին։

Գամառ-Քաթիպա

---

45 ԱՂՔԱՏ ԿԻՆ

Ցուրտը փչեց ձմեռ սաստիկ,
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարել ցրտիցը,
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա՛ հանդերձ պատառ պատառ,
Չունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը,
Պարզում է անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Ձեզ սիրելիք, ասեմ ո՞վ է
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը սառորբիկ
Կանգնած, ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով

Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզում է անցկացողին—
«Ողորմութիւն արէք պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նորան բարեկամ,
Ամենայն ժամ նորան բաց էր,
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկուած ամեն բանից,
Չունի անգամ հացի գին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։
Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ծուռ
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան, «խղճուկ,
Ե՛կ դու մեր մօտ, մենք կամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրի
Խիստ հարուածի սաստկութիւն»։
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Մ. Նալբանդեան

---

46 Վ Տ Ա Ր Ա Ն Դ Ի Ն

Թէպէտ վտար քաղքէ քաղաք կամ թափառ,
Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անգթաբար,
Այլ արդէն իսկ Ազատութեան երբ վեհ ձայն
Թռաւ բերնէս, յանձն առի զայս վիշտը համա...
Ազատութեան ես անձնուէր,
Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր։
Թէպէտ հեռի իմ սիրելեաց գրկերէն,
Հեռի նոցին զգուշիկ ձայնէն, երգերէն,
Տխուր քնարս ուռիներէն վար կախած,
Լռիկ ողբամ խեղճ ազգիս բաղդն մռահայց.
Ազատութեան ես անձնուէր, և այլն։
Թէպէտ յաչաց դառն հոսին արտասուք,
Յայտնել սրտիս կարօտն ու սուգ և պասուք,
Այդ արտասուք սրտիս վէրքերը լուանան,
Վէրքեր, զորոնք ազգիս ցաւերն հօն բանան.
Ազատութեան ես անձնուէր, և այլն։
Վտարանդի, թէպէտ դառն են այս օրեր,
Որ մ'ալ տեսնես նպատակիդ ես հասեր.
Ազատութեան յաղթանակը քու ձեռքիդ,
Վարդն ու շուշան պսակ պճնել զան ճակտիդ.
Ազատութեան ես անձնուէր, և այլն։

Մ. Փորթուգալեան

---

47 ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գետնին նայելով՝ մնացել եմ նստած,
Ձեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տուած՝ լալիս եմ, օրս խաւարած։
Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, ա՛յ իմ քաղցր Մասիս,
Աչքի արտասունքով էրուած, խորոված,
Երեսիդ նայեմ, մնամ քարացած։

Ծնող, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով ձեր սէրը յիշելով,
Եարաբ ե՞րբ կըլլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով։
Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով.
Մէկ ղուշ, որ գլխիս պտիտ է գալի,
Թէ երբ մէկ խաբար կը հանի ինձ բարով,
Հոգոց հանելով ասում եմ լալիս։
«Նազլո՛ւ, իմ Նազլո՛ւ, աննման Նազլո՛ւ,
Սիրտս խորովի՝ անունդ յիշելով,
Նազլո՛ւ, իմ Նազլո՛ւ հրաշալի՛ Նազլո՛ւ,
Աղասին քեզ տայ իր յետին բարով։
Սարերի դօշին, ձորերի միջին,
Վա՛յ գլխին տալով քո խեղճ Աղասին,
Երեսիցդ զրկուած, քո սիրով մաշուած՝
Տարակի նման փշի վերայ նստած։
Նազլո՛ւ, իմ Նազլո՛ւ, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս փրքրվել՝ աչքերս խաւարել,
Թո՛ղ մէկ շունչդ առնեմ, յետոյ հող մտնեմ,
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կլինեմ։
Քեզ եմ մնում, քե՛զ, քո ջանին մեռնեմ,
Հող ու գերեզման ես վրէս ունեմ.
Բանց իմ սառը մարմին էլ ի՞նչ գերեզման
Ինձի պէտք կուգայ, երեսիդ ղուրբան։

Խ. Աբովեան

---

48 ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔ

Աշխարհիս վերայ մէկը կար միայն,
Որ ինձ սիրում էր հոգով անարատ,
Նա իմ մայրիկն էր, իմ անուշ Ալին,
Հոգոյս ու մարմնոյս ծնող հարազատ։
Միտքս թռչում է միշտ դէպի երկինք,
Երբոր յիշում եմ մայրիկիս անուն.

Այդ նրանից է, որ չեն երկրային՝
Ոչ նորա ստինք, ոչ նորա լեզուն.
Նա ինձ կաթ տուաւ, տուաւ և լեզու,
Մինը քան զմիւսն աւելի անուշ.
Մէկով իմ փափուկ մարմինն էր սնվում,
Միւսով զարգանում իմ հոգին քնքոյշ։
Ի՞նչ կայ այնքան քաղցր ու սննդարար,
Որքան անարատ կաթն մայրական,
Ո՞վ կարէ խօսել այնպէս սրտաբուխ,
Ինչպէս որ մայրն է թոթովում մանկան։
Կարծես հիմա էլ տեսնում եմ մօրս.
Ես իբրև մանուկ գրկումն եմ նրա,
Նուրբ շրթունքներիս զարկում է մատով,
Որ իւր հետ ձայնեմ «աղո՛ւ» կամ «աղա՛»։
Ես թոթովում եմ հրճվում է մայրս,
Իմ մէջ տեսնում է շնորհքի նշան.
Զար աչքից ազատ պահելու համար՝
Վերաս կարում է պէս-պէս թալիսման։
Ղ. Աղայեան

---

49 ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբայրք, մարդկութեան մէջը
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն Երկինք.—
Եղբայրք, Հայ ապրինք։
Հայ ապրինք.—մեր հայրն է այն Դիւցազուն
Որ զազատութիւն սովորեցոյց մարդուն,
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժին.—
Եղբայրք, Հայ ապրինք։
Մեր աշխարհն է սուրբ.—Մեր հողուն վրան,
Աստուած է քալեր, հանելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք.—
Եղբայրք, Հայ ապրինք։

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կրօնից նախկին սեղանն է Մասիս.—
Եղբայրք, Հայ ապրենք,
Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝
Այլ և յեթեր մէջ շողայ լուսալիր.
Բաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք.—
Եղբայրք, Հայ ապրինք։
Հայ ապրինք.—ո՞ր ազգ կայ Հայուն նման,
Որ ունենայ հին պարծանքներ այնքան,
Ո՞ր ազգ Հայուն պէս շքեղ հայրենիք.—
Եղբայրք, Հայ ապրինք։
Նար-բէյ

---

50 Գ Ա Ր Ո Ի Ն

Է՜յ, կանաչ ախպէր, դուն բարով եկար,
Դուն բարով եկար, իմ կանաչ ախպէր։
Մով-մանուշակով ծաղկուն սարերէն,
Արտուտն ու արօս ինձի ձէն տուին,
Ու գարնան անուշ արև ոսկեղէն
Ինձի ձէն տուին՝ սար ու ձոր ելնեմ։
—Երանէկ ձեզի, սարե՛ր, ու ձորե՛ր,
Նշխուն հագերէք գարնան զուքսերով,
Ա՜խ, սիրտս մնաց ծով-դարդերի մէջ,
Գարնան զուքսերին մնաց կարօտով։
Ա՜խ, սարե՛ր, ձորեր, դո՛ւք առաջւան էք,
Բլբուլ ու բաղե՛ր դո՛ւք առաջւան էք.
Ա՜խ մենակ ես եմ փոխուեր ու չորցեր,
Բլբուլ ու վարդե՛ր, դուք առաջւան էք։
Ա՜խ, ես եմ փոխուեր ու աշխարհի մէջ,
Ղարիբ ու հիւանդ ճամբորդ եմ դառեր.
Ճամբէս մոլորել կերթամ փշի մէջ,
Սարե՛ր ու ձորե՛ր, դուք առաջւան էք։

Կեանքիս աղբուրը մարդիք քամեցին,
Իմ փայ—աշխարհը դարձրին մութ զնդան,
Ա՜խ, սիրտս ու հոգիս հալ ու մաշ արին,
Ու ծաղիկ կեանքիս փորին գերեզման։
Կերթամ փշի մէջ, գերեզման կերթամ՝
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ,
Ա՜խ, տանեմ սիրտս, տանեմ գերեզման.—
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ,
Ազիզ մեռելս տանեմ հողին տամ...
Է՜յ կանաչ ախպէր, կուգաս գալ տարի,
Ու գերեզմանս մամռով կը զուգես,
Իմ կանաչ ախպէր, գալդ միշտ բարի,
Խեղճ գերեզմանս մօքէդ չըքցես...

Ա. Իսահակեան.

51 ԹՇՒԱՌ ՀԱՅՐԵՆԻՔ

Թշուառ Հայրենիք, ո՛հ, դու, լաց հերիք
Հոսեց արտասուս քո հեղիկ հեղիկ.
Ո՛հ, թո՛ղ հանդարտին հառաչանքդ ու լաց.
Թո՛ղ լռէ տխուր Մուսայդ ողբասաց.
Քօղդ առ մէկդի, թող աչքունքդ ժպտին
Դէմ մայրակարօտ քո հայ պանդխտին.
Որ ձեռն ի ճակատ՝ մէջ օտար վայրաց
Կուլայ քո վսեմ փառքդ անմոռաց։
Հայրենիք. քո սիրտդ բացւաւ ծաղիկ
Քո շուրջդ ներկեց այգդ գեղեցիկ.
Ե՛լ, ե՛լ, արջնաթոյր արդ ամպոց տակէն
Որ վեց դարէ վեր գլուխդ ծածկեն.
Ե՛լ, ե՛լ ձեռքդ տուր, որդի քո եմ ես
Տո՛ւր որ համբուրեմ սիրով սրտակէզ,
Եւ քեզ սիրտ մ'ունիմ, տամ զանի յօժար։
Զոր հայութիւն ինձ տւաւ քեզ համար։

Յ. Մանուէլեան.

52 ՕՏԱՐՈՒՀԻՆ ԻՆՁ ԱՍԱՑ

Օտարուհին ինձ ասաց, «Հէ՞ր ես լալիս, արցունքը
Հեղեղի պէս ինչո՞ւ են ոռոգում քու աչքունքը,
Քու տրտմութեան ճար ունիմ, կփարատեմ քու դարդը,
Թշիս վրայ չե՞ս տեսնում փայլուն շուշանն ու վարդը»։
—Զուր մի՛ ջանար, սիրական, իմ դարդը չես փարատիլ,
Հոգիս հոգսից, ցաւերից չես փրկիլ, չես ազատիլ.
Թո՛ղ իմ աչքից հեղեղայ արտասունքի աղբիւրը,
Արտասուքն է լւանում սրտի խոր խոր ցաւերը։—
Օտարուհին ինձ ասաց. «տե՛ս, հասել է գարունը,
Դաշտերի մէջ բացւել են հազարերանգ ծաղկունքը,
Իջնենք դաշտը, օդ քաշենք, ծաղկունք քաղէ, փունջ փնջէ,
Հայրենիքիդ կարօտն առ, որ թաղիծ քեզ չի տանջէ»։
—Հայրենիքիս կարօտը ձեր դաշտից չեմ առնիլ,
Սառն հիւսիսից երկինքը Հայաստանի չեմ տեսնիլ
Ուր բիւր պատիկ ցոլուն են արեգակի շողերը,
Կենսատու է անձրևը, մեղրածին են ցօղերը,
Օտարուհին ինձ ասաց. «մոռացիր քու հայրենիք,
Քու հայրենին այնտեղ է, ուր սիրում են քեզ մարդիկ։
Տե՛ս արևին, նա պայծառ չէ՞ շողշողում հիւսիսում.
Հայաստանը կորել է, խե՛ղճ, դու ցնորք ես ուզում»։
—Սուտ են, սուտ քո զրոյցը, Հայաստանը չէ կորած,
Նա այնտեղ է, ուր Եփրատ ու Տիգրիսն են գրկւած,
Ուր Երասխը մրմունջով յուղւաց ջուրն է գլորում,
Ուր Մասիսի գագաթը ամպերից ցած է նայում,
Ուր փայլում է արեգը իր կուսական շողերով,
Ուր ջրում է երկինքը երկիրը զով ցօղերով,
Ուր որ չկայ բորէաս, չկայ շիմուն ու խորշակ,
Օդը շունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ...
Հայաստանը կայ. . աւա՜ղ խոպանացած, ամայի,
Եւ կծաղկի, երբ նորից ծծէ քրտինքը Հայի...
Նորա ստինքը յամառ է, չի կերակրում օտարին,
Օտարն խաբւած ասում է. «շիջաւ աստղը Հայերին»։

Բայց ինչ, դու չես հասկանալ իմ սրտամաշ դարդերը.
Մի՛ ջանար, ինձ չեն սփոփիլ թշիդ փայլուն վարդերը։—
Իմ տրտմութեան ցաւակից խանդաղակաթ գրկելով,
Օտարուհին ինձ տուեց գաւաթը լի գինով.
Երկնակապոյտ աչերը անթարթ աչերիս յառած,
Լաց ու ժպիտ երեսին՝ նա մեղմ ձէնով ինձ ասաց.
«Խմէ՛ գինի, պատանի, ի յիշատակ այն երկրին,
«Որ սրտամաշ կարօտով կոչում ես քու հայրենին.
«Պարզէ՛ ազնիւ ճակատդ, զւարթացի՛ր, ոգի առ,
«Յուսակտուր այդ դէմքով խղճալի մի՛ ձեւանար,
«Ձիւնաթաղ ու կիսամեռ դաշտը գարնանային շնչից
«Չի՞ն սթափում և յառնում մահահնագոյն խոր քնից.
«Երբ ծագում է արեւը՝ մառյլ չի՞ հալածվում,
«Մեռած բնութիւնն դէպի նոր կեանքը չի՞ վերածում։
«Դէհ, պատանի, քա՛ջ եղիր, խմէ՛ գինի, երգ երգէ,
«Տէրն է որբոց օգնական, Նա քու ազգն էլ կփրկէ»։

Գամառ-Քաթիպա

53 ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՎ

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր,
Ի՞նչ կը յապաղէք ելնել ի հանդէս.
Ի՞նչ կը յապաղէք, սիրտ կը դիմանա՞յ,
Սիրտ որ ազգասէր ըլլայ կը ցանկայ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ դեռ անտարբեր ցուրտ մնալ յաւէտ.
Խեռ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու ոգին հեռու մղենք, հեռու,
Սիրտ սրտի կապած, թև թևի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզը բացուած.
Օ՜ն, վազենք յառաջ, ի սուրբ խաչն վստահ,
Օ՜ն երթանք յառաջ, և անձնանուէր,
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր։
Հա՛յ, մի վհատիր, սիրտ առ և սիրտ տուր,

Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին։
Խաչ, Սէրն են նշան ճշմարիտ Հայուն,
Խաչ Սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն։
Սիրոյ դրօշներ,
Թո՛ղ արդ պարզուին.
Հաշտութեան ձայներ,
Թո՛ղ արդ հնչուին։
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ.
Սուտ են որ կասեն,
«Հայք զիրար կ'ատեն»։
Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկ.
Եկէք, հայկազունք, եկէք միանանք.
Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտ,
Օրհնելով Տէրը, որ մեզ պարգեւեց,
Մեր Ազգին կաղն ու հոգին,
Ազգային սահմանադրութիւն,
Յաւերժասցի արդիւնաւէտ։

Ս. Փափազեան

54 ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր երազի նման,
Անցաք գնացիք, այլ չէք դառնալու,
Ո՜հ, դուք երջանիկ, ո՜հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։
Ձեզանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ.
Ամեն բան ընկաւ մտածութեան տակ,
Րոպէ չը մնաց ազատ կամ ունայն։
Գիտակցութիւնը յաջորդեց սրտին,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս,

Ապոլլոնն տուեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերի։
Աւա՜ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չը գտայ մի լար…
Լո՛ւռ կաց դու քնար, այլ մի հնչեր ինձ,
Ապոլլո՛ն յետ առ դարձեալ դու նորան
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան։
Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ,
Առանց քնարի, անզարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Ճուարի ընդդէմ պատերազմելով։
Թող պատգամախօսն—հնացած Դելփի,
Իւր եռոտանու վերայ փրփրի,
Թող միջին դարու գաղափարներով։
Ամբոխը խաբել ճգնի—աշխատի…

Մ. Նալբանդեան

---

55 ԶԻՆՈՒՈՐԻ ԵՐԳԸ

Թռի՛ր իմ նժոյգ, սլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի կռուի փոթորիկ,
Կռուի մէջ միայն ես արեան գնով,
Կ'փրկեմ իմ խեղճ ստրուկ հայրենիք։
Տար ինձ այն աշխարհ—անցեալում հզօր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ուր ձւաղ դժբաղդ եղբայրքս այսօր,
Իւր կեանքն է ողբում օտարին գերի…
Անցան շա՜տ դարեր, անցան շա՜տ տարիք,
Ազգս շա՜տ ապրեց քաղցրիկ յոյսերով,
Բայց նորան երբէք չժպտաց երկինք,
Չ'տեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով։

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բաղդին,
Երկա՜ր սպասեց նա կեանքի գարնան,
Բայց նո՛րա առջև ոսոխ թշնամին,
Իւր սրով փորեց կեանքի գերեզման…
Դէհ, թռի՛ր, նժոյգ, սլացի՛ր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտումն է զինւորն իւր արեան գնով,
Ազգին պարգևում յաղթութեան դափնիք։

Ա. Ծատուրեան

---

56 ՀԱԶԱՐ ԵՐԱՆԻ…

Հազա՜ր երանի քեզ մանուկ ամբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
Անմեղութեան հետ, մոլի չարութիւն։
Բայց այն ո՞վ գիտէ՝ քեզ ի՞նչ էր սպասում
Փշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.
Միթէ՞ յաւիտեան պիտի մնայիր
Հանգիստ գրկի մէջ քո մօր սիրալիր,
Կամ թէ յաւիտեա՞ն քեզ պիտի ժպտար,
Գարնան վարդի հետ այս օտար աշխարհ։

Գամառ-Քաթիպա

---

57 ՕՏԱՐՆԵՐԷՆ ՉԿԱՅ ՅՈՅՍ

Ո՛չ, եղբա՛յրք, ո՛չ, օտարներէն չկա՛յ յոյս,
Մի՛ աչունիք, մի՛ դարձնէք յայս յայն կոյս,
Օտարն զձեզ թէև սիրէ հիւրաբար
Օտարն, ա՜հ, միշտ է օտար։
Օտարը ձեր վիշտը կը դիտէ անգորով,
Ի՞նչ փոյթ թէ դուք թափէք արցունք արիւնով.
Ով որ հայ չէ, հայուն ցաւեր նա չի զգար,
Ի՞նչ կը խաբուիք անդադար։

Մի՛ դուք ձեր յոյսը, մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերնիդ ցուցունէք անգութին,
Արգահատանս կը յուսայք, օգնութիւն,
Ձեզ կը ծաղրեն միրկութիւն։
Գիտեմ ձեր բեռը ծանր է, ծա՛նր, ով հայեր
Բայց կը կարծէ՞ք զայն վերցնեն օտարներ,
Թողէ՛ք զօտար, ուէք եղբայր եղբօր թե
Եւ զօրացէ՛ք անդերև։
Բաղդը պարձեր է ձեզի դէմ թշնամի,
Մի՛ վհատիք. ցուցուցէք սիրտ հայեցի.
Չէ՛ կարող բաղդը յաղթել ազգին այն քաջի,
Որ բաղդին դէմ կը կռուի։
Ձեր հայրերուն՝ ո՛չ շղթայք ո՛չ սուսերներ
Չը կարացին ընկճել ոչ միտք ոչ սրտեր
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ ակար, հէք,
Ի՞նչ, այն քաջաց որդիք չէ՞ք։
Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննման,
Որ հայրենեաց ճենճերեցան ի սեղան.
Չէ՞ք դուք որդիք այն մեծ հայոց որոց կեանք
Են մարդկութեան իսկ պարծանք։
Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ'ազգային,
Որոյ վերայ մեծ ազգեր իսկ նախանձին,
Ինչո՞ւ այսօր մնացած զանցեալ ձեր փառաց՝
Երանի տաք օտարաց։

Նար-բէյ

---

58 ՅՈՅՍ

Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թո՛ղ գայ
Ո՛րքան որ կուզէ՝ թող փչէ Հիւսիս,
Յուսով եմ վաղ-ուշ, գարունը պիտի գայ։
Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թո՛ղ փակէ,

Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ արև պիտի ծագէ։
Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալածանք,
Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն Հային տառապանք—
Միայն... չի հատնէր խղճուկի յոյսը։

Գամառ-Քաթիպա

---

59 ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ Հայրենիք զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայելէ՞
Հեռանալ Հայաստանէն։
Միթէ արծաթ, ոսկի գոհար
Կը սփոփէ՞ Հայաստանը
Այն որ կորբայ որդւոց համար՝
Խղճալի Հայաստանը։
Խոր տխրութեան մէջ է թաղեր
Թագուհի Հայաստանը,
Բոբիկ ոտքով, արձակ մազով
Կ'արտասուէ Հայաստանը։
Անգութ երկինք ալ չը յիշեր,
Մոռցեր է Հայաստանը,
Անսիրտ Հայերն ալ չեն յիշեր
Անուշիկ Հայաստանը։
Ո՞հ թողէք զիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,
Անուշ երկիր, կոյս անարատ,
Աննման Հայաստանը։
Արև ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը,
Հայոց արևն ալ մարեր է,
Սև հագեր Հայաստանը։

Թշուառ սրտիս ձայն կը կտրի,
Ողբալով Հայաստանը,
Ո՛հ, չի կայ Հայ որ սփոփէ
Նուաղեալ Հայաստանը։
Մինչև կտրի իմ վերջին շունչս,
Պիտի կանչեմ Հայաստանը,
Պըլլիմ մէյ մ' իմ հայրենեացս
Հայոց մտնեմ գերեզմանը։
Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին,
Կտրել այս ձայնս չէ, չէ կարող
Սոսկումն գերեզմանին։

Ա. Հայկունի

---

60 Է՛Յ ՋԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Է՛յ, ջա՜ն հայրենիք, ի՜նչքան սիրուն ես,
Սարերըդ կորած երկնի մովի մէջ,
Ջըրերըդ անո՜ւշ, հովերըդ անո՜ւշ,
Մենակ բալէքըդ արուն-ծովի մէջ։
Քու հողին մեռնեմ, անգի՜ն հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ,
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ։
Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ,
Բալէքիդ մատա՜ղ, մատա՜ղ քու սիրուն.
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,—
Էն էլ քու փառքի գովքը երգելուն,—
—Որ արտուտի պէս վե՜ր ու վե՜ր ճախրեմ
Նոր օրւայ ծէգին, աղի՜զ հայրենիք,
Ու անո՜ւշ երգեմ, բա՜րձր ու զի՜լ գովեմ
Կանաչ արևըդ, ազա՜տ հայրենիք...

Ա. Իսահակեան

---

61 ՍԻՐԵՑԷՔ ՄԻՄԵԱՆՑ

Ես տաճար մտայ... «սիրեցէք միմեանց»,
Լսվում էր բեմից քարոզ փրկչաւանդ,
Եւ սուսեր շարքեր բարեպաշտ մարդկանց,
Աղօթում էին այնտեղ ջերմեռանդ։
«Սիրեցէք միմեանց»... ո՜ վսեմ ուսմունք,
Որ միշտ կրկնւում ես միայն տաճարում,
Եւ միայն այնտեղ անչար զգացմունք,
Դուցէ զարթեցնում մարդկանց սրտերում...
Շա՜տ եմ փափագած, որ լսեմ ես քեզ,
Եւ կեանքում—հեռու տաճարի բեմից,
Բայց իզո՜ւր փափագ... Դու հալածուած ես
Ե՛ւ մարդկանց սրտից, և՛ կեանքի շեմից...

Ա. Ծատուրեան

---

62 ՀԱՊԱ ՔԱՋԱԶՈՒՆՔ

Հապա քաջազունք, Հայոց զաւակունք,
Առէք աղեղունք ի մահ՝ երագունք.
Անտառք սպասեն, կենդանիք սարսեն,
Ձինուցս ի ձայնէն կենդանիք սարսեն.
Շեշտակի նետեր
Թափեցէք, քաջեր,
Յրէս անվեհեր։
Վաղենք ուր վտանգ՝ այս մեր զբօսանք,
Որսոց արշաւանք՝ մարտից են կրթանք.
Երթանք գունդ ի գունդ՝ յաղեղ և մկունդ.
Յուսով սրտաթունդ՝ յաղեղ և մկունդ,
Տամբըրեմք զկենդանիս
Իբր զթշնամիս
Ի մեր հայրենիս։
Զի օր մ'ալ նոյնպէս մարտին ի հանդէս
Զարնենք մահազդեաց զոսոխս հայրենեաց,

Եւ յաղթանակաւ լցեալ աւարաւ,
Դառնամք քաջարշաւ լցեալ աւարաւ,
Եւ ի մեր դափնիք
Ծափ տան սիրելիք
Պանծայ Հայրենիք։

---

63 ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր,
Երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ փայլում էր,
Կաթնանման իւր լուսով։
Նա նայում էր, լուռ մնջիկ,
Իբրև մի կոյս դէպի Վան,
Նրա աչքին երևում էր,
Բիւր ցաւալի տեսարան։
Նա տեսնում էր անթիւ քրդեր,
Առած սուր, թուր, հրացան,
Կոտորում են... կողոպտում են...
Աւերում են անտէր Վան...
Եւ կարծես թէ երկնքից
Ասում էր այդ լուռ վկան.
Վրա՛յ հասիր, հայ ազգասէր,
Ձեռքից գնաց Հայաստան։

Ս. Սաֆարեան

---

64 ՏԵՍԷՔ ԱՂԱՒՆԻՆ

Տեսէք աղաւնին Նոյեան տապանին
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին
Աւետիս կուտայ Հայկեան սերնդին
Թէ եկաւ գարուն Թորգոմայ գարմին։
Արթնացէք Հայեր, քաջաց զաւակներ
Առէք միութեան տէգ ու նիզակներ

Շուտով կազմեցէք սիրոյ խմբակներ
Հագէք քաջութեան զէն ու զրահներ։
Այսչափ քնանալ մեզ հերիք է,
Թմրիլն ու պառկիլ խիստ մեծ չարիք է
Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու զինուորին համար պարտիք է։
Եկէք միանանք, բանանք դպրոցներ
Մեր մատաղ մանկաց համար վարժոցներ,
Վառենք, բորբոքենք սիրոյ հնոցներ,
Մեր սառած սրտին ըլլան հալոցներ։
Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր,
Լացին հայրենեաց դաշտեր ու սարեր,
Հերիք ալ ձեզի, հերիք է վատեր,
Հերի՛ք մեր բաժին արցունք ու ահեր։

---

65 Ի Մ   Ս Ո Խ Ա Կ Ի Ն

Սոխակ ինչո՞ւ դադրեցար քու անուշ երգն երգելից,
Որ քամում էր արտասուք շատ իմ էրված աչերից.
Միտդ է երբ ծագում էր արշալոյսը գարնանային,
Քանի՜ դու միտս բերիր իմ սաարկան ցանկալի...
Այն յիշատակն անուշ էր, ինչպէս երազ վաղանցիկ,
Որ գէթ վայրկեան թշուառին դարձնում էր նա երջանիկ.
Համակ աշխարհ մոռացած, ունկս քո ձէնին յառած,
Մտքով թռչում էի ես իմ հայրենին կարօտած...
Գիտեմ, դու էլ, ես կարօտ մշտադալարուն այն դրախտին,
Որից հեռու մեզ չկայ քաղցր ժպիտ մեր բաղդին,
Ո՞վ կուտայ ինձ թեւք թռչնի, որ խոյանամ սլանամ,
Օդն ու ամպերը ճեղքեն ու տանին ինձ Հայաստան.
Թէ նորա օդը շնչեմ, այն կենսատու սուրբ օդից—
Գիտեմ, փրկւելու եմ անբուժելի իմ ցաւից...
Գարունն անցաւ, ա՛խ սոխակ, խօսուն լեզւիդ կապ դրաւ,
Ու խեղճ վարդի թերթիկի հետ շարականդ էլ տարաւ,
Կ՚բանամ դուռը վանդակիդ, ազատութիւն քեզ կուտամ,

Բայց աղաչում եմ քեզի, թախը դէպի Հայաստան.
Վարդ ես ուզում՝ այնտեղ է, անամպ երկինք, մեղմ հովեր,
Ճաճանչափայլ արեգակ, կարկաչահոս առուներ։
Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին,
Մէգ, մառախուղ, հեղձուկ օդը հաշեց մաշեց իմ հոգին։
Փչեց հողմը Հիւսիսին, փոշին երկինք բարձրացուց,
Կարի վրայից ագռաւը խաչոտ ղաղան հնչեցուց.
Ահա Հիւսիսի սոխակն, ահա Հիւսիսի այեր...
Ի՞նչ էք կորցրել Հիւսիսումն, այ խելացնոր խեղճ Հայեր...
Ա՜խ, ես առել եմ նորա կեանքն ու վայելքը պատիր,
Տուէք օդը իմ երկրին, զալար դաշտն ու վարդ կարմիր։

Գամառ-Քաթիպա

---

66 Ե Ր Բ Ո Ր Լ Ի Ն Ի

Երբոր լինի գարնանամուտ նոր գարուն,
Կը բազմանան վտակներդ, հայրենի՛ք,
Շարիշար ցնծութեամբ երգով զուարթուն,
Շարժըվում են բանակներդ, հայրենի՛ք։
Օդըդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,
Պէս պէս գունով ծաղիկներդ գալարուն.
Չեն դադարիր աշխատելուց օրն ի բուն—
Քոյ հարազատ մշակներդ, հայրենի՛ք։
Մարդիք կուգան քոյ սարերդ ման գալու,
Իբր որսորդ եղնիկներդ որսալու,
Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարդալու—
Քոյ սգազգեաց սոխակներդ, հայրենի՛ք։
Դու դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ,
Քոյ միջից անմահութեան հոտ կուգայ,
Հազար ափսոս, մարդուց թափուր են հիմայ—
Խիստ բազմամարդ վիճակներդ, հայրենի՛ք։

Ջիւանի

---

67 ԵՐԳ ՄԱՐՏԻ

Մնացիս բարեաւ սէր իմ, սէր,
Հրաւէր մարտին որոտաց,
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զկայ բաժին ինձ փառաց։
Մի լար, հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ, ո՛հ մի՛ լար,
Թ՚անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մենք զիրար։
Եղբայրադաւ չէ նախանձ
Որ բորբոքեալ յիս վառի,
Ի սուրբ հողոյ Հայրենեաց
Բառնամ զլուծ օտարի։

---

68 ՂԱՐԻՊ ՄՇԵՑԻ

Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,
Ձեզ շատ բարև բերեր եմ հայի գեղերէն.
Ախպէրքս ինձ ղրկեցին դիպի էս կուման.—
(Մի վախնաք, չուզեմ ձեր մանէթն ու թուման)
Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր.
Խղճացէք Հայ ազգիս, տուէք մէկ մէկ թուր։
Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշէ,
Օսմանլին ու քիւրդը կեանքներս կմաշէ.
Օր կ՚լլայ՝ գերեվար կ՚անէ մեր աղոց,
Օր կ՚լլայ արտերս ձգէ կրակ ու բոց.
Թէ չօգնէք՝ մենք ալ շուտ կ՚լլանք ցիր ու ցան.
Խղճացէք Հայ ազգիս, տուէք մեզ հրացան։
Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կոյանք,
Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք,
Խաչը ոտքով փշրեցին, տեղը դրին լուսնակ.
Խեղճ Հայն օրնիբուն ծաղր է ու ծանակ.
Ո՞վ ախպարք, բերեր եմ ձեզ այսպէս սև բօթ—
Չուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ։

Այսքան շատ տանջանքին ինչպէս դիմանանք,
Մինչև երբ ձեր դիմաց անօգ պիտ' մնանք.
Մեր ազգը տէր չունի Սլավօնի նման,
Բարի՛ դուք ըլլայիք մեզի օգնական,
Հոգիներս տրորած է, ջաներս ցաւոտ,
Զուգենք մենք ձեր փարան, տուէք թնդանօթ։
Շատ տառապանք քաշեցինք դուշմանի զէնքէն,
Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,
Առանց ատոր աշխարհքը մեր չէր բազմամարդ,
Հիմի փուշ կ'բսնի, ուր առաջ էր վարդ.
Բայց մենք ձեր սնդուկի փողին կարօտ չենք,—
Հայ ախպարք, շնորհեցէք դուք մեզ մէկ մէկ զէնք

Գամառ-Քաթիպա

---

69 ԿԱԼԱՆԱՒՈՐԸ

Ա՜խ, բաց արէք իմ մութ բանտի
Փակ դռները—տուէք լոյս.
Տուէք ինձ մի սևաբաշ ձի,
Եւ սևաչեայ մատաղ կոյս։
Մատաղ կուսին ջերմ գրկելով,
Առաջ մի լաւ կը պաչեմ,
Ապա դէպ դաշտ՝ ձի նստելով,
Ես քամու պէս կը թռչեմ։
Բայց ա՜խ բարձր է իմ պատուհան,
Բանտիս դռան պինդ փականք,
Եւ հեռու է կոյս սևաչեան
Քաշուած իւր ճոխ ապարանք։
Եւ բարի ձին կանանչ դաշտում
Մենակ անսանձ արածում,
Ե՛ւ ուրախ է, և՛ թռչկոտում,
Եւ պոչն օդում խաղացնում։
Մենակ ես եմ—տխուր դարդոտ,
Իմ չորս բոլոր—մերկ պատեր.

Լոկ կանթեղն է շուրջս աղօտ
Սփռում մարող, թոյլ շողեր։
Եւ լսում եմ, լսում միայն,
Գիշերային լուռ ժամում
Լուռ պահնորդի քայլերի ձայն
Բանտիս դռան յետևում։

Ա. Ծատուրեան

---

69 ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՐԸ

Դուն խելօք հաշւով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք կասեն շատ ունես.
Բայց թէ փողէդ շահ չունի հայաստան,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան։
Քաջ ես լսել ենք, ինքդ մեծաւոր.
Անուն յաղթողի ունիս փառաւոր,
Բայց թէ թրէդ շահ չունի հայաստան,
Թքել ենք քու ալ, թրիդ ալ վրան։
Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փռւած է.
Բայց թէ գրչէդ շահ չունի հայաստան,
Թքել ենք քու ալ, գրչիդ ալ վրան։
Հեռատես մտքով դուն զարդարեցար,
Հզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մտքէդ շահ չունի հայաստան,
Թքել ենք քու ալ, մտքիդ ալ վրան։
Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանկագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի հայաստան,
Թքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրան։
Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու հանճար,
Բայց թէ լեզուէդ շահ չունի հայաստան,
Թքել ենք քու ալ, լեզուիդ ալ վրան։

Կուտամ քեզ պատիւ, կունենաս դու յարգ.
Ու կըդնեմ քեզ ազնիւ մարդոց կարգ,
Երբոր օրօրանէդ մինչի գերեզման
Միակ ձգտումնքդ լինի հայաստան։

Գամառ-Քաթիպա

70 ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.
Մանկական լեզուիս թոթովանք ակար
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար։
Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցր հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից։
Հնչի՛ր դու, հնչի՛ր այժմ և յաւիտեան,
Մայրենի՛ լեզու, բարբա՛ռ սիրական
Արի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց.
Դու իմ հայ լեզու մոռացած վաղուց.
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։
Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այո, միւս այլ ձև ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր.
Իմ երանական մտածութիւնքը—
Ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը։

Ստ. Նազարեան

71 ՄԵՂԱ ՔԵԶ ԱՍՏՒԱԾ

Կուշտ եմ և առողջ, կեանքից բաւական,
Սեղանս առատ ճաշ պատուական,
Բայց թէ ի՞նչպէս եմ այդ կեանքին հասած—
Այդ մի՛ հարցնէք... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...
Շատ կարճ միջոցում ես հարուստ դառայ,
Հողեր կալուածքներ կառք ու ձի առայ,
Բայց թէ ի՞նչ փողով, ի՞նչպէս վաստակած—
Այդ մեր մէջը մնայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...
Տներ շինեցի, շքեղ փառաւոր,
Ապրում եմ մէջը, ինչպէս թագաւոր,
Բայց քանի՞ մարդու ես տուն եմ քանդած—
Այդ մի՛ հարցնէք... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...
Խանութ բաց արի, գործ սկսեցի,
Կարճ ժամանակում մեծ գանձ դիզեցի,
Բայց քանի՞ անգամ ես կոտր եմ ընկած—
Այդ մեր մէջ մնայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...
Կեանքումս ես գտայ մի «ազնիւ ընկեր»,
Գործիս մէջ դրեց տասնեակ հազարներ.
Բայց վե՞րջը... վերջը նա քաղցած մնաց,
Իսկ ես կշտացայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...
Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.
«Աղքատն էլ մարդ է ուտել է ուզում».
Բայց քանի՞ մարդ եմ ես աղքատ թողած—
Այդ մի՛ հարցնէք... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...
Երբ տեղն է գալիս՝ սուրբ եմ ձևանում,
Ժամում ծնկաչոք աղօթք եմ անում.
Բայց հոգիս վաղուց սատանին ծախած՝
Աշխարհք եմ խաբում... Մեղա՛յ քեզ Ա՛ստուած...
Թէ մէկը պատիս դիպչի աչկարայ,
Ես կրակ կը թափեմ այդ մարդու վերայ.
Բայց ծածուկ ի՞նչքան ես թուք եմ կերած—
Այդ մեր մէջ մնայ... Մեղա՛յ քեզ Ա՛ստուած...

Ի՜նչ, բաւական է գլուխներդ տանեմ,
Ախր «զորն ասեմ, զորն խոստովանեմ»...
Ոտով ու գլխով մեղքի մէջ թաղուած
Ես մի հրէշ եմ... Մեղա՜յ քեզ, Ա՛ստուած...

Ա. Ծատուրեան

72 ԱՌ ԱԶԳՍ

Ազգ իմ որքան նկուն մնաս,
Սիրտս քեզնից չի զատուի,
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզնից չի զատուի:
Քեզ չեմ մոռնայ յաւիտեան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ դրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզնից չի զատուի:
Քեզնով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի իմ անուշիկ,
Ծոցիդ մէջը հանգչիմ մայրիկ,
Սիրտս քեզնից չի զատուի:
Ջիւանին եմ, քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնդկաստանին է, տէր դառնամ,
Սիրտս քեզնից չի զատուի:

73 ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ

Հազիւ լրացաւ քսան մէկ տարիս,
Աղւամազ բուսաւ երես ծնօտիս,
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի,
Ջիլերս ամուր՝ ասես երկաթի,
Տուէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ականներով երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէք ինչ անեմ:

Առջես դրէք մարդ հարիւր ու հազար —
Ջարդեմ տրորեմ զերդ բողկ ու գազար.
Ինչ այլք շաբթու մէջ՝ այն ես օր կանեմ.
Մէջս այդքան ոյժ, ասէք ինչ անեմ:
Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
— Նրա Սուրբ հողին ըլեմ ես ղուրբան —
Մարմինը ուժեղ ու առոյգ է Հային,
Այլ, ափսոս, թմրած է նորա հոգին:
Թէ մի օր զարթնի նորա վեհ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ Օսմանլի ազգին,
Ո՛վ էր երկուսէն առաւել և կամ տէր.
Ա՜խ, Երբ պիտ՝ թնդաք, խեղճ Հայի սրտեր:

Գամառ-Քաթիպա

74 Ա՜Յ ՍԵՒ ԱՄՊԵՐ

Ա՜յ սև ամպեր, վա՜յ սև ամպեր,
Սիրտս պատեց սև ու մութ...
Եարաբ ինչ էք դուք ինձ բերում —
Գարնան անձրև՛, թէ կարկուտ...
Յուսով-լուսով պտի եմ ցանել,
Արևուն թափել ու քրտինք,
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,
Աղօթք արել... որ երկինք՝
Արտիս նայի, տունս խնայի,
Կեա՛նք տայ, օ՛ր տայ իմ հացին.
Վա՜յ բալէքիս... Աստուա՛ծ չ՛անի,
Թէ որ անհաց մնացին...
Ա՜յ սև ամպեր, ի՞նչ էք գոռում.
Սիրտս պատեց սև ու մութ...
Եարաբ ինչ էք արտիս բերում —
Գարնան անձրև՛ թէ՞ կարկուտ...

Ա. Ծատուրեան

75 ԱՀԱ ՔԵԶ ՁԵՌՍ

Ահա քեզ ձեռս, ընկեր թանկագին,
Սեղմիր դու նորան անվախ անկասկած —
Բարեկամ է նա լքեալ թշուառին,
Փորձութեան բովում կոշտերով ծածկուած։
Թող ծանր վշտից անցած օրերի
Հանգչի քո սիրտը գոնէ մի վայրկեան —
Առ՛ իմ գիրկը, ընկեր սիրելի,
Ես ջերմ կուրծքիս օրօրեմ նորան։
Եւ ցաւակցութեան այրող արցունքով
Տանջանքերդ այդ կուռ շղթան կրծանեմ,
Գուցէ և սիրոյ դիւթական շողով
Մի բոպէ ես քեզ հանգիստ պարգևեմ...

Յ. Յովհաննիսեան

---

76 ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳԸ

Տէր՝ կեցո՛ դու զՀայս,
Եւ արա՛ զնոսա պայծառ
Կեցո՛ զՀայս.
Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նովիմբ մարթասցին
Ապրել յաստիս։
Ո՜վ Տէր մեր. Տէր փութա՛,
Զազգ մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց.
Կափո՛ զոչս նոցուն,
Հա՛տ զարմատոյն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հզօր։
Ի քո իջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա՛,

Զերկարութիւն կենաց
Հօր մեր Աստուածազգեաց
Շնորհեա՛ պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։

Թաղիանոսեան

77 ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ առնունք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինի,
Մեզ լինի անուշ համով։
Բերներուս տանենք անվախ,
Չէ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է և ոչ գինի.
Խմենք՝ մեզ անոյշ լինի։
Արաքսայ ջրով ցօղած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Փնքուշ ձեռներով քամել։
Այս բերքն է հայոց երկրին,
Հայաստան տնկած Նոյէն,
Անմահ երկրային գինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն։
Այս անոյշ գինին խմողը,
Սրտէն թող հանէ ոխը,
Ամենքս էլ ասենք «ամէն».
Որ շատ տայ մեզի ամ էն։

Գամառ-Քաթիպա

---

78 ԿԵՆԱՑ ԲԱԺԱԿ

Եղբա՛րք, մի շուրջ ժողովեցէք,
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակներդ դարդկեցէք
Մեր Հայ ազգի կենացը։

Հայոց երիտասարդներուն,
Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկումն էլ սուրբ է մեզ—
Այս բաժակը նւիրենք։
Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն հայ մարդու կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն.—
Այս բաժակը դարդկենք։
Արանց, որ մեր սիրտը գրաւում են,
Մեզ զգօն համբով վարում են.
Որոց կեանքը մեզ օրինակ,—
Մի երրեակ «կեցցէ» ասենք։
Եղբարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է,—
Այս բաժակը նւիրենք։
Եղբարց, որք դարդից ազատ են.
Մահւան հանդիստ վայելում են,
«Ողորմի հոգուն» ասելով՝
Այս բաժակը նւիրենք։
Բայց որ դեռ գինին փայլում է,
Ու մեզ իրան մօտ կանչում է,
Բաժակներդ դարդակեցէք
Ազատութեան կենացը։

Պատկանեան

---

79 ԱՐԲՈՂԻ ԿՏԱԿԸ

Ընկերք մաշւելով պօտագրայից.
Շուտ կը հեռանամ ես ձեզանից.
Կարճ միջոցով լինելով մեռած,
Չէք տեսնիլ ինձ այսպէս արբած։
Այն գինետան մէջ ինձ թաղեցէք.
Ուր ամենից շատ արբում էի,

Այնտեղ գերեզման պատրաստեցէք,
Ուր տակառի տակ ես պառկէի։
Ոտներս դէպի պատն արէք,
Իսկ գլուխս դէպի ծորակը.
Որ երկու ձեռքով բռնէի ես,
Գինով լիք մեծ բաժակը։
Ինձ հին տկի մէջ պատանի տեղ,
Լաւ փաթաթեցէք, կուպր քսեցէք
Եւ որպէս մեղքիս թողութեան գեղ,
Կէս թունկի գինի բերանս ածէք։
Անծէս թաղեցէք, չ'ածէք զանգակ,
Ի սէր Աստուծոյ, թաղմանս ժամանակ,
Բաժակներ շրխկացրէք դորա փոխանակ,
Գինով թրջեցէք արբողիս դիակ։
Դամբանական դուք չ'գրէք տառ,
Որքան ապրելս, վարքիս համար.
Միայն ասել հինգ բառ մեծատառ.
«Սա էր արբեցող սատանի թշւառ»։
Բայց դեռ քանի որ չեմ մեռել,
Բերէք խմեմ կէս թունկի գինի.
Հոգեհանս գինու ռումբի կարծելով՝
Գուցէ ձեռք չ'տայ, երբ արբած տեսնի։

---

80 ՄԱՅՐՆ ԱՆԻԾԵՑ

Մայրն անիծեց իր զաւակին. «Ի՛մ որդի,
դու պանդխտանաս.
Օտար երկրում հէք պանդխտի խոր վշտե-
րով դու վշտանաս.
Զոր քարը քեզ սնարք անես, թաց աւազին
պառկես տրտում,
Արև չեկած քունդ կտրես, յոյժ մեռնի՛
քո սև սրտում»։

Եւ կատարեց մօր անէծքը։ Մօտենում
էր հրաժեշտն արագ.
Յիշում էր միշտ մայլ ապագան որդին վը-
հատ և անճարակ.
«Աստուած գիտէ անյայտ ճանբան—ո՞ւր
կիջեցնէ, ո՞ւր է տանում,
Ո՞վ կը կապէ խաչ իմ կրծքին, հող թափէ
իմ գերեզմանում»...
«Կերթամ վաղուց կրկնում էր նա—չէր
հաւատում մայր թշուառ,
Բայց երբ «մնաս բարով» ասաց, մայրը
յանկարծ մնաց շւար.
Աստանդակին երբ ոտ դրեց, զարհուրած
մօր կապւեց լեզուն,
Կարողացաւ միայն ասել. «Գնաս բարով,
իմ սիրասուն.
Այն ճանապայով, ուր ոտ դնես, վարդ ու
մեխակ դէմդ բուսնեն.
Այն քաղաքը, ուր դու մտնես, Գրողի ձայ-
ներ թող չը հասնեն.
Ինչ խնջոյքին ներկայ լինես, գինով լեղան
դաւաթ գաւեր.
Ծովերը քեզ գինի դառնան, խորտիկներով
լցւին նաւերն»...
Իսկ կուչ եկած մղկտում էր մատաղա-
հաս կինը ծածուկ։
Աղբիւրի պէս արցունք թափում և աղօ-
թում էր կամացուկ.
«Քեզ եմ կանչում երկրից երկինք, ո՜վ Արա-
րիչ, լսի՜ր իմ ուխտ.
Եարիս կրակը այրում է ինձ, պահիր ամեն
անտէր պանդուխտ,
Տուտով դարձրու խնդակիցս—միակ ճարն
իմ սրտի խոցին.

Թուշս դնեմ նրա թշին հոգիս փչեմ նրա
ծոցին»...
Նայեց պանդուխտն իր սիրածին, կանչեց
այսպէս. «ինձ նայեցէք.
Ես թողնում եմ իմ եարն աւանդ, վարդերի
մէջ փայփայեցէք.
Եթէ դառնամ, տիրոջ հասցրէք աւանդն ան-
խախտ իմ կաթողին,
Իսկ թէ մեռնեմ, աւանդս ձեզ, ողորմի ուէք
տիրոջ հոգին»...
Ն. Բուզակ

81 ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑՈՒՆ

Թո՜ղ ախպէր թո՜ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի,
Թող իմ աչք կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էլնի,
Չէ տուն էլ արտասունք ունես, արի ծիկ հետ ու լաց արա,
Էր արտասունք թող ամպ կտրի, հայոց դաշտերն
անձրև էլնի։
Ողեր ենք ծէթկիկ ձագերս խեղճ ու կրակ վէր պաղ
թոռվան
Խ ախպէր ինոնց արև ինոյ օրեր մենք ենք տեսեր,
Ողեր ենք մեր կողակիցք վզիկ ծռած կէլւե պերան,
Ողակիցք որ չում մահւան հետն ապրելիւ ուխտ ենք արեր
Ո՜ղ ախպէր թո՜ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի
Ող իմ աչք կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էլնի։
Եկեր ենք շատ սար ձոր, արուն գետերն էլ ընցել ենք,
Մարդ է, թէ հրեշտակ է, քար է թէ հաւք զարմացեր ենք,
Ի մեր աղերք կանչելով ճանպախ զըմէն լացուցել ենք,
Երիկ ենք էս երկրի մէջ, ուր որ անբան հետաբեր ենք,
Ող ախպեր թո՜ղ որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի,
Ող իմ աչք կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էլնի։
Եգի ինչի՞ համար գինի, երբ մեր աչք սև խաց չունենք,
Ղ ի՞նչ պէտքէ օտարին զարդ, երբ մեր ընկեր պէտ-
պիկ էլնի

Է՞ր էրթանք տեսնել էն փառք, որ մեր ճակտի քրտին
էնի
Օտարին տուն մեզ ի՞նչ շահ, երբ մեր տուն փուտ կ
րան չուն
Թո՛ղ ախպէր թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էն
Թո՛ղ իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էն
Էնկաղար ենք խռնարհեր, որ հմէն մարդ մի պեռ կդն
Էս մարդ է, թէ անասուն, խելի հարց փորձ արող չըկ
Մէկ քրտինք մէկ փարի կուտանք, շատ տիր առնող չըկ
Փոսի մէջ ինկած զարիպ, մեր ձեռք բռնող հանող չըկ
Թո՛ղ ախպէր թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էն
Թո՛ղ իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էն
Էս էրկնուց խաւքերը տես, ինչպէս կերթան ճլվլա
Որ ձեռդն ի առեր թեւին, որ կուտ կտանի ուր ձեագեր
Մենք մարդ ենք, խայու աղայ կեանք կնցուցենք ա
ու զար
Կեանք չունենք մահէ կվախնանք մեր գերեզման կը
լցէի փշո
Թո՛ղ ախպէր թո՛ղ որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էն
Թո՛ղ իմ աչք կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էնի
Թէ հովեր իրար զարնեն տեղ մը չունինք պախկե
Թէ ամպեր կարկուտ թափեն, տուն մը չունինք սթարե
Թէ երկինք ճէր էլ էնի, խելք էլ չունենք վատկե
Ա՛հ էս ինչ խորոտ օր է, կասենք, փարէք կուտանք գին
Թո՛ղ ախպէր թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էն
Թո՛ղ իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր էն
Ջորս դեհէն ծովերն առեր, մենք չո՛ր կղզի մը մնացեր են
Ես կասեմ կեամի շինենք, տիւ գինով ես աւալ թաւ
Որ մէկն էլ թէ ես շինեմ կուկեայ կտրի յիմարար
Օրէ օր ծով կ'անցնէնայ շատեր խեղդեց եաման մէկ ճ
Թո՛ղ ախպէր թո՛ղ ո՛ր իմ սիրտ կրակ ու բոց վառուած է
Թո՛ղ իմ աչքը կլկլացող պղտոր-պղտոր ախպիւր է
Արե՛ ջա՛ն ախպէր, արի սիրտդ մանէ՛ր քեարի հ
Թէ կսիրես քեզ Քրիստոս, քեզ պապերու սուրբ գերեզ

Ու հմէն զարիպ կուրպաթ խայու տղէք խաւսարական
Էկէք առնք մեր քրտինք, մեր ցաւ ու դարտ կալմի պէրան
Հէսապենք վա՜յ մեզ առենք մեր սիրտք փլրեն աչք կլկլան
Մեր արտասունք ամպ թո՛ղ դառնայ Հայոց դաշտի վէրէն
խաղայ։

Տ. Ամիրճանեան

82 ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ

Հովերն առան սա՛ր ու զա՛րիր,
Ամպերն ելան,—մութն ընկաւ.
– Անգի՛ն մէրի՛կ, հերիք յուսաս,
Քու շուշզողուն աստղն ընկաւ։
Լա՛ց, մէրի՛կ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքը սրտիս տուն չեմ գայ...
Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
Սև ու պղտոր երկնքէն.
Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում
Իմ անգիւման, սև սրտէն.
Լա՛ց, մէրի՛կ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքս խորն է, ճար չը կայ...
Անգութ կեանքում վէրք ստացայ
Սքտանից սիրած ընկերէս.
Անխիղճ կեանքում վէրք ստացայ
Անո՜ւշ սիրած քուրիկէս...
Լա՛ց, մէրի՛կ ջան, որ էլ չեմ գայ
Ազիզ բալէդ էլ չը կա՛յ...

Աւ. Իսահակեան

83 ՕՏԱՐ ԵՐԿԻՐ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու հայրենիք քեզ յիշելով կարտասուեմ։
Չկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ։

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թւին.
Բնակարանս տխուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց։
Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն.
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս,
Նա օտար չէ, Նա իմս է, սիրէ զիս։

84 ՏԱՐԱԳԻՐՆ

Ընդ աստեղօք օտար ափանց
Տարագրելոյս չիք բերկրանք,
Լքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց,
Դու ես միայն սփոփանք։
Օտար աստղեր լոյս չունին.
Օտար երկինք ինձ մթին։
Օտար բոյսեր դառն ու անհամ։
Ջրեր պղտոր ու լեղի,
Դաշտք, անապատք, հովիտք, արտեր
Ու պարտէզներն անբերրի։
Օտար ծառեր շուք չունին
Օտար ծաղիկք հոտ չունին։
Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր այդ պայման ինձ համար,
Ձիւն ձմեռ են իւր գարուններ,
Չունի երբէք ինձ ամառ։
Օտար երկինք ամպոտ են
Օտար սրտեր անգութ են։
Օտար թէև շնչեմ ես օդ,
Յաւօք սահին իմ օրեր,
Քեզ, Հայաստան սիրակարօտ,
Սիրտս համայն քեզ նուէր։
Օտարութիւն, դու փուշ ես,
Այլ Հայրենիք, դու վարդ ես։

85 ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենիքէս հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ—տուն չունիմ,
Ազիզ մօրէս բաժանուել եմ,
Տխուր-տրտում—քուն չունիմ։
Սարէն կուգաք, նաշխուն հաւքեր,
Ա՜խ իմ մօրս տեսեր չէ՞ք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
Ախըր, բարև բերեր չէ՞ք։
Հաւք ու հովեր եկան կըշտիս,
Անձէն դիպան ու անցա՜ն.
Պապակ—սրտիս, փափագ—սրտիս
Անխօս դիպան ու անցան։
Ա՜խ, քո տեսքին, անուշ լեզուին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան,
Երնէկ, երնէկ, երազ լինիմ,
Թռնեմ մօտդ, մայրիկ ջան.
Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կըպնիմ վառ—կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...

Աւ. Իսահակեան

86 ՔՈՅՐԵՐԻՍ ՄԷՋ

Քոյրերիս մէջ ես սգազգեաց
Ինձ նման տխուր չկայ,
Դժոխքումն էլ իմ ունեցած
Կրակի պէս հուր չկայ։
Ծարաւ պապակ այրւում եմ,
Ո՜հ, մի կաթիլ ջուր չկայ,
Սպասում եմ այցելութեան,
Ոչ մի տեղից լուր չկայ։
Իմ տարիքս անցնում են շուտ,
Գլորւում են հանապազ,

Ա՜խ իմ յոյսս իմ փափագս,
Համարում են ինձ երազ։
Որտեղ ձայն ու շշուկ լսեմ,
Կը վազեմ այնտեղ վռազ,
Սպասում եմ այցելութեան,
Ոչ մի տեղից լուր չկայ։
Քո խղճալի հարսն եմ ո՜հ,
Ինձի օգնէ քաջ հիւսիս,
Քեզ եմ տեսել իմ Ախուրեան,
Իմ անառիկ մեծ Մասիս։
Երբ կ'լսեմ աւետեաց ձայն,
Ուրախութեան աւետիս,
Սպասում եմ այցելութեան
Ոչ մի տեղից լուր չկայ։

Ջիւան

---

87 ՄՈՒԹԸ ԳՐԿԱԾ

Մութը գրկած գետ ու գետին,
Հով ու ալիք կը ծփան.
Երկինք գրկած աստղ ու լուսին,
Լուռ կը ննջէ Ախուրեան։
—Սիրտս, սիրտս, թոյլ կը զարկէ,
Սէր ու երգեր էլ չը կան.
Նոր էր ծլեր,—արև սիրեց,
Արև-աչեր էլ չը կան։
Վառ աստղերը երկնուց ընկան,
Վարդ ու շուշան թառամեց.
Ա՜խ, իմ կեանքս, անո՜ւշ կեանքս
Կտոր-կտոր փշրուեց...
Հովն ու ալիք կուգան-կերթան
Ցաւած սիրտս կը շոյեն.
Ու իմ սիրուս մրմունջներէն
Տխուր երգեր կը հիւսեն...

Աւ. Իսահակեան

ՕՐՕՐՆԵՐ

---

88 ՕՐՕՐ

Անուշ քնակն աչերն առեր,
Անուշ հովերն էլ տարուբեր,
Իմ տատրակիս քունն է եկեր,
Անուշ երգով ասեմ օր օր։
—Ես քուն չունիմ, անգութ մայրիկ,
Հերիք աչքս, կապես, հերիք,
Մէկ պահիկէն կանեմ պաճիկ,
Ինձ արձակիր մ'ասեր օրօր։
Մինչև չի լան, մատաղ մանկիկ,
Ծիծ չեն տար նրան, գառնիկ.
Դու չը լացած, իմ մի հատիկ,
Ես ծիծ կ'տամ, կասեմ օրօր։
—Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կը ճվճվամ, դու չես լսեր.
Անուշ ձայնիդ ես զմայլեր,
Ես լալիս եմ, կասես օրօր,
Արցունքներդ մարգարտի պէս
Երեսիցդ ցած ի՞նչի կը թափես.
Մի՛ լար, ձագուկ, մի՛ լար մեղք ես,
Ո՞ւմ կուզես, նա քեզ ասի օրօր։
—Գիրկդ ինձի հանգստարան,
Ծծերդ բերնիս անուշ ծորան,
Իրիկւան դէմ պառկեմ օրան,
Աչքս փակիր՝ ասա օրօր։
Քնացնեմ իմ աղաւնիս,
Մեծացնեմ սիրով սրտիս,
Կարմիր վարդի նման բացւիս,
Շուքիդ նստեմ, ասեմ օրօր։
—Մի՛ քիչ թուլցո՛ւր թևերս ոտքերս,
Է՛լ թմրեցաւ փափուկ մսերս,

Անուշ մրափն առաւ աչքերս,
Յետոյ կապէր, ասա օրօր։
Էդ սուտերովդ չեմ խաբուի ես,
Կուզես որ ինձ նստացնես,
Ձը քնանաս ծիծս ուտես
Դատարկ տեղից ասեմ օրօր։
—Քիչ մը ճոր ճոր, քիչ մը ճար ճալա,
Քիչ մը տան տան, քիչ էլ պապուր,
Քիչ էլ պապան առ հոպպա տա՛ր,
Քիչ էլ մէն մէն, յետոյ օրօր։
Էդ քու լեզուդ կուտեմ հիմայ,
Քո արշինովդ կտաւ չկայ,
Տան տան, մէն մէն՝ էլ հաքարայ,
Աչերդ պահ պահ, ասեմ օրօր։
—Սիրտդ քար է, էլ իմացայ,
Լացի լացի՝ շահ չունեցայ,
Այժմ քնեմ, էլ ճար չկայ,
Երկա՛ր, երկա՛ր, ասա օրօր։

Գամառ-Քաթիպա

89 ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՔԵԶ

Ուրախութիւն քեզ անպակաս
Ո՛վ դու, մանուկ սիրելի,
Ծլիս, ծաղկես և զօրանաս,
Տալով պտուղ արժանի։
Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,
Եւ շնորհադեղ, որպէս օր,
Մանուկ, մանուկ ինձ չխաբես,
Միշտ կաց այդպէս լուսաւոր։
Նայիր վերև տես, ինչ սիրուն,
Այնտեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր։

Այնտեղ հոգեակ բնակւում է
Մեր սուրբ հայրը երկնքի։
Նա է, որ մեզ ուղարկում է,
Եւ կեանք և սէր և հոգի։

90 ՔՈՒՆ ԵՂԻՐ ՊԱԼԱՍ

Քուն եղիր պալաս, աչերդ խուփ արա,
Նաշխուն աչքերուդ քուն թող գայ վրայ,
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի։
Իմ անուշիկիս քունը կը տանի։
Ոսկի խաչ վզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապել է ծարէն տէր պապան։
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, և այլն։
Մալի հուլունններ կախել եմ ես ալ,
Նազար չես առնալ, քուն եղիր, մի լալ։
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի և այլն։
Այս քանի մօրդ, անքուն աչքերով
Անցրել է օրեր օրօցքիդ քովը.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի և այլն։
Օրոցքդ օրրեմ, օրով բոյ քաշես,
Մըկտան ձայնով սիրտս չը մաշես.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, և այլն։
Դուն ալ քուն եղիր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր, բալիկիս քուն տուր.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, և այլն։

Գամառ-Քաթիպա

91 ԲԻՒԼԲԻՒԼՆ ԶԱՐԹՆԵԼ Է

Բիւլբիւլն զարթնել է վարդին ծոցումն,
Դէ, ննջիր սիրելիս, ասում եմ լա՛յ լա՛յ,
Դու զառնիշան նախշած օրօրոցումն,
Դէ, ննջիր մարալս, ասում եմ լա՛յ լա՛յ։

Եօրղանչէդ ալխարայ, բաւէթով զարդարած,
Դօշակդ զանաւուզ բանդաւում կարած,
Բարձդ դեղին ատլազ, ղոյից լցրած.
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լա՛յ լա՛յ։
Իստակ գիւլաբաթու կապանքիդ քողն,
Տասն ու չորս տարեկան է նորա գործողն,
Մանր ալմաստներով ականջիդ օղն.
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լա՛յ լա՛յ։
Հարիւր մառաղ մորթամ, մինչի քեզի ճարեցիմ,
Թառակիդ զանազան ոսկիք կարեցիմ,
Ինչքան ինձի նեղացրար՝ անէծք չարեցիմ,
Դէ, ննջիր, մարա՛լս, ասում եմ լա՛յ լա՛յ։
Տէրն քեզ պարգեւի հարիւր տարի կեանք
Անուանդ զարդարեն այլքն գովասանք.
Խելօք որդի ելնես ծնողացդ պարծանք,
Դէ, ննջիր, հոգեա՛կս, ասում եմ լա՛յ լա՛յ։
Մայիֆի Սերովբէն քեզի կնքաւոր,
Պսակդ տեսնալին էլած ուխտաւոր,
Աստուած քեզ նորա հետ պահի բաղդաւոր,
Դէ, ննջիր, մարա՛լս, ասում եմ լա՛յ լա՛յ։
Ձեռքիդ խաղալիքն է կենացս թելն,
Մին օր առանց քեզի տանի ինձ սելն,
Զարկեարի միայնակ Ռափայէլն,
Դէ, ննջիր, սիրելիս, ասում եմ լա՛յ լա՛յ։

92 ԱՐԻ ԻՄ ՍՈԽԱԿ

Արի իմ սոխա՛կ, թո՛ղ պարտէզ մէջին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին,
Բայց նա լալիս է, դու սոխակ մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։
Ե՛կ արեգաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ տղիս, քնի է կարօտ,

Բայց նա լալիս է, դու, ձագուկ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ արեգայ դառնալ։
Թող դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վույվույով տղիս բեր անուշ քունը,
Բայց նա լալիս է, տատրակիկ մի գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ։
Կաչաղակ ճարպիկ, դող արծաթասէր,
Շահի գլուցով որդուս քունը բեր,
Բայց նա լալիս է, կաչաղակ մի գալ,
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ։
Թող որսդ, արի, քաջասիրտ բազէ,
Բու երգը գուցէ իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

Գամառ-Քաթիպա

92 ՊԱՆԴԽՏՈՂԻ ՄՈՐ ՕՐՕՐ

Սև սարեկէ մը ղուլալ ղուչալ կը խաղան,
Խաղան թափեն արծաթակող աւազան,
Աւազանէն վեր զոյգ վարդի փունջերուն,
Փունջերը ցօղեն վեր մարմարէ քարերուն։
Օրօր որդեակ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ՚տեսնէր էդպէս քուն։
Արև մօտ է ոսկէ թլեր ժողվելու,
Շուտով դառնայ սև-սև սուգեր հանելու,
Ա՞հ, իմ արև էլ չեմ գիտեր երբ կուգայ,
Թէ գայ, կեանքիս, թէ սև հողիս լոյս կուտայ։
Օրօր որդեա՛կ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ՚տեսնէր էդպէս քուն։
Աստուա՛ծ, ինչի՞ մօրը ծովով գութ տուիր,
Կ՚ասեմ՝ թեւիկ ինոր վերէն չը դրիր,
Որ ղարիպին կարօտամաշ չը մնէր,
Որ թէ մեռնէր աչքին խեղճ խեղճ չը հայէր։

Օրօր որդեակ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն։
Աստուած, ինչի՞ սիրտս գեհեն վառեցիր,
Ու դու սարի աղբիւրի պէս մնացիր.
Ա՜հ, ես մեղայ, ներէ՛, մարդ եմ, տկար եմ,
Կին եմ, մայր եմ, որդիս ողջ-ողջ կը թաղեմ։
Օրօր որդեակ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն։
Ա՛յ հղունիկ, մի լար՝ ձայներդ թէ չկան,
Տուտով կ'ածես, շուտով կանես մտահան,
Ա՜հ, ես ցամքած, մէկ հատիկս էլ հեռանայ,
Ու ճար չկայ թէ իմ սրտիկս հովանայ։
Օրօր որդեակ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն։
Որդեակ, որդեակ, թէ գաս բարով ձիերով,
Մէրիկ կանչես, ասեն մեռաւ կարօտով,
Աստուած սիրես իմ գերեզման չը մոռնաս,
Քանիմ' արտասունք չոր հողերուս ընծայ տաս։
Օրօր որդեակ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էդպէս քուն։

Տ. Ամիրճանեան

---

93 ՆՆՋԵԱ ՈՐԴԻՍ

Ննջեա՛, որդիս, անուշ քնով
Օրօր կասեմ ու նանի,
Քնոյ հրեշտակ իւր թեւերով,
Քո երեսին հով անի։
Ննջեա ննջեա անուշ զաւակ,
Շուտ մեծացիր ու մարդ դառ,
Հայրենիքիդ լեր պիտանի,
Նորա արեան վրէժն առ։
Գիտես արդեօք ով էր պապդ
Եւ ինչ գործեր նա արաւ,

Նա Վարդանն էր որ իւր գործով,
Հայրենիքին փառք բերաւ։
Քո անունն էլ նոյնպէս Վարդան,
Բաջ Վարդանին նմանիր,
Նորա տուած օրինակով,
Հայրենիքիդ ծառայիր։
Գիտացիր որ ամենայն մարդ,
Պարտական է իւր ազգին,
Սիրել օգնել թէ որ պէտք է,
Հայրենիքին զոհ լինել։
Դէհ, մեծացիր ու քաջացիր,
Ազգիդ վրայ մտածիր,
Ձեռքէդ եկած ամէն բարիք,
Նորա համար մի խնայիր...

---

94 ԴԵՌ ԳԻՇԵՐ Է

Դեռ գիշեր է. առաւօտ չէ,
Հանգիստ քնիր, իմ զաւակ,
Ահա՛, ծիծս առ բերանդ,
Եթէ ունիս դուն փափագ։
Թէեւ դրսից քո ականջին
Դիպչում է սուր աղաղակ,
Քնիր, քնիր, սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթնելու,
Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու։
Դու քոյրերիդ մի մտիկ տար,
Նրանք մեծ են, գառնուկս,
Օրօր ասեմ, դեռ դու քնիր,
Որ մեծանաս ձագուկս,
Ահա դրի գլխիդ տակը,
Բարձի տեղակ բաղուկս.

Հանգիստ քնիր սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթնելու,
Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու։
Օրօցքիդ մէջ քեզ պինդ կապեմ,
Չը լինի թէ գլորիս,
Կամ թէ ընկնիս գետնի վերայ,
Քեզ վնասես, մոլորիս,
Տանիր Մորփէոսի գիրկը,
Մինչև լեզու սովորիս.
Այժմ շուտ է սիրուն մանկիկ,
Ժամանակ չէ զարթնելու։
Մի հաւատար, որ խաբում են,
Ոչինչ չունին քեզ տալու։

95 ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պզտի՛ տղայ, չեմ օրօրիլ օրօրանքդ, որ քուն լաս,
Հայ աղբարքդ տաքի ելան, մենակ դու՞ տու պիտ մնաս·
Զարթէ՛, հոգիս անուշ քունէդ, թո՛ղ աչքերդ լուս տեսնին,
Արևմուտքէն արև ծագեց, բացըր բանեց Հայ ազգին։
Զար սուլթանի ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ·
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ·
Ո՛վ որ շուտով տաքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,
Սիրուն որդիս միթէ՞ մենակ, չար լուծի տակ պիտ՝ մնէ։
Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողագին ու լացինք
Աղի աղի արտասունքով ձեռք ու ոտք լւացինք,
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի Հայերուն,
Այժմ, նայինք, նա կը լսէ՞ չառաչիւնը սուրերուն։
Տո՛ւր, սիրակա՛ն, քակեմ ձեռքիդ պալուլները արձակեմ,
Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ,
Ըստրուկ գնա՛ արեան դաշտը, վերադարձի՛ր ազատուած։
Արդեօք մի օր պիտի լսէ՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած։

Գամառ-Քաթիպա

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐ

96 ԵԼԷՔ ԵԼԷՔ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Ազատութեան այն վառ սէրը,
Թունդ որոտաց իմ սրտում,
Իմ հայրենեաց սուրբ անունը,
Ինձ պատերազմ է կանչում. տրայլալալամ։
Ելէք, ելէք, հայկազունք,
Ելէք, Հայկայ զաւակունք,
Ելէք, ելէք, հայ եղբայրներ,
Առնենք մեր սուր նիզակներ, տրայլալ.
Ահա՛, եղբայրք, հայ եղբայրներ,
Առէք զրահ, սուր, զէնքեր,
Մա՛հի դաշտում Շաւարշանայ,
Մեզի հրաւէր կը կարդայ, տրայլալալամ։
Ելէք, ելէք, հայկազունք,
Ելէք Հայկայ զաւակունք. և այլն։
Ա՜խ, հայրենիք, սուրբ անունդ,
Անշէջ վառել մեր սրտում,
Մեր հայ եղբարց շիրիմները,
Իրանց գիրկն են մեզ կանչում, տրայլալ...
Ելէք, ելէք, հայկազունք.
Ելէք, Հայկայ զաւակունք և այլն։
Այս օրերը մեր քաջ կեանքին,
Նւիրական թող լինի,
Ո՛վ սիրում է ազատութիւն,
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն. տրայլալալամ.
Ելէք, ելէք հայկազունք,
Ելէք Հայկայ զաւակունք,
Ելէք, ելէք հայ եղբայրներ,
Առնենք մեր սուր նիզակներ, տրայլալ.

97 ԱՀԱ ՄԱՅՐԻԿ

Ահա մայրիկ՝ ես գնում եմ,
Ազգիս համար զոհուելու,
Քաջ ընկերներով միասին՝
Անգութ քրդին ջարդելու:
Երբոր մայր իմ, Սասուն եկար,
Ինձի որտեղ փնտռեցիր.
Գերեզմանիս վերայ գալով,
Ի՞նչ ասեցիր ու լացիր:
Գերեզմանիս հողի վերայ,
Ի՛նչ անուշիկ հոտ կուգայ,
Այսուհետև անուշ մայրիկ,
Ինձմէն քեզ օգուտ չկայ:
Գերեզմանիս հողի վերայ,
Ցանէ ծաղիկ, իմ մայրիկ.
Ցանէ ծաղիկ, թափէ արցունք,
Երիտասարդ եմ, մայրիկ:
Գերեզմանիս քարի վերայ,
Խոշոր տառով գրեցէք—
«Այսուհետև հայ մանուկներ,
Ազատութեան զոհուեցէք»:

98 ԱՐԻՔ ԵՂԲԱՐՔ ՄԻԱՆԱՆՔ

Եթէ կամիք փրկել թշուառ հայրենիք,
Նախ պիտ' կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի,
Եթէ կամիք անցնել փառքին տիրանալ,
Հարկաւոր չէ ատելութեամբ բաժանիլ:
Արի՛ք եղբարք միանանք,
Բաւ համարենք մեր տանջանք,
Ի սէր ճնշուած հայ ազգին,
Գործ դնենք մեր ճիգ ու ջանք:

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին
Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
Ուրիշների սուտ պարգևից շլացած,
Մեզ մատնեցին մինչև այժմ գերութեան:
Արի՛ք եղբայրք և այլն:
Մենք Հնչակեան, եղբարք, դուք Դաշնակցական
Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.
Արի՛ք վճռենք, հոգով սրտով միանանք
Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:
Արի՛ք եղբայրք և այլն:
Մի նպատակ և մի վսեմ գաղափար
Մեզ կսպասեն անհամբեր ու անդադար.
Ուխտենք, եղբայրք, յայտնենք սրտի միութիւն,
Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:
Արի՛ք եղբայրք և այլն:

99 ԵՍ ԿՈՒԶԵՄ ԿՌՈՒԵԼ

Հերի՛ք է, մայրիկ, դու ինձ փայփայես,
Հերի՛ք է, մայրիկ, ինձ կրծքիդ սեղմես.
Ես կուզեմ ջարդել շղթան բռնութեան,
Ես կուզեմ կռուել. ես կուզեմ մեռնել:
Հասակս քանի տարուց անց կացաւ,
Սիրտս վրէժով լիքը լցուեցաւ.
Չեմ ուզում տեսնել եղբայրս թշուառ,
Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:
Լացով չեմ կարող փրկել Հայաստան,
Մայրի՛կ, ինձ պէտք է ձի, սուր, հրացան,
Ձեռներս ծալած չեմ կարող նստել,
Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:
Համիդն ունի գործեր մեզի հետ,
Մեզ կոտորում են, մեզ թալանում են.
Հերի՛ք է, մայր իմ, կարօղ եմ լռել,
Ես կուզեմ կռուել, ես կուզեմ մեռնել:

100 ՎԱՆԵՑԻՈՑ ԶՈՒՆԻԱԴԸ

Բաւ է, եղբայրք, վիզը ճկել,
Ողորմելի երևիլ,
Ժամանակը հասել է,
Հայ դրօշակին ծածանիլ։
Հայոց լերինք թող թնդան,
Հայոց բերանք թող գոռան,
Հայաստանի դաշտերում,
Քաջ հայերու զիլ «ուռա՜ն»,
Արիւն վոթէ թող հայը,
Աղաղակէ միշտ ուռա՜.
Մեր թշնամին այսուհետ,
Սրտի վախէն թող դողայ,
Այսուհետև արտասուք
Վախկոտները թող հեղուն,
Հայքըս արդէն պատրաստ ենք
Վոթել ազնիւ մեր արիւն։
Ու չենք դադրիլ վոթելու
Մեր Հայ, ազնիւ արիւնը,
Մինչև ազգը չի ստանայ
Իրա ազատութիւնը։
Ախ ու վախը մենք մոռցանք,
Այժմ գիտենք մենք ուռա՜,
Հա՜յք, գոչեցէք միշտ ուռա՜,
Որ թշնամին մեր դողայ։

Գամառ-Քաթիպա

101 ՀՐԱՒԷՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ի զէն հայեր, ի սուր, և ի հրացան,
Տաճկա-Հայաստանից գոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
«Թռէք հայեր, թռէք՝ դէպի Հայաստան»...

Արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս,
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս,
Հայկայ քաջ զաւկաց առոյգ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամեն կողմերից։
Խումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան
Փրկութեան աւետիս առած իւր բերան,
Դիմում են ցնծութեամբ իբրև հարսանիք։
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք։
Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը.
Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը։
Թշնամին զարհուրած փախուստ է դիմում
Անթիւ աւար և գանձ հայերին թողնում.
«Յաղթութի՜ւն, յաղթութի՜ւն», գոչենք միաձայն
«Թշնամին կորած է, կեցցէ Հայաստան»...

102 ԶԻՆՒԱԾ ՊԱՏՐԱՍՏՒԱԾ

Զինւած պատրաստւած Զէյթունի քաջեր,
Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.
Վրէժով լցւած առիւծի նման
Քաջ-քաջ կռւում են Թուրքի դէմ դաժան։
Կեցցէք, դուք միշտ Զէյթունցիք
Որ պիտ՝ փրկէք հայրենիք
Դուք հայաստանի պարծանք,
Մեր կեանքերն էլ ձեզ կտանք։
Մանուկն օրօրոցում հանգիստ չէր պառկած
Խնդրում էր մօրից «բազուկներս բաց»...
«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...
Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք
Որ պիտ՝ փրկէք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կեանքերն էլ ձեզ կտանք։

Ի՞նչ ես կաշկանդել, քանդիր ինձ մայրիկ.
Ես կուզեմ կռուել թուրքի դէմ ճարպիկ,
Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն։
    Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք,
    Որ պիտ' փրկէք հայրենիք, և այլն։

---

103 ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք առանցի վիճակ,
Պէտք է սուրբ ծառայենք երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ.
    Գնում ենք բարով,
    Կուշանանք տարով,
    Արիւն սուր ու թուր,
    Պատերազմի դաշտ—
    Կապած մեզի։
Դուշմանը տուեց մեզ ջանֆիտայ անուն,
Այդ անուան համաձայն՝ տեսաւ զօրութիւն,
Մենք չենք սիրել ազատ կեանքի բռնութիւն.
    Ուխտել ենք կռուել,
    Այդ սիրով մեռնել,
    Համոզուած ենք որ—
    Միայն զէնքով կայ—
    Հային փրկութիւն։
Սամբօլը պէտք է լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,
Թօթուրից դէպի Վան անցնել շտապով.
    Աջից Վարդանը,
    Ձախից Իշխանը,
    Գրաւել Աղբակ,
    Տարածել սարսափ,
    Փառք Դաշնակցութեան։

Ցահրատ

104 ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք լեռները ելնենք,
Արօր գութան մոռնանք, հրացանն առնենք,
Խեղդուած մեր բողոքը յայտնենք զէնքերով,
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով։
    Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
    Ճնշուած հայի որդիք հարազատ։
Բան թէ ամեն վայրկեան կենդանի մեռնել,
Ազատութիւն վճռել և ազատ մեռնել,
Հինգ դարով մեռեալ ստրուկ հայ ազգը,
Այսպէս պիտ' լուծէ եղբարց վրէժը։
    Մեր կեանք մեր մահ թող լինի ազատ,
    Ճնշուած հայի որդիք հարազատ։
Ստրուկութեան շղթան պարզ շառաչում է,
Ազատութեան ճնշուած ձայն հառաչում է,
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,
Եւ ընդարձակ հողերը Հայոց գերեզման,
    Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
    Ճնշուած հայի որդիք հարազատ։
Ցրուած խմբեր հասնեն Զէյթունից ի Վան,
Շտապենք միանանք կազմենք խումբ հայկեան,
Հայի ազատութեան պարզենք վառ դրօշակը,
Կեանքը մահով կապուած, գնենք նոր պսակ։
    Մեր կեանքը, մեր մահը թող լինի ազատ,
    Ճնշուած հայի որդիք հարազատ։

---

105 ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Հայրենեաց սիրոյ համար,
Խմբեր պատրաստուած են քաջ,
Հրացանները ուսերին,
Փամփուշտները ձախ ու աջ։
    Հնազանդ կարգով շարուած,
Իրանք առիւծի պէս քաջ,

Խմբապետը հրաման տւեց,
Գնալ դէպ՝ յառաջ, յառաջ...
Ոսկեզօծ բաշլուղներով,
Լազի շորեր թանկագին,
Գնում էին դէպի Սասուն,
Օգնելու Անդրանիկին։
Հայ քաջերը դիրք մտան,
Թշնամուն պաշարեցին,
«Ամեն կողմից կրակ տւէք,
Կոտորեցէք», գոռացին...
Եամա՛ն եկաւ ջանֆիդան,
Սարսափ տիրեց բանակին.
Փախչում էին դէպի լեռներ,
Վախկոտ զօրքերն ահագին։

106 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք,
Առած իր շուրջը զինուորներ ութսուն,
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն,
Սուլթան սարսափած, ճարը կտրւած,
Հազար ոսկի է գլխին խոստացած։
Հայ պատանիներ, շուտով շարժւեցէք,
Երբէք մի՛ք վախնայ, սուրեր շարժեցէք,
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Կենալու ժամը չէ շուտով քայլեցէք.
Սիրենք միութիւն չանենք վատութիւն,
Ունենանք հայեր, սուրբ ազատութիւն։
Օտար հողի մէջ չը մնանք հայեր,
Հերիք է հային այս պանդխտութիւն,
Թո՛ղ չը ծաղրէ մեզ անգութ թշնամին,
Մինչև մենք հասնենք մեր նպատակին.
Սիրենք միութիւն... և այլն։

Քաջ Անդրանիկը, անվախ սուր առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,
Աջ ու ձախ ջարդել տաճկաց զինուորին,
Քիւրդերից մատաղ բերել վանքերին.
Դէհ, Շաքիր փաշայ, մտածիր հնար,
Հազար ոսկիով անես գլխիդ ճար։
Կովկասի քաջե՛ր, առիւծի ձուտեր,
Սիրէք ձեր սուսեր, առէք նիզակներ,
Հայ օրիորդներ, պճնեալ տիկիններ,
Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ.
Հարուստք ձեր ոսկին տւէք մեր ազգին,
Ձեր անգին անունը յիշեն սերունդներ։
Դէհ, հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անձէք սար ու ձոր,
Ահա՛ կռւի դաշտը, թշնամին անհաշտ,
Մեր սուրը թող ուտէ օսմանեան վաշտեր.
Ասաւ քաջ Մուրադ, առած եմ խրատ,
Կամ կռւել ազատ, կամ մահ անարատ։

107 ԽՐԱԽՈՅՍ

Հերիք որդեակք, այսքան տարւան տառապանք,
Հերիք անգութ դաժան քրդին ոտքն ինկանք,
Քանի խոնարհ գլուխ տւինք գայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին։
Հերիք ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ,
Հին քաջերի արիւնից ենք և ազատ,
Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր ոչ նիզակ,
Մեր բահերն էլ կանեն նրանց շանսատակ։
Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
Նրանք մարդ չեն այլ լեռնական վայրենի,
Մերն է ձիրքը, մերն է ուսումն ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար։
Հերիք ելնենք ցոյց տանք թէ մենք... և այլն։

Նրանց են մեր կույս աղջիկները, հարսունքը,
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը,
Նրանց սուրի ծայրն է կարծես մեր հոգին,
Նրանց պամբուը մեզնից շատ է թանկագին։
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, և այլն։
Մենք եղբայրնիր ունինք հեռու տեղերում,
Նոքա մեր վրայ լուիկ արցունք են թափում,
Ձեն խնայել թև ու թիկունք, կը հասնին,
Շուտով կուգան կը միանան Սուրբ գործին։
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, և այլն։

108 ՀԱՅԴՈՒԿԻ ՎԵՐՋԻՆ ՈՒԽՏԸ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,
Ապագուլթ մահւան բոլոր սև չարիք,
Բայց քո սուրբ անունը մինչև վերջին շունչ,
Ես չեմ մոռանայ սիրուն հայրենիք։
Թող ինձ պատրաստէ անխիղճ թշնամին,
Կախաղան, և սուն, կամ մի այլ գործիք,
Բայց մինչև չը գցեն շիրիմ իմ մարմին,
Քեզ չեմ մոռանալ սէր իմ հայրենիք։
Թող կույր ամբոխը անձրևէ գլխիս,
Քար, հուր, շանթ, երկաթ և շատ չարիքներ,
Բայց մինչև իմ բերնից չելանէ հոգիս,
Քեզ չեմ մոռանալ անտէր Հայաստան։
Թող ինձ հալածեն Վասակի թոռներ,
Ասելով՝ ադէտ, յիմար և անբան.
Այդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,
Բայց քեզ չեմ մոռանայ, երբէք Հայաստան։
Թող իմ դիակս, մանրած մաս առ մաս,
Տանեն սգալով դէպ մահու դարպաս,
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,
Գուցէ քեզ մոռանամ, մայր իմ Հայաստան։

Բայց ոչ, երկնքում լուսոյ ոլորտ հետ,
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,
Պիտի միշտ գոչեմ, կրկնեմ յաւիտեան,
«Սիրուն հայրենիք, սիրուն Հայաստան»։

109 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն.
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,
Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
Կուզէ պատերազմ, կ՚սպասէ գարնան։
Մօտ է գարունը շուտով կը բացւի,
Հայի խօսքը քաջ, շուտով կը լսւի,
Հայերն անվախ, հոգով միացած,
Հրացան ուսերին մերն է «Նոր-տարին»...
Խմբապետները հոգով են կանգնած,
Ֆիդայի ուժով գնում են առաջ։
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ։
Յիշէք, եղբայրներ մենք շատ քնեցինք,
Բաւական է մենք այսքան համբերենք,
Մայր-Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմայ ույժ ունենք դարձեալ հետ կառնենք։

110 ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՒԵՆՔ

Մենք պէտք է կռւենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը զէնքով յետ խլենք.
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը։
Այլևս չըլանք և ոչ լաց լինենք,
Կրակւած սրտով մեր գործը վարենք,
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնել կռւի լայն դաշտում։

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ,
Երբ հայ քաջի դէմ կռիւ դուրս կուգայ,
Մենք վախեցող չենք մահից տանջանքից,
Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից։
Անէծք այն հօր չի մղում որդուն,
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.
Ամօթ այն հային և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք։

---

111 ՀԱԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես գնում եմ հեռու երկիր,
Իմ սիրելի Թանկագին.
Բաժանւում եմ ես քեզանից,
Գուցէ կրկին չը դառնամ։
Վեր կաց, սիրո՛ւն, քո ձեռքովդ,
Մէջքիս կապէ սուր, նիզակ,
Պատերազմի փողը հնչեցին,
Պիտի մտնեմ զէնքի տակ։
Մնաս բարո՛վ իմ սիրելի,
Իմ Թանկագին բարեկամ,
Միշտ աղաչէ Աստուածանից,
Որ կենդանի հետ դառնամ։
Հայրենիքի սիրոյ համար,
Աշուղ երգիչ եմ դառել,
Գերեզմանս մէկ քարի տակ,
Դուք պիտ ծածկէք սև հողով։

---

112 ԵՍ ԵՐԳԵՑԻ

Ես երգեցի մի երգ յուզւած,
Զանֆիտայի մօր մօտը,
Նա փարատեց իւր կարծիքը,
Առաւ որդու կարօտը։

Թշւառ մայրը դեռ չգիտէր,
Թէ Զէյթուն է իւր որդին,
Իմ դիւցազնի երգից լսեց,
Որ ապրում է սիրելին։
Լսեց նոր նոր յաղթանակներ,
Լուրեր հարցուց Բաշկալից,
Հուրաց—փայլեց սև աչքերը,
Ինչպէս կրակ բոցալից։
Ծանթի նման լի շեշտերով—
Կրկնեց որդու անունը,
Մայրական վեհ զգացմունքով,
Յայտնեց իր երջանկութիւնը։
«Ես բաղդաւոր մայր եմ, ասաւ,
Արդէն հասայ փափագիս,
Պատմութիւնը դափնեայ պսակ—
Պատրաստել է զաւակիս»։ Ֆահրատ

---

113 ՀԱՅԻ ՆՇԱՆԱԲԱՆԸ

Հնարագէտ լինենք հայեր,
Բանդենք Ելդըզը հնարով
Խլենք Թուրքից մեր սուրբ վայրեր,
Կեանքի արեան կաթիլներով։
Թէև Թրքաց կայ պետութիւն,
Մեզի էլ կայ շա՜տ շա՜տ գիտուն,
Եկէք սիրենք սէր միութիւն,
Նրանց յաղթենք գաղափարով։
Մեր քաջ Արաբօն անվեհեր,
Ընկերներն են անձնանուէր։
Յաղթութիւնը մերն է, հայե՛ր,
Թէկուզ դան հազար հազարով։
Սուլթանն անպատակ սատկի,
Մենք ծառայենք խելք ու մաքի,
Հոգւով զինւած ելնենք ոտքի,
Յաղթութիւնը մերն է բարով։

Լինինք թուրքին անհաշտ-ընդդէմ,
Դառնանք առաքինի վսեմ,
Երգիչըս էլ կը մասնակցեմ
Մեծ գործին, երգով քնարով։

Ֆահրատ

114 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Մութ գիշերին անվախ ֆիդան,
Ազատօրէն ման կուգայ.
Արի գնանք Մայր-Հայաստան,
Անդրանիկը դէմ կուգայ։
Հայերուս մէջ Վասակներու
Թիւը արդէն պակասում է,
Հայ պատանին սուրը ձեռքին,
Նոցա մաս-մաս մորթում է։
Անուշաբոյր թարմ ծաղիկներ
Հայ օրիորդը նւիրեց,
Շուն չեխերին ջարդել փշրել,
Անդրանիկը վճռեց։

115 ՍԵՐՈՎԲ ՓԱՇԻ ԿՈՉԸ

Ով որ քաջ է, ի՞նչ կսպասէ,
Արդէն ժամանակ է, թող գայ,
Մահ պատերազմի օրէնս է,
Ով որ անվախ քաջ է թող գայ։
Թափենք գնդակ ինչպէս տարափ,
Թշնամին լինի յուսախաբ,
Տարածենք մահ—ահ ու սարսափ,
Ով որ ազատմարդ է, թող գայ։
Մերթ Սասուն մերթ սարէ Սիփան,
Կռիւ կունենանք անխափան,
Մինչև որ փրկենք Հայաստան,
Այս յոյսն ունեցողը թող գայ։

Կամ կուինք պարպինք վերջանանք,
Կամ զէնքով փրկութիւն ստանանք,
Բաւական է գերի մնանք,
Ազնիւ մտածողը թող գայ։
Երկաթի մարդ, քարի սրտի,
Վրէժխնդիր լինի թուրքի,
Աշխուժով քարի տակ չոքի,
Անսխալ խփողը թող գայ։
Սուրը մէջքին, հրացանն ուսին,
Համարձակ դիմէ օրհասին,
Մահւան պատանքը միասին—
Մահն արհամարհողը թող գայ։
Հինգ դար է որ մեզ կապանեն,
Բռնի կրօնից կը հանեն,
Կին ու աղջիկներս կը տանեն,
Նամուս ունեցողը թող գայ։
Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով պէտք է մաքրել հաշիւ,
Յարգել զէնքը, տալ մեծ պատիւ,
Սերովբ փաշին սիրող թող գայ։

Ֆահրատ

116 ՆՒԷՐ ՀԱՅԴՈՒԿԻՆ

Անուշաբոյր, թարմ ծաղիկներ,
Հայ օրիորդը ինձ ընծայեց,
Հեռու երկրից անկեղծ նւէր,
Իր քոյրերուն ուղարկեց։
Ասաց. «Տա՛ր այդ փունջն ու ասա,
Թէ չի անցել էլ երկար,
Կռւի դաշտում հարս ու փեսայ,
Կը հանդիպենք մենք իրար։
Կռիւ կուտանք, կռիւ արդար,
Կռիւ վերջին ճգնական,

Գոտխպնդւած, հերոսաբար
Ու կազատենք Հայաստանն»։
Դուրս ցայտեցին արցունքներ տաք,
Իմ աչքերից այդ պահուն,
Լսում էի կարծես անյագ,
Ազգութեան պատգամին։
Եւ երդւեցի տանել փունջն այն,
Դէպի կարմիր Հայաստան,
Ուր վիրաւոր հայերն համայն
Սպասում են փրկութեան։

117 ԿՌՒՆՑԷՔ ՏՂԵՐՔ

Կռւեցէք տղերք, կռւեցէք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ստրկի ահը.
Այս անգամ էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն։
Ահա թշնամին փախչի սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախւած,
Կրակ տեղացէք անդադար կրակ,
Փառք մեր զէնքերին, սատա է գնդակ,
Այս անգամն էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայի ոյժն ու քաջութիւն։
Մենք առնախմբենք, մեր նախնի քաջեր,
Մեզի կ'սպասեն մեր սէգ եղբայրներ,
Ազատ չենք ծնւած, գէթ մեռնինք ազատ,
Եւ մեր սիրտ, հոգին պահենք անարատ,
Դէ, կռւէք տղերք, մինչև շունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պսակին։
—Մեռնինք յուսալով մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հայաստան։
Սուրէս յո․ լողեց և ընկաւ ցոլին,

Թողնելով մեզնում յիշատակ բարի,
Անեղ կռւի մէջ, աննման հերոս,
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս։

118 ՏԱԼՎՈՐԻԿԻ ՋԱԽԱԿ

Տալվորիկլի զաւակ եմ զորդ,
Բաղքցու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ հայոց եմ մնացորդ.
Տալվորիկլի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքին առաջ,
Բարոտ լերանց եմ ազատ լաճ,
Չեմ տեսել ո՛չ արօր ո՛չ մաճ.
Հա՜յ աղբրտիք, վա՜յ աղբրտիք,
Տալվորիկլի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրոյն համար,
Եկէք դէպ ինձ յառա՜ջ յառա՜ջ։
Երբ իմ աչքերս բացի աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար,
Մինչ չփակեմ աչքս ի խաւար,
Պիտ չը կոխէ հոս ոտք օտար։
Իմ մամ ծնաւ գլխ սարերու ծոց,
Ընկոյզի կոճղ մ'ինձ օրօրոց,
Տկլոզ ծնայ, մեծցայ տկլոզ,
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց.
Հայ աղբրտիք, վա՜յ աղբրտիք, և այլն.
Ոտքս բոբիկ, կուրծքս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց,
Ինձ մօտ մէկ է արև, բուք ցուրտ,
Բնւ է չիշխէ հոս թուրք կամ քուրդ։
Իմ կեանքս խիստ է և չարքաշ,
Փափուկ կեանքի ընաւ չեմ վարժ,

Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մըրրիկ ու երկրաշարժ.
Հա՜յ աղբրտիք, վա՜յ աղբրտիք, և այլն։
Հարստութիւն, ուսում, հանճար,
Փառք ու պատիւ չեն ինձ համար,
Բաւ է ունիմ տէգ, թուր, խանչալ,
Բնաւ չի խըռխտար վրաս օտար.
Սիրած զէնքերս չեմ ձգեր ձեռքէս,
Առիւծն անվախ չէ ինձի պէս,
Կը սիրեմ որս, կռիւ, աւար,
Կը սպասեմ երբ ընկնի հաւար.
Հա՜յ աղբրտիք, վա՜յ աղբրտիք, և այլն։
Այծեամի պէս կը ցատկոտեմ,
Առիւծի պէս կը մռնչեմ,
Ծովի նման կը փրփրիմ,
Կայծակի պէս կը հարուածեմ.
Կռւոյ դաշտը բաղդն է կեանքին,
Երբ կը ծագի արշալոյսը,
Կամ աւետիս տայ դրօշակին,
Կամ պաղ տեսնէ քու երեսը.
Հա՜յ աղբրտիք, վա՜յ աղբրտիք, և այլն։

---

119 ՃԱՐՏԱՐ ՅԱԿՈԲՆ ՍԵՐՈԲ ՓԱՇԻՆ

Ջոկեցի անհատ քաջերը,
Անցայ ընդարձակ դաշտերը,
Հասայ ձնապատ լեռները,
Հոգիս, քեզ տեսնելու եկայ։
Սուքայ սարից մինչ Ղաթաւի,
Հոգիս մէջս չէր դադարի,
Դիպայ անթիւ սարի քարի,
Ազատ գիրկդ ընկնելու եկայ։
Վանայ ծովէն մինչև Տարօն,
Նէմռութից կը հսկես Սասուն,

Մէկդին Յակոբ, մէկդին Սօսօն,
Կարօտըս առնելու եկայ։
Դու մեր կեանքը, դու մեր բերկրանք,
Սուրբ արիւնդ է ազգի փրկանք,
Դաշնակցութեան փառք ու պարծանք,
Երկու համբոյր տալու եկայ։
Դրօշակի Աղբիւր—Սերոբ,
Սիրած գործիդ զոհն է Յակոբ,
Դաշնակցութեան զէնքերն ամփոփ,
Միայն քեզ յանձնելու եկայ։
Պետերբուրգից մինչև Շիրակ,
Ծանօթներ քաշում են փափագ,
Յայտնի մարդկերանցից նամակ,
Ցատկապէս քեզ տալու եկայ։

Ֆահրատ

---

120 ԹԻԿՈՒՆՔԴ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թեերդ ուժգին,
Կռներդ ամուր պինդ պողպատ,
Սիրել գիտես, կռւել չգիտես,
Դու անզգոյ երիտասարդ։
Քոյրդ տանում են քիւրդերը,
Եղբօրդ արիւնն են ծծում,
Դու անտարբեր, սառ արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում։
Ամօթ քեզի, հազար ամօթ,
Որ զէնք չունիս քո ձեռքին,
Քո եղբօրդ կռւի դաշտում,
Տապալում է թշնամին։
Ձեռքդ տուր ինձ, երդուենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի,
Գնանք, կռւենք առիւծաբար,
Ի սէր ճնշուած հայ ազգի։

121 ՄՇԵՑԻ ՄՕՐ ԱՂԱՉԱՆՔԸ

Թիփլի բոլան մուժ գիշերին
Կը պտուէ ֆիդային,
Պատրօնդաշը խաչվակ թալած.
Ձեռքին առած հրացան։
Ա՜խ, ձեզ մատաղ, ջանֆիդայիք,
Ձեր մէր ձեզի թող մեռնի,
Մշու սուլթան սուրբ Կարապետ,
Ձեզի քեօմագ թող ըլնի։
Ա՜խ, ֆիդայիք ձեր սաղաղէն,
Ձեր խետ տարէք զիմ տղուն,
Ձեր խետ մեռնի ձեր խետ ապրի.
Ազգին մատաղ զիմ տղէն։
Թող դէն թողնի խարօր ու մաճ
Իմ մէկ ու ճար ազիզ լաճ,
Քիչ մ'ալ թող թւանքի խետ խաղայ,
Էլ թող չը տայ քրդին խարճ։

122 Ք Ա Յ Լ Ե Ն Ք

Յուսահատուել մեղք է ընկեր,
Արիացի՛ր, ոգի առ,—
Նայի՛ր, փայլեց հեռւում լապտեր,
Մենք էլ կառնենք շուտ դադար։
Արիացի՛ր, սիրտ առ, ընկեր,
Շարունակենք մեր ուղին,
Լսի՛ր կարծեմ՝ թէ զանգակները,
Ղօղանջեցին սարերէն...
Ահա՛ բացուեց ապօթարան,
Վստա՛հ ընկեր, առաջ քայլենք,
Զինուոր ենք մենք ազատութեան,
Եւ անփորձ տեղ կը հասնենք...

Զ Օ Ն Ե Ր

123 ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶ

Խաղաղութի՛ւն ձեզ, սո՛ւրբ մարտիրոսներ,
Որ կուի դաշտում ընկաք անվեհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.
Բայց աւա՜ղ ձեզ հետ մեռան ձեր իղձեր...
Խաղաղութի՛ւն ձեզ, սո՛ւրբ մարտիրոսներ։
Խաղաղութի՛ւն ձեզ ազգի քաջ որդիք,
Սեւ հողն է այժմ ձեզ առել իւր գիրկ.
Ձեր արեամբ ցօղած սար ու դաշտերում
Ահա՜ խնդալից նոր կեանք է եռում.
Փթթել է դարձեալ գարուն ծաղկաւէտ,
Բայց աւա՜ղ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ...
Ցուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ,
Խաղաղութի՛ւն ձեզ, ազգի քաջ որդիք։
Խաղաղութի՛ւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թո՛ղ չը վրդովւին ձեր սուրբ ոսկորներ,
Ձեր վերջին կամքը՝—«անէծքը թշնամուն»—
Մենք միշտ կը պահենք որպէս սրբութիւն,
Անէծք ու վրէժ—դուքա մեր միակ
Կը լինեն կեանքի հզօր նպատակ...
Քնեցէք խաղաղ հերոս եղբայրներ,
Թո՛ղ չը վրդովուեն ձեր սուրբ ոսկորներ։

Ա. Ծատուրեան

124 ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, հերո՛ս, դէհ հանգիստ քեզ քուն.
Դու լուսադէմին մեռար լիայոյս,
Դու ճամբորդ ժիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռու էր հեռո՜ւ արշալոյս։

Տե՛ս ի՛նչ հերոսներ՝ երգով սնուցուած՝
Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.
Հերոսների մէջ դո՛ւ մնար. հերո՛ս,
Մարմնով դառար հող, հոգով արշալոյս։
Է՛ րնէկ քո յոյսին, նա՛, որ չէր դողում,
Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն անյոյս,
Այն օձե՛ր էին և գորտեր սողում,
Քանզի գալու էր ա՜նշուշտ արշալոյս...
Սակայն երբ ազգդ թմրկով ու փողով
Դէպ՝ երբ ազատութիւն երթայ սրտայոյս,
Դու կգաս այնտեղ յարութեան շողով,
Բայց ննջի՛ր... դեռ կա՛յ մինչև արշալոյս...

---

125 ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ի՜նչ ցաւալի վիճակ, ի՜նչ դառն հարուած,
Հանդիպեցաւ քեզի, ընկեր պատուական,
Մի ստոր թշնամի, դաժան արարած,
Քո անգին կեանքիդ՝ շուտ տուեց վախճան։
Դու ազգի պարծանք, անդամ պատուաւոր,
Լեզուդ քաղցր անուշ, ճարտար հռետոր,
Անվախ համարձակ խօսելու սովոր,
Զրկուած ճնշուածին էիր միշտ պաշտպան։
Կազմդ յաղթանդամ, պատկերդ շքեղ,
Խաւարի դէմ մրցող, գրիչդ ուժեղ,
Սև մահուանդ գոյժը ցնցեց ամէն տեղ,
Ողբում են ընկերքդ, ծնողքդ, ազգական։
Երկար տարիներ անդուլ անդադար,
Ծառայելով անկեղծ, Սուրբ գործի համար,
Վերջ ի վերջոյ գաղափարիդ զոհ եղար,
Պատմութիւնը քեզ միշտ կը յիշէ յաւիտեան։

Աշըգ Ջամալի

---

126 ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Ցաւերդ դառան բիւր հազար։
Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի մի թուփ որոնեց,
Փոխան թփի մացառ գտաւ,
Լալահառաչ ձայն հանեց։
Հայրիկն ասաց, իմ հայրենեաց,
Փուշն անուշ է քան զվարդ,
Ես այն փշոց մէջը դարձեալ,
Կը որոնեմ սիրուն վարդ,
Այն սայրասուր փշերն ամէն,
Փունջ կապեցէք շարի շար,
Թողէք գլխիս պսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար։
Հա՛յրիկ, հա՛յրիկ, քո սուրբ ճակատ,
Արիւն արցունք են ա՛հ միշտ.
Փթթեալ վարդից կարմիր թերթերը,
Կը պսակեն փառօք զարդ։

---

127 Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ Ի Ն

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ,
Սուրբ անունդ պիտի յիշուի դարէդար,
Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանի՛կ։
Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Չը ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանի՛կ,
Հայոց կուսանք, դափնեայ պսակ թող հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն,

Գոհարներով անվախ կուրծքդ զարդարէին,
Կեցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ:
Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար,
Անյաղթ մնաս, դու քաջ, կռւի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:

---

128 ՊԵՏՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիսար լերան կրծքին՝
Նա էլ ընկաւ վիրաւոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած՝
Չար թշնամու գնդակով:
Ժայռոտ լեռան լերկ կատարից
Վար սլացիր սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ
Ու ջիւանուն հով արա...
Խոցուած սրտից մուգ արիւնը
Կաթիլ կաթիլ կծորայ,
Ա՜խ, ջիւանու կեանքն է հոսում
Ցաւոտ կրծքի լայն վէրքից...
Ժայռոտ լեռան լերկ կատարից
Վար սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ
Ու ջիւանուն հով արա...

---

129 ՍԵՐՈԲ ՓԱՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայոց երկրի աստղ ու լուսին,
Պայծառ դէմքին քող են առել,
Ի սէր Աստծու, գետեր, լճեր,
Պղտոր արեան գոյն են դառել,
Սուգ է երկինք, սուգ է երկիր,
Ո՜հ, ինչ տխուր փոփոխութիւն,

Որովհետև ազգի պաշտպան,
Վեհ Սերոբ փաշան է մեռել:
Սերոբ փաշա, ես քեզ մեռնեմ,
Ինչո՞ւ որբ թողիր քաջերուն,
Ինչո՞ւ նորէն սուգ սփռեցիր,
Դարտ վարամով լի հայերուն:
Տասնուչորս տարի անընդհատ,
Դիմադրեցիր թուրքերուն,
Զոհեալ բարձր գաղափարին,
Ի՞նչպէս մոռնանք, Աստծու սիրուն:
Թող հայ կղերին Աստուած պատժէ,
Պատրիարքին փափը տիրէ՝
Թէ որ քեզի մեծ ցոյցերով,
Հոգեհանգիստ չը կատարէ,
Դու բարձր ես շատ շատերէ,
Հայ զինուորն անմխիթար է,
Կռապաշտ և քարասիրտ է,
Ով որ քեզ սրտով չի սիրէ:
Ո՜հ, Աստուած իմ, խղճա Հային,
Ինչպէս մեծ է աղէտը,
Զինուորները սըգի մատնել,
Չկայ վեհ զինուորապետը:
Հազար ափսոս մեռաւ քաջը,
Դիւցազնական որդին հեռը,
Եղբայրներն էլ իր վիճակին,
Ջնջւաւ հոյակապ տան յետքը:
Սերոբն՝ արդար Աբէլի պէս,
Կը բողոքէ պաղատանքով,
Մեր ճակատին պող կը բուսնի,
Կայենի պէս ամօթանքով:
Ի սէր Աստծու, հայե՛ր—հայե՛ր,
Ոտքի ելնենք հզօր ջանքով,
Մեծ մարդու վրէժը լուծենք,
Անձնուէրի յաղթող զէնքով:

Յահրատ

130 ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ԵՐԳԸ

Թուրքը լսաւ անունդ Չաւուշ
Դէմքդ սիրուն լեզուդ անուշ.
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար,
Թշնամեաց դարձուցիր ապուշ,
Սասունն է քո ապաստան,
Վրէժ է քո դատաստան։
Հայոց համար սպարապետ,
Անդրանիկին ընկեր վարպետ,
Սասուն կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ սուրբ Կարապետ.
Սասունն է քո և այլն։
Կոտորեցիր քանիցս վաշտ.
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.
Անվախ հերոս, Թուրքաց դէմը,
Մինչև վերջը մնացիր անհաշտ։
Սասունն է քո ապաստան,
Վրէժ է քո դատաստան։
Անվախ հերոս ես ճշտապէս,
Հայք պիտի յիշեն մշտապէս։
Քաջաց քաջն ես Գէորգ սարդար.
Վարդանի տիպ ես իսկապէս։
Սասունն է քո և այլն։

131 ԳՈՒՐԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գլգլալով ջուր է իջնում,
Մշոյ մշուշ սարերէն,
Ծիծեռները ծի՜ւ ծի՜ւ եկան.
Գարնան գալը երգելէն։
Գարուն չը կայ հայի համար.
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն,

Գերեզմանս հողին հաւասար,
Թող փուշ բուսնի իմ վրէն։
Գնա՛ ծիծեռ, թո՛ղ ինձ մենակ,
Վէրքը սրտիս հողի տակ։
Բայց երբ տեսնես թշնամու դէմ,
Հայ ժողովուրդ սարի պէս,
Զէնքը ձեռին հպարտ կանգնած՝
Կուրծք դէմ տուած ժայռի պէս։
Ա՜խ այն օր արի՛ ծւայ,
Գարնան գալը նոր կանչէ,
Հայոց գարնան, որ բիւր բարև
Սիրտս խորէն ողջունէ...

132 ՍԷՐԷՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջանֆիտայ եմ.
Թափառական տուն չունիմ,
Եարիս փոխան զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունիմ։
Արնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.
Տանջւած հայրենիքիս սէրն ինձ,
Չը վախեցուց վտանգից։
Սամնայ լեռներ Գողգոթայից —
Շատ բարձր էր, խիստ դժւար,
Կեանքի խաչը ես շալակած,
Այնտեղ տարայ սիրայօժար։
Ես խաչւեցայ, ջանֆիտայի,
Սկզբունքս սուրբ մնայ,
Թող իմ արեան կաթիլներով,
Հայ հայդուկը զօրանայ։
Մակեդոնին հետ միանալը,
Իմ խաչովս պսակւեց,
Եղբայրական սիրոյ զէնքով,
Գաղան սուլթան խորտակւեց։

Կախաղանից երբոր քամին—
Ինձ տարբերէ ճօճալէն,
Յիշէք Պետրոս Սէրէմճեանին,
Թուրքից վրէժ գոռալէն:
Ապա հանգիստ հող կը մտնեմ,
Յոյսըս դուք էք, ընկերներ,
Շարունակէք սիրած գործս,
Դաշնակցութեան վեհ քաջեր:

133 ԱԽՊՕՐ ԵՐԳԸ

Ալ ու ալվան ես հագել,
Կարմիր լալայ ես դաւել,
Սուրայի կլոր մէջքդ
Փամփուշտներով ես ծածկել.
Ալ ու ալւան ես հագել,
Ախպէր ջան քեզ ղուրբան,
Մեր գիւմանը դու ես դու:
Ձեռքդ թւանք ես առել,
Դուշմանի դէմ ես կանգնել,
Ինձ սամ գլխիդ մատաղ
Բինիշդ ո՞վ է կարել.
Ձեռքդ թւանք ես առել,
Ախպէր ջան քեզ ղուրբան
Մեր գիւմանը դու ես դու:
Առիւծի պէս կանգնել ես,
Բեղերդ ոլորել ես,
Սև թուխ բեղերիդ մատաղ,
Յաղթանակը տարել ես.
Առիւծի պէս կանգնել ես,
Ախպէր ջան քեզ ղուրբան
Մեր գիւմանը դու ես դու:
Սիրտս վրէժով լցիք,
Կրակով բորբոքեցիք,

Աղիդ քոյր ու աղբրտանք,
Անձ թուրս սրեցէք.
Սիրտս վրէժով լցիք,
Ախպէր ջան քեզ ղուրբան
Մեր գիւմանը դու ես դու:

134 ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արև ազատութեան,
Փախէք ամպեր երկնքից,
Համազասպը իր խմբովը,
Կուգայ Խաչէն գաւառից:
Գալիս էին բազմաթիւ զօրքով,
Ադիգեօզալ Բէգովը
Յանկարծ ընկաւ Ասկերանը,
Հերոսների ուսկանը:
Թուրք խուժանը սարսափահար
Փախչում էին, իսկ գլխաւոր,
Թողնելով իրանց յետևից,
Դիակները հարիւրաւոր:
Հայերիս տէր Դաշնակցութիւն,
Քաջեր ունիս սրտալի,
Ամբողջ աշխարհ հռչակեցաւ
Համազասպը պանծալի:

135 ԱՐԱԲՕՅԻ ԵՐԳԸ

Զարթէք, զարթէք, ձըր Սասու սիրուն,
Իմալ արուն գօլել թրուն,
Լոխպել անօրէն քրթերուն,
Վարազի ճանկ թաթով կիգայ:
Ձըր Սասու սէր, դէն իրիշկէք,
Աւէք զէնքեր, զրխեր հագէք,

Թոթվէք ձեռնի, սիրտը պագէք,
Տեսէք ինչ խըլվաթով կիգայ։
Զըի մըռնիմ Սասնայ ծառր,
Էն ո՞րն ա կիգայ մըր լեռներ,
Քասն թուրքի գլօխ թեռներ—
Դրած՝ զառզաւաթով կիգայ։
Սպանել է Յաթոյ Ջանկին,
Գլօխ զարկեր է թվանքին,
Մեռնիմ էն պռատ պոնկին,
Իմա՜լ սանթանաթով կիգայ։
Ախլախնձոր—տեխուր յերես,
Դուշմանի կեանք թորկեր է կէս,
Նարինջ ձին տակ—ասլանի պէս,
Խօրօտ—շախշխաթով կիգայ։
Սասնայ վիշապ—աղնւոր բէտ,
Զար աչք քօռնայ՝ չտեսնի խէթ,
Ալիզընացի Լեւոնի հետ,
Արծւի զօլ զանատով կիգայ՝
Արընով է սորվել լողը,
Բարութով է կորել գողը,
Քրտի մահը, թուրքին յաղթողը,
Զէնքով, զառ գինաթով կիգայ։
Մէկ հարցուցէք գալող ո՞րն է,
Քաջ Արաբօյ բախտաւորն է,
Կարմիր Իրիցանց գինւորն է,
Առաքելի—զարդով կիգայ։
Ռաքի կայնի կարիճ Խէրան.
Զօրքով գնայ յառաջ ուրան,
Սալաթ Մէհրին բաժին զուրբան,
Արաբօս զոլվաթով կիգայ։
Արաբօյիս բաժնի բօղուն.
Բարութ գուլլէն ուր բնադուն,
Կը թափայ ձըր վախկոտ աղուն,
Հայ անարատ կաթով կիգայ։

Յահրատ

136 ԱՇՈՏ ԹԱԹՈՒԼԻ ԵՐԳԸ

Ելդըզ քեօշկից հրաման—
Տւեց դահիճ Սուլթանը,
Անաք բարեաւ ազնիւ ընկերներ,
Մօտ է կեանքիս վախճանը։
Կարմրագոյն պատանքս,
Բանտի պատէն մեխել են,
Դիւապաշտի անգութ ֆարմանր,
Գլխիս վերև կախել են։
Պահանջում են թիւրքանալ,
Կեանքը գնել մատնելով,
Ապրել այս դառն աշխարհում սառը,
Ազգի գաղտնիք պատմելով։
Ես պաշտել եմ գաղափար,
Ուխտել եմ զոհւել ազգին,
Կախաղանի անգութ սարսափով,
Չեմ ծախել իմ սուրբ հոգին։
Արև լուսի կարօտով,
Երկար տարու տանջանքին,
Կախաղանը վերջ կտայ շուտով,
Էրւած—խորոված իմ կեանքին։
Թող չը թաղէ ինձ թիւրքը։
Թողնի հողի երեսը,
Թող կատարէ իր անգութ ամարդի,
Գազանային հանդէսը։
Բայց դուք անուշ ընկերներ,
Ձեր սրտի մէջ գերեզման,
Թաղէք ձեր հէք Թաթուլին լացով.
Մահս յիշէք մշտական։
Յայտարարէք Դրօշակին,
Կենսագրութիւնս անարատ,
Ազգ. ուրացողներին թող լինի,
Աղնիւ մահս սուրբ խրատ։

Յահրատ

137 ԳԱՐԵԳՆԻ ԵՐԳԸ

Հայաստանի փառք ու պարծանք Գարեգինը Կարնեցի,
Թիկունքը լայն, թևերը հաստ, ինքը կորյուն առյուծի։
Հայաստանի վերջին հմուտ, վիրաբույժ էր խելացի,
Եղբայր, լացեք ու ողբացեք այն քաջ հերոսի մահի։
Խմբով ելան Ղարաբուլաղ թշնամու դէմ կռւեցին,
Մի քաջ հերոս վիրաւորւած՝ Գարեգնին յանձնեցին։
Նա ուզում էր վիրաւորին հեռացնել արեան դաշտից։
Չորս կողմից յարձակւեցին և քաջին պաշարեցին։
Անիրաւ վատ թշնամի, դու քաջ ֆիդայուն լաւ ճանաչէ
Ուրիշից օգնութիւն փնտռող Եւրոպայից ամաչէ։
Որքան կուզես մեզ հետ կռւէ, ամբողջ այդ զօրքերով,
Վստահ եղիր, որ քեզ յաղթողը պիտի լինի քաջ ֆիդան։
Նա ուխտել էր պէտք է զոհէր իր կեանքը դրօշակին,
Եւ ճշտապէս նա նուիրեց իր կեանքը թանկագին։
Կրծքին չորս գնդակ ստացաւ, վէրք ունեցաւ ահագին,
Կրկին հրացան էր պարպում այն քաջ հերոս Գարեգին։
Միջավին եմ պէտք է յիշեմ ձեզ նման միշտ քաջերին,
Որ թափեցիք ձեր արիւնը Հայաստանի հողերին։
Ամբողջ հայութիւնը կանգնած է ձեր վրէժ լուծելու,
Քնէք Հայաստանի քաջեր, հանգիստ ձեր ոսկորներուն։

---

138 ԿՈՐԿՈՏԵԱՆԻ ԵՐԳԸ

Ձէնքերս տուր մայրիկս, սուրերս տուր քոյրիկս,
Թէ որ ազգիս չզոհեմ, ապա ինչո՞ւ ծնար դու։
Սասուն արշալոյսին չորս կողմերս պատեցին,
Չորս դին չորս հազար զօրքեր, չորս հազար թշնամիներ
Ազատութեան վառ սէրը ինձ հանել է լեռները,
Վատ թշնամու դէմ կռւելու՝ Հայաստանը փրկելու։
Լեռն, սուրդ քաշեցիր, վրէժ առնել ուզեցիր,
Երբոր գնդակը դիպաւ «ա՜խ Հայաստանը» գոչեցիր։
Մայրանունս Արամեան, մականունս Կորկոտեան,
Երբոր բանտից ազատւեմ՝ դարձեալ խմբեր կ'կազմեմ

139 ՍԱՔՕՅԻ ԵՐԳԸ

Այն օրը որ ես քեզ տեսայ,
Հոգւոյս բարեկամ ընտրեցի,
Քո պատճառով շատ սիրեցի,
Որտեղ տեսայ Սև—Քարեցի,
Սև—քարից ղուրբան Սաքօյ ջան
Սաքօյ ջան հա՛յ, Սաքօյ ջան վա՛յ,
Սաքօյ ջան՝ ջան, ազբէր ջան։
Բոբիկ ոտքով ուխտ գնացի,
Փառք Աստծու, մուրազիս հասայ,
Ա՜խ, ինչ երջանիկ օր էր որ—
Քեզ սկզբում Դերիկ տեսայ,
Դերիկից ղուրբան Սաքօյ ջան և այլն։
Հարցրեցի վարդապետին,
Ասի, ո՞րտից է աբեղան,
Ասաւ, աբեղայ չէ, հոգիս,
Ջինւոր է այդ սիրուն տղան,
Ջինւորից ղուրբան և այլն։
Պատարագից վերջ՝ հրացան,
Գնացինք զարկելու նշան,
Հայր Թաւաքալ, Պետօ, Կարօ.
Ի՜նչ սիրելի ընկերներ կան.
Ընկերից ղուրբան և այլն։
Գործը այսպէս էր պահանջում,
Քեզ ճամբեցին զէնքից զրկւած,
Հազարներու դէմ գնող մարդ,
Քեզի մի յիմար քիւրդ է բռնած.
Վանայ խրխոտ բերդի փոխան.
Մշոյ խարխուլ բանտն են դրած,
Լսել, մայրիկդ լալիս է,
Մայրիկից ղուրբան և այլն։
Երկար յաղթութիւններից վերջ.
Այժմ էլ տանջանքին դիմացիր.

Անյաղթ ջանֆիտայ լինելու,
Մեծ մարդ կոչմանն արժանացիր,
Այդ դէպքում էլ պատմութեան մէջ,
Անյաղթ տոկուն փառքն ստացիր,
Անյաղթիդ ղուրբան և այլն։

140 ԱՐԱՄԻ ԵՐԳԸ

Բանտիս դռնիրն էին եօթն ելքերով,
Շուրջն էր պատած ամուր երկաթ քարերով,
Ձեռս ոտքս շղթայ զարկին այս պահուն,
Վիճակուեմս այսպէս ընկաւ կախաղան։
—Պարան դրին պարանոցիս յետ քաշէք.
Գոչից Արամ բարձրանալով կախաղան,
Ժամացոյցս ընծայ տարէք իմ մօրս,
Եւ մի ասէք Արամ կախուեց իմ հօրս։
Իմ անունս քաջ Արամ,
Մականունս Արմինեան,
Խմբապետ եմ, խումբ կը կազմեմ,
Հայ ազգիս, հայ ազգիս։

141 ԼԵՒՈՆԻ ԵՐԳԸ

Սասնոյ գաւառում ծնաւ մի մանուկ,
Անունն էր Լեւոն ուժեղ ու կարճլոտ,
Դեռ նա չը հասած պատանեկութեան,
Յանձն առաւ զոհուել ի սէր ազգութեան։
Վրիժառու լինել ուզեց իւր նախնեաց,
Լցնել զկարօտ իւր փափագանաց,
Բիւրակեան լերանց ստորոտն իջան,
Այնտեղ կանգ առան եւ քնեցան։
Յանկարծ արթնեցան մօտ էր կէսօրուան,
Բարբարոս քիւրդեր վերեւից տեսան,

Ընկեր գոչեցին, Լեւոնն Արթնացաւ,
Հրացան ձեռ չառած գետին փռուեցաւ։
Արցունք աչքերից վառ վառ կթափուէր,
Լեւոն ցաւոց մէջ ընկած տառապէր,
Ո՛հ հայեր, հայեր, թափեցէք արիւն,
Կեանքով առեցէք ձեր նախնեաց անուն։

142 ՏՈՒՐԲԱԽԻ ԵՐԳԸ

—Ուրեմն մնաք բարով աղնիւ ընկերներ,
Մեռնեմ ձեր հոգուն երջանիկ քաջեր,
Ես հողին մեռնիմ Տալւորիկ ազատ,
Կեցցես դու յաւէտ Անդրանիկ քո զարգ։
Քաջի համբոյրով տւաւ հրաժեշտ,
Անվեհեր Տուրբախ ընկեր հարազատ,
Բայց չանցկացաւ ուլացաւ ուժգին,
Վեհ դաշնակցութեան սուրբ անուան արժան։
Երկինք պատել էր գունդ-գունդ սեւ ամպեր,
Արեգակ չկար, մութ ու խաւար էր,
—Դժւար էր զատել քաջ ընկերներից,
Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից։
Հեռուից տեսնող՝ նլ ու աշխրաթ,
Երնէկ կուտային քեաֆուր Տուրբախին.
Ա՛հ ու սարսափով լցւած թիւրք միլլաթ,
Կապուտ աչերից արցունք կը ցայտէր։
Նժոյգ ձի նստած ահռելի դէմքով,
Երկինք ձայն տւեց վեհ քաջի արարք,
Խնուսայ փաշէն լցւած էր դողով,
Թռչում էր ցոլակ, ցայտում էր կրակ։
Անհամբեր սրտով Դաշնակի ճիւղեր,
Կորիճ Տուրբախի գալուն կսպասեն,
Փառք ու պարծանք են մեզ այսպէս քաջեր,
Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն։

143 ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չ՛կար, մութ գիշեր էր,
Մի խումբ կերճար արագ-արագ,
Տեսանք որ քաջ Խանի խումբն էր,
Զինված էին բոլոր նրանք։
Կեանքերը ազգին նուիրած,
Կորիճ Խանն առաջ ընկած,
Գնում էին Տաճկաց սահման,
Թռչում էին ինչպէս կրակ։
Հրացանները ուսերին,
Դրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ, զուարթ,
Ազատութիւն երգում էին։
Մութ անտառից անցնում էին,
Ամեն ժէկը առիւծ էին։
Նժոյգ ձիանները նստած,
Մերկ սրերը քաշել էին։
Երբ քաջ Խանը ելաւ Բասեն,
Թնդանօթներ արձակեցին,
Հայ քաջերի մօսիններից·
Գնդակները գոռգոռացին։

---

144 ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ,
Մեր հոգին էրված, մեր սիրտը խարոտ...
Սև սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սև Թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Վա՜յ, սև գիշերն է մեր կեանքը մաշում,
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում,
Ո՞ւր ես, հայ բլբուլ ձայնիդ ենք կարօտ,
Ձե՞ս երգում էլ մեզ գարնան առաւօտ...
Մեր օրն ու արև մթնել սևացել,
Դժոխքի դուռն է մեզ կեանքը բացել,

Բաղդն էլ մեզանից երես շուռ տուել,
Խեղճ հային կրակի բերանն է գցել։
Էրվում ենք անմեղ, սրտներս խարոտ,
Քո դեղ ու դարման երգին ենք կարօտ,
Սարէսար ընկած՝ մենք վա՜յ ենք կանչում,
Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում։
Քաղցած ենք, ծարա՜ւ, անտէր, խղճալի,—
Հաց, ջուր ենք ուզում մեզ Թոյն են տալի.
Մեր ճանբէն դժւար, մեր ճամբէն քարոտ,
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ։
Լեզւով չի պատմի հայի դարդ ու ցաւ,
Հայի արիւնով աշխարհ ներկւեցաւ.
Սիրտն է մղկտում, սիրտն է սևանում,
Ոչ ով մեր ձէնին ականջ չի դնում.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, երգիդ է կարօտ,
Էս սև օրերին մեր սիրտը խարոտ...
Բլբո՛ւլ, դու մեզ հետ տանջւում ու լալիս,
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս։
Դու ասում էիր, ազգ իմ մի սգայ,
«Յուսով եմ վաղ ուշ գարուն պիտի գայ».
Բայց, ա՜խ, չը տեսանք գարուն վարդանոտ.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ։

Ա. Ծատուրեան

---

147 Ի ՄԱՀ ՐԱՖՖԻԻ

Վհատած հոգուս ցաւած խորքերից՝
Աշխո՛յժ, անթնացի՛ր,—կրկին ոգի առ,
Տուր ինձ, արիւնոտ սրտիս Թելերից,
Մի պսակ հիւսեմ անմահի համար։
Անմահ Րաֆֆիի սուրբ յիշատակին՝
Բերում եմ ահա ի ձօն այս հիւսւած։
Ազգիս բազմաշխատ ազնիւ մշակին՝
Ես-էլ ուզում եմ տալ յարգանք յուզւած։

Գո՛ւժկան, մի գուժիր, թէ Րաֆֆին մեռաւ,
Նա անանց կեանքով միշտ կայ կենդանի,—
Դարեր կըսահեն, նա դեռ անդրաւ,
Հայ սերնդոց մէջ երկար կեանք ունի։—
Նորա վեհ մտքի փայլուն ծնունդներ—
«Կայծեր» Խամսայի մելիքութիւններ»,
«Սամուէլ», «Փնջեր», «Խենթ», «Դաւիթ-Բէգեր»,
Կ'ընծայեն Հային նոր կեանքի մտքեր...
Ճանապարհ տուէք, Րաֆֆին անցնում է,
Ուսերին բարձած բեռն անմահութեան...
Տեսէք հետքերը որչափ հնձում է
Համայն հայ ազգից դափնիք գոհութեան։
Թո՛ղ Րաֆֆին երթայ, կայթէ այն կաճառ՝
Ուր հանգստացած կան մեր մեծ մարդիկ,—
Բայց հայը ընդմիշտ նորա ձիրքն ու հանճար,
Կը յարգէ անկեղծ քնքոյշ գերթ վարդիկ։
Անցի՛ր, սլացիր դու երկնի խորան,
Ո՛վ յաւերժացած լուսափայլ հոգի—
Բայց քո վաստակներն կըտան նոր ոգի,
Նոր շունչ Հայերին վերածնութեան...
Անցաւ և Րաֆֆին ինչպէս մի յաղթող,
Եւ պայծառ հետքը թողեց աշխարհում.
Սերնդից սերունդ նա կանգնեց կոթող,
Նշան անմոռաց հայոց սրտերում...

ԽԱՌՆ ԵՐԳԵՐ

148 ԱԼԱԳԵԱԶԻՆ

Սև-մութ ամպեր ճակտիդ դիզւան,
Դուման հագար, Ալագեա՛զ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս էլ դուման, Ալագեա՛զ։
Ջա՛ռ փէշերդ անցայ, տեսայ,
Առանց դարդի սիրտ չը կար.
Ա՛խ, իմ դարդըս, ջա՛ն Ալագեազ,
Իմ դարդիս պէս հէչ չը կար...
—Է՛յ, Մանթաշի նըշխուն հաւքե՛ր,
Իմ դարդըս որ՝ ձերն եղնէր,
Ձեր էդ զա՛ռ—վա՛ռ, խաս-փետուրներ
Կը սևնային, քանց գիշեր։
—Է՛յ, Մանթաշի մարմանդ հովե՛ր,
Իմ դարդըս որ ձերն եղնէր,
Ձեր ծաղկանուշ բուրմունքը նուշ
Թոյն ու տօթի կը փոխուէր։
Հէ՛յ վա՛խ... կոտրան իմ թևերըս,
Ընկայ գիրկըդ, Ալագեա՛զ.
Ա՛խ, մեծ սըրտիդ սըղմեմ սիրտըս,
Լամ, արուն լամ, Ալագեա՛զ...

Աւ. Իսահակեան

149 Ճ Ա Մ Բ Ի Ն

Հայրենիքիս վա՛ռ երազով՝
Գիշերն ինձի քուն բերեց,
Եարաբ ո՞վ էր անուշ ձէնով
Խորունկ քնէս ձէն տուեց.
«Վե՛ր ել, ճամբորդ, ղարի՛պ ախպէր,
Բարի լուսը բացւեր է.

Երազիդ մէջ շա՜տ ես լացել,
Աչուըներդ թրջերէ»...
Արեւն ելաւ ցոլցլալով
Աղօթարանի պալատէն,
Սեւ թեւերը թափ ծափ տալով՝
Հաւքեր կ՚անցնին երկնքէն։
Ղարի՜պ հաւքեր, դարդո՜տ հաւքեր,
Ես էլ դարդլու ճամբորդ եմ.
Կեցէ՛ք, հա՜ւքեր, մէկ տեղ երթանք,
Ես էլ ձեզ պէս ղարիպ եմ...
Ա՜խ, մեր գեղեր—աեղերն կերթամ,—
Էնոնց շա՜տ եմ կարօտցեր.
Թօշնած սրտով՝ դարդլու կ՚երթամ,—
Գեօզալ եա՛ր եմ կորուցեր.
Գողտուկ լալով՝ սիրտս էլման
Արտըսուքով լցեր է.—
Աղիզ մօրս, ջանի՜ս կերթամ,—
Աշխա՛րհք ինձի մոռցեր է...

Դերենիկ Դեմիրճեան

150 ՂԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Օ՜խտը տարով, օ՜խտը սարով,
Ա՜յ սիրական իմ աշխարհ,
Հեռացել եմ քեզնից լալով,
Ղարի՜պ ընկել սարէ-սար։
Կեանք եմ մաշում, սեւ օր քաշում,
Ընկած խալխի դռներին.
Քու սէրն է ինձ էրում, մաշում,
Հոգի՛ս կը տամ էդ սէրին...
Կ՚ուզեմ հողիդ կարօտն առնեմ,
Հող ու ջրիդ ես ղուրբան.
Բայց ի՞նչ անեմ՝ ճամբէդ բռնեմ,
Բաղդն է կապել իմ ճամբան։

Վա՜յ ղարիբին—օրը՝ օր չի,
Վայով կեանքն է անցնում.
Դուրսը մեռնի, չօլում կորչի —
Ո՞վ է խեղճին հարցնում...

Ա. Ծատուրեան

151 ԶԱՆԳԻ

Զանգին կուգայ, Զանգին եկաւ զնգալով,
զնգալով,
Բաղ ու բաղչի միջէն կուգայ՝ հանգ առնելով,
ման գալով,
Ալագեազի սարէն կուգայ փրփրալով, սօթ
տալով,
Սրտիս խորքէն ելել կուգայ վռազ վռազ
զնգալով...
Էս ի՞նչ տեսակ ցաւ կայ սիրտս, անտուն
ղարիպ եմ դարձել,
Հալա՛լ Զանգի տուն՝ տեղ թողած՝ քեզ հետ
ընկեր եմ դարձել,
Անգին մօրս մենակ թողած՝ ժէխիդ ծոցին
եմ կպել,
Սիրտս մուրատ, սիրտս կարօտ մի անբուն
հաւք եմ դարձել...
Փուս ու դուման կելնի սարէն, վա՜յ, վա՜յ,
չ՚լինի՞ ձիւն եկաւ,
Դաշտ ու դուրան, ճար ու ճանբայ չ՚լինի՞
իրան տակ առաւ,
Զանգի՛, Զանգի՛, մատաղ ձէնիդ, մեր սարից
մի ծաղիկ բեր,
Անգին մօրս արտըսուքը,—անգին մօրէս
խաբար բեր.—
Քուրիկներիս, ընկերներիս սրտի սէրը
պոկէ բեր,

Վառւած սրտիս, կարօտ սրտիս, ա՜խ, Զանգի
ջան մի դեղ բեր
Ժողովրդեան երգն ու մրմունջ, վիշտ և տրտունջ
շուտ ինձ բեր,
Զրիդ ձէնին, ջրիդ երգին մատաղ լինիմ,
Զանգի ջան...
Դուշմանն առաւ սարի չորս դին, դուշմանն
առաւ իմ սրտիս,
Զանգին կուգայ Ալագեազէն գլընգալով,
գլընգալով,
Սրտիս ցաւին դարման չըկայ, խապար չըկայ
իմ երկրէն...
Ես ո՞նց մնամ անհայրենիք, ես ո՞նց մնամ
անընկեր...

Յ. Կոստանեանց

---

152 ԵՐԳԵԼ ԿՈՒԶԷԻ

Սուրբ հայրենիքս երգել կուզէի.
Իմ երգերի մէջ հոգեբուխ հնչիւն,
Երկնքի հետ խօսող լեռներ վիթխարի,
Եւ Թռիչքն արծուի այն վեհ բարձունքում...
Մայր ժողովուրդս երգել կուզէի,
Յորձնուտ Արաքսը չքնաղ ափերով,
Հրեղէն նժոյգ երգել կուզէի
Մասսայ լանջերում սրարշաւ տալով։
Հայ կորիճներին երգել կուզէի,
Եւ կռուի կոչը հպարտ վայրերի,
Սուրբ ազատութեան տօնը յաղթական,
Եւ վառ ապագան իմ հայրենիքի...
Բայց կոպիտ ձեռներ փշրեցին քնարս բէկ-բէկ
Բայց կոպիտ ձեռներ Նրա լարերը կտրեցին մէկ-մէկ

---

153 ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

Մնա՛ք բարով, արև, գարուն
Եւ խնկաբոյր ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ.
Մնա՛ք բարով, համբոյր և սէր,
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցր ժպիտ, կեանք մատաղ.
Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք.
Ես քնարս նուիրեցի
Վիշտ երգելու և տանջանք...

Յ. Յովհաննիսեան

---

154 Ա Ր Ա Զ Ի Ն

Արագ տակդ, մի փորէ,
Առանց դրան նա խոր է,
Արագ փնտրածս ինձի տուր,
Կամ թէ ասա՛ նա ո՞ւր է։
Ջիւան բալէս կորիճ էր,—
Տանը նստել կամաչէր.—
Եկաւ որ անցնի գնայ.—
Ճամբէն կորելն ամօթ չէ՞ր։
Արագ, արդեօք դու գիտե՞ս,
Որ անհոգի մի գետ ես.
Աչքերդ փակ, կատաղի,
Մուրազով մարդ կը խեղդես։
Մութ ջրերիդ ծալերում,
Բալիս հայեացքն եմ տեսնում,
Որդեկորոյս մի մայր եմ,
Արագ, քեզ եմ անիծում։

Արմա՛վ, քո ջուրը վարար,
Մի տար ցավերս իրար,
Արագ իջիր դու կարա՛վ՝
Վերջին շունչս բալիս տար...

Ա. Խնկոյեանց

155 ՄԱՆՈՒՇԱԿԻՆ

Ո՜հ մի ողբալ դու թառամած,
Եւ դալկացած Մանուշակ,
Որ քո անուշ բոյրն առած,
Բեզ ձգեցին ոտքի տակ։
Աւելի պարզ էր շողշողում,
Մեր գարունը մանկութեան,
Բայց մեզ համար այս աշխարհում,
Նա չքացաւ յաւիտեան...

156 ԱԽ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք.
Վա՛խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք։
Հարուստ մարդիկ կուտեն խմեն
Աշխարհի ծոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,
Մեզ փայ չկայ աշխարհից։
Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
Բարից-հողից հաց քամէ.
Բեռով հացը հարուստին տայ,—
Հարուստն իշխէ վայելէ։
Խեղճ աղքատը դառը դատի—
Դադարկ նըստի... Է՜յ, աշխարհ.
Էլ ինչու ես քարը թողնում
Քարի վըրայ, քար-աշխարհ։

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք։
Վա՛խ. մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք։

Ալ. Իսահակեան

157 ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Լուռ գիշերին մոքի դիմաց,
Շատ սուերներ ժողովեցան.
Ընկերներս՝ մեռած, կորած,
Հոգուս խորքով անցկացան։
Նրանց աչքեր, բոց ու վրէժ,
Սրտիս խորքը նայեցին,
Սիրտս բաց էր խոր վէրքի պէս,
Նրանք այնտեղ սուզուեցին...
Անհաւասար գոռ կուի մէջ.
Ընկաք, իմ վեհ ընկերներ,
Ա՜խ, ձեր շիրիմն իմ սրտումս է,
Իմ վեհ, իմ սուրբ ընկերներ...

158 ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

Նպատակիս հասնեմ միայն,
Թող գլխ հանեն կախաղան.
Կախաղանէն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ, ա՛խ, Հայաստան։
Ա՜խ, Հայաստան սիրտս ու հոգիս,
Քեզ նուիրեմ ընդունէ,
Թէ կարելի, թող ես մեռնեմ,
Թաք Հայաստան ոտքի ելնէ։
Անոր սիրուն բանտն ալ մտնեմ
Պալատ է այն ինձ համար,
Ոտք ու ձեռքս շղթայակապ
Երջանկութիւն է ինձ համար։

Թէ մինչև իսկ աքսորւեմ ալ
Թափառական գտնէ զիս բաղդ,
Հայաստանի սիրոյն համար
Փշոտ վայրեր կլլան դրախտ։
Ա՜խ Հայաստան դու սիրուն վայր,
Մինչև ե՞րբ այսպէս քո որդիք
Քեզնէն հեռի պիտ՝ հառաչեն,
Իսկ դուք մինչ ե՞րբ թափառիք։

159 Շ Ա Ր Ք Ի

Այսքան տարի դու ննջեցիր, բաւ է, բաւ,
Տխրութիւնդ ողջ հայերիս ցաւ է, ցաւ,
Արև եկաւ քո գլխիցդ անցկացաւ.
Զարթի՛ր, զարթի՛ր իմ աննման անձկալի,
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի։
Գարունն էկաւ, ձմրան դուռը գոցւեցաւ,
Սպասելով մեր սրտերը խոցւեցաւ.
Գիշերն անցաւ, առաւօտը բացւեցաւ.
Զարթի՛ր, զարթի՛ր, իմ աննման անձկալի,
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի։
Աղաչում եմ խնդրում մայրի՛կ, արթնացի՛ր,
Քո արարքէդ դու ամաչի՛ր, դու երկնի՛ր,
Քոյրերիցդ ողջիցը ետ մնացիր.
Զարթի՛ր, զարթի՛ր, իմ աննման անձկալի,
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի։

160 ՀԱՅ ԶԻՆԻՈՐ

Մասիսի ճակատին ամպրոպ պատռեցաւ,
Հայերուս սրտէն վախ փարատեցաւ,
Նժոյգ է տակս ձեռս այնալու,
Սուլթան ունե՞ս ուժ ինձ դիմանալու.
—Ըստրուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ։

Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս—
Զոհել մարմինս, զոհել և հոգիս,
Արհամարհել սով և խիստ նեղութիւն,
Տալ Հայաստանին սուրբ ազատութիւն.
—Ստրուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ։
Էլ ես ահ չունիմ քու վախկոտ զօրքէն,
Զզւած եմ ես քու շարեաթ օրէնքէն.
Ձեռքիս ունիմ ես Ղևոնդի լախտը,
Կը ջարդեմ փշրեմ քու փթած թախտը.
—Սուլթան սիրտ ունիս իջիր մարտի դաշտ,
Տես քու առջևն է թշնամիդ անհաշտ։

Գամառ-Քաթիպա

161 Ա Ղ Բ Ի Ւ Ր

Էս աշխարհի խեղճ աշխարհի,
Հանդերն անցիր, հէյ աղբիւր,
Ցօղ տուր բոյսին, ճամբիդ ծաղկին,
Կարկաչահոս ջան աղբիւր։
Մեր դաշտերը շատ են խոպան,
Չորացել են ծառ ու բոյս.
Առատ հոսիր անուշ խայտա,
Մատաղ սրտի միակ յոյս։
Դու գալիս ես, ես այդ գիտեմ,
Ծեր Մասիսի լանջերից,
Ու քեզ համար երգ ես հիւսել
Հայոց անուշ հովերից։
Առուն կանուխ դու այց ելար
Մեր աշխարհի բիւր ծաղկանց.
Դու գգւեցիր կոյս ցօղիկին
Ու լանջերը մեր լերանց։
Հովից անուշ, ցօղից պայծառ
Ջրիդ մեռնեմ, հէյ աղբիւր,

Մեր սարերի զովն ես բերում,
Զովիդ մատաղ, ջան աղբիւր։
Դէհ կարկաչէ ու քրչքրչա,
Անուշ ձէնով անընդհատ,
Բանի կանգուն ու հպարտ են
Մասիս, Սիփան ու Նըպատ...

Պ. Մոճուեան

162 ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

—«Որսկան ախպէր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փընտռես.
Ասա, եարը դուն չտեսար
Իմ մարալըս իմ բալէս։
Դարդի ձեռքէն սարերն ընկաւ
Իմ արեւըս, իմ բալէս,
Գլուխն առաւ քարերն ընկաւ
Իմ ծաղիկըս, իմ լալէս»..
—Տեսայ, քուրիկ, նըշխուն բալէդ
Կարմիր-կանաչն է կապեր,
Սիրած եարի համբոյրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր,
—«Որսկան ախպէր ասա, եար որ
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գըրկում չոր գլուխը
Իմ մարալիս, իմ լալիս»։
—Տեսայ քուրիկ դարդոտ բալէդ
Քարն է դըրեր բարձի տեղ.
Անուշ քընով տաք գընդակն է
Կըրծքում գըրկեր եարի տեղ.
Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներ են վըրան սըգում,
Աղիզ բալիդ, խեղճ լալիդ...

Աւ. Իսահակեան

163 ՏԱՐՈՆԱՑԻ ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԸ

Մայիս ամսուայ դու զեփիւռիկ,
Սլանում ես Մշու լերինք,
Կորուցեր եմ քաղցր հայրենիք,
Կուլամ, կողբամ, չասես հերիք։
Լեռան Մշոյ է նման Մասիս,
Մայրիկս կուլայ կանչում է զիս,
Կասէ—որդեակ, եկուր առ իս,
Բաւ է այսքան դուն թափառիս։
—Պանդուխտ եմ ես օտարութեան,
Ատեն չունիմ որ առ քեզ գամ,
Ցաւերս շատ են վիշտս յարաժամ,
Գուցէ սոցա եմ ես արժան։
Պանդուխտ եմ ես Տարոնացի,
Շատ ժամանակ ցաւօք մնացի,
Մշու երկրէն հեռու կացի,
Հայրենիքըս ես միշտ լացի։

164 ՕՐԸ ՄԹՆԵՑ

Օրը մթնեց, ճամբէս երկա՜ր...
Ուժերս հատան, ես մենակ.
Ա՛խ, ո՞ւր ես դու, ա՜յ անջիգեար,
Ինձ ո՞ւր թողիր մեն-մենակ։
Քո ճամբէն եմ բռնել գալիս—
Դու փախչում ես, անգո՜ւթ եար,
Էլ ի՞նչ ես ինձ նշան տալիս,
Ի՞նչ ես քցում քարէ քար։
Արեւս անցաւ սիրուդ համար,
Սիրտըս էրւեց անկրակ...
Ա՛խ, դու անուշ իմ երազ եար,
Ինչո՞ւ թողիր ինձ մենակ։

Յ. Յովհաննիսեան

165 ԵՐԲ ԱԼԵԿՈԾ

Երբ ալէկոծ ծովի վրայ,
Իմ մակոյկս խորտակւի,
Ես փրփրադէզ ալեաց մէջը,
Դեռ իմ յոյսը չեմ կտրեր։
Բոլոր ուժով և համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պատռելով
Դէպի ափը կը թռչեմ։
Անհաւասար այդ կռւի մէջ,
Թէ ոյժերս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ ինձ նետեն։
Այն ժամանակ գէթ սփոփանք,
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիւ տալով մինչև վերջ։

---

166 ԱՆԹԻՒ ԴԱՐԵՐ

Անթիւ դարեր թափառեցինք,
Դարձեալ օտար հող մնացինք,
Մեր անուշիկ Հայաստանէն,
Հեռու-հեռու բնակեցինք։
Հայ անունը ամենքի մօտ,
Դարձել է լոկ չնչին մի խօսք,
Հայեր-հայեր մտածեցէք,
Ձեր խոր քնից սթափւեցէք։
Սասնայ քաջեր ձեր գլուխներ,
Բարձրացրէք գերեզմանից,
Տեսէք թէ ձեր երջանիկ ազգը,
Թէ ինչ վիճակի է հասել։

---

167 Ծ Ի Ր Ա Ն Ի

Ես մէկ ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անւանի,
Պտուղներս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի։
Հին ծառ եմ արևելեան,
Չունիմ որոշ այգեպան,
Տունկերս ամեն երկիր,
Ընկած են բաժան-բաժան։
Արևելքում ինձ տնկեց,
Երբոր Աստւած ստեղծեց՝
Ասաց—աճէ բազմացիր—
Մի այգի էլ ինձ տւեց։
Ուղարկեց մի այգեպան —
Հարաւից հսկայ իշխան,
Այն հսկայի անունով
Կոչւեցայ ծառ Հայկական։
Չորս հազար տարւայ ծառ եմ,
Արմատս պինդ՝ կայտառ եմ,
Թէպէտ ոյժս պակաս է,
Բայց անունով պայծառ եմ։

Ջիւանի

---

168 ԻՍԼԱՄՆԵՆԻ ԳՈՌ ՎԱՇՏԵՐԸ

Իսլամների գոռ վաշտերը կատաղի։
Պաշարել են մեր լեռները սոսկալի։
Ելէք, ելէք, քաջ հայեր,
Արիւն թափենք անձնւէր,
Վասն ազատման հայրենեաց,
Թափենք մեր վերջին արիւն,
Այս է պահանջում դարը։
Շէնիկ, Սէմալ շրջապատւած քիւրդերով,

Տոլորիկի անցքն է փակած զորքերով։
Մի՛ վախենար քաջ Սասուն,
Եվ թշնամուն դեմ առ դեմ,
Մեր պապերից սովոր ենք,
Միանալ տղամարդու պես,
Սուր մեզ թողին յիշատակ։
Բոլոր եղբօրից բաժանելու եկել են,
Հայր և որդի սպանելու եկել են,
Ի սէր Աստծու դժւար է—
Հպատակել Իսլամին,
Լաւ է մեռնել առանց հաց,
Քան թէ յանձնել Թուրքին,
Անխիղճ են ու անաստուած։
Թնդանօթների դէմ կուենք քաջ սրտով,
Սովին դիմադրենք կաթով, բանջարով։
Դէ, քեզ տեսնեմ քաջ Մուրատ,
Սուրդ շարժիր անվհատ,
Ռուսահայ եղբայրներ —
Եւրոպայի պէս անխիղճ չեն,
Գուցէ կ՚գան օգնութեան։
Գարնան եղման գետի նման գոռալէն,
Թափենք դէպի մեր դուշմանը փափալէն։
Թող որոտան հրացանք,
Մեր ժայռերի ծերպերից,
Թող խոցոտի շուն վալին,
Շանթենք չար սուլթանի սիրտը,
Որպէս կայծակ երկնքից։
Քաջ աղջիկներ առէք վառօդ ու կապար,
Լցէք դատարկ փամփուշտները չարաչար։
Իսկ դուք կանայք ժրաջան,
Առէք սուր ու հրացան,
Ազատէք մեր լեռները,
Ձեր մայրական արինով։

Յահրատ

169 ԹՈՂԷՔ ՈՂԲԱՄ

Ոչխարներս գայլեր տարան,
Մէկն էր մնացել այն էլ կերան
Ինձ թողեցին ոսկորները,
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը։
Պալատիս մէջ մի ժամանակ,
Ապրում էի ես համարձակ,
Հրդեհն այրեց կորեց ծուխը,
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը։
Ծովի վրայ նաւ կազմեցի,
Մի ժամանակ նաւ բանեցուցի,
Ալիքն արեց կտոր կտոր,
Թողէք ողբամ իմ դառն ցաւերը։

170 ԽՕՍԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐ

Անխղճօրէն մեզ դատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ.
Եղբայրս ինձնից զատում են,
Խօսիք Հայաստանի լեռներ։
Իմ խնդրիս չեն դնում ականջ,
Ասում են սուտ է քո պահանջ,
Այս հողերը ո՞ւմն էր առաջ
Խօսիք Հայաստանի լեռներ։
Գուցէ յիշէք դուք այն օրը,
Որ պապս լծած արօրը,
Ցանում էր ձեր դաշտ ու ձորը.
Խօսիք Հայաստանի լեռներ։
Գիտեն իմ պապիս անունը
Բայց ստում են ուղղութիւնը,
Գոնէ նրանց պատմութիւնը.
Խօսիք Հայաստանի լեռներ։
Հիմա ձեզ մնաց ամէն բան,
Պէտք է դուք գաք վկայութեան,

Ո՞ւմով էք կոչւում Հայաստան.
Խօսիք Հայաստանի լեռներ:
Պայծառիս վիրաւորել են
Հողերին հաւասարեր են,
Մեր կայքը օտարք տիրեր են,
Խօսիք Հայաստանի լեռներ:

171 ՍԻՐՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն,
Ի՞նչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,
Գիտես որ մենք միշտ աչքներս յառած.
Քեզ ենք սպասում ամեն մի գարուն.
Գլուխս ծռած խեղճ ու հեզ,
Աղաչում իմ անձ քեզ,
Եկել ես հայրենիքից,
Ի՞նչ աւետիս բերիր մեզ,
Եկել ես հիւր սան մէկ լուր,
Մի սպասէ զուր,
Լեզուովդ սուր աւետիս տուր,
Մեզ ուրախացուր:
Ինչ լուր ես բերել սիրուն ծիծեռնակ,
Դու հայրենիքից սատ եկած թռչնակ,
Ասա, ինչպէս է իմ հայրենի տունը,
Խօսիր ինձ հետ ազատ համարձակ:
Ասա մի բան իմանամ.
Որ քեզանից գոհանամ,
Ուրախացուր սիրտս իմ,
Տարակուսած չմնամ,
Դու սլացար սարէ սար,
Մինչ այստեղ հասար,
Դու ինձ համար բարով եկար,
Ասա մի խաբար:

172 ՊԱՐԶԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզիր աղբիւր, պարզիր քեզնից ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր բէկի տղին ջուր տանեմ:
Աղբիւր գիտե՞ս քիւրդը մեզի ի՞նչ կանէ,
Կը կողոպտէ, կը չարչարէ կսպանէ:
Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
Մեր սեփական թագաւորներ ունէինք:
Գահ ու փառքից ազատ կեանքից զրկւեցինք,
Արիւնարբու թշնամու ձեռք մատնըւեցինք:
Դէհ, շուտ պարզիր բէկի տղին ջուր տանեմ,
Պարզիր, պարզիր, Խան-Մուրատին ջուր տանեմ:

173 ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ

Ձախորդ օրերը ձմռայ նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ՝ շարէ շարան կուգան ու կերթան:

Փորձանք հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանիշակ, վարդ պալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան.
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ունեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է, Ջիւան, ազգերը հիւր են.
Այսպէս է կանոնը բնական—կուգան ու կերթան:

174 ԽԱՒԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Չունիմ ես սէր, չունիմ ես սէր,
Ես սիրում եմ հայրենիք։
Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ.
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցունքներ։
Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր.
Ես շատ ու շատ փոխուել եմ.
Առ թաշկինակդ սրբիր աչերդ.
Ես քեզ սիրել կարող չեմ։
Մնաս բարեաւ իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Այդ արտասուքը ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ։

---

175 ՍԵՒ ԱՄՊԵՐԻՆ

Սև ամպերէն, ամպի սրտէն
Արտասունքի պէս թօն կուգայ.—
Ա՜խ, ո՞ւր կ'երթայ իմ սև ճամբէն
Ա՜յ բախտ, եարաբ վերջ չը կա՞յ...
Եարաբ դարդլու, չոր-դլուխս
Ո՞ւրտեղ, պիտի քուն մտնի.—
Սիրած, կարօտ սրտի վրա՞յ,
Թէ՞ չօլի մէջ ամայի. .
Ա՜խ, աչերս ո՞վ պիտ՝ ծածկէ,—
Աղիղ մէրս համբուրո՞վ,
Թէ՞ ձիւնն ու հող քամին բերէ
Սև սհակի վույ-վույով...

Աւ. Իսահակեան

176 ԵՍ ՀԱՆԵՑԻ ՍՈՒՐԸ

Ես հանեցի սուրը պատեանից,
Արտասուքով օծեցի,
Տրտմաւ անուշ սիրականս,
Երբ իմ ողբը կարդացի,
Նա երդուեց ինձ իմ սիրովս,
Զինայել թուրքերուն,
Այս պայմանով աշխոյժ քաջիս,
Սուր հրացան յանձնեցի։
Ոգևորուած կրկնեց քաջս,
Ում կապանք, վա՜յ մեզի,
Նա բաժանուեց մնչալով,
Ինչպէս կորիւն առիւծի.
Խլեց բերդեր, այրեց գեղեր,
Սուլթանն առաւ այս բոթը,
Ծակեց չար սուլթանի քիթը,
Ճենճերային գարշ օդը։
Երբ հասաւ մեր յաղթող լուրը,
Մեծ մարդասպանը սուլթանին,
Նա կատաղեց ինչպէս գազան,
Ձեռքը զարկեց ղուռանին,
Հրամայեց իւր զօրքերին,
Գնալ ջնջել Զէյթունը,
Ֆանատիկոս թաքրիներով,
Ոտքի հանեց խուժանին։
Եկան լացկան լատիֆներով,
Պարփակեցին մեր լեռներ,
Սովալլուկ սառան, կորան,
Շարժեց Զէյթուն իւր բուրքեր,
Փրփրալով որպէս հեղեղ,
Մեր ժայռերից դէպի ծով,
Քաջս գնաց հսկաններով,
Յաղթեց, դարձաւ ապահով։

Զարդեց, եկաւ գերիներով,
Անմահացուց անունը,
Սև մազերով սրբեմ փայլուն.
Սրէն կաթուած արիւնը.
Հանգստացնեմ սրտիս վերայ,
Զխանդարեմ իւր քունը,
Մեղմ համբոյրով, կիցցէ կրկնեմ,
Ազատուած է Զէյթունը։
Աստուած սիրէք, հայ աղջիկներ,
Եկէք ուխտենք միասին,
Այսուհետև էլ չսիրենք,
Կռուից փախչողը վախկոտին.
Խիստ զզուելի կերպով նայենք,
Ոսկոյ սիրով մեռնողին,
Համբոյրի տեղ թոյն կամենանք,
Թիւրքից վրէժ չառնողին։
Տիրանիս պէս քաջեր սիրէք.
Արժանի են մեր սիրոյն,
Որոնք գիտեն սրով պահել,
Կին չեն յանձնել թուրքերուն,
Ես քեզ մեռնիմ, Տիրան, Տիրան,
Փառք Զէյթունի, սիրական,
Հազար էրնէկ ամեն հայ կին,
Մարդ ունենար քեզ նման։
Բարգենիկս ոտքով օրրեմ,
Վառօդ մաղեմ ձեռքերով,
Վատ Սուլթանի հետ գործ ունինք,
Դեռ հայ ազգը չէ ապահով.
Կգայ գարուն, մենք կսկսենք,
Նոր գործ, նոր կռիւ Թիւրքի հետ,
Մեր լեռներից արիւն պէտք է—
Հեղայ ինչպէս Գեհոն գետ։

Ցահրատ

---

177 ՄԱՃԿԱԼ ԵՄ

Մաճկալ եմ բեզարած եմ,
Սար շուռ տուր, շուռ արի,
Ծովի պէս քրտնած եմ,—
Եզներն արձկի, տուն արի։
Կաթի սերը քաշեր եմ,
Դրեր եմ հովին սառի.
Ալ-գոգնոցս փռեր եմ,
Արի, թառլան թը՛ռ արի։
Տեղ եմ քցեր շուաքում,
Քամին կուգայ զով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Չափ տուր, չափ առ—չուստ արի։
Դատրած, բեզարած եար ջան,
Ամպերն ելան—դէհ, արի,
Բեզարած ջանիդ ղուպան,
Ծտից թև առ, թէզ արի...

Աւ. Իսահակեան

---

178 ՔՐԴԱԿԱՆ ՄԱՐՇ

Լօ, լօ, լօ,—Սիփանա սէգ սարի վերայ,
Կտրիճները շտապով գալիս են միանում,
Այնտեղ անվախ որդիք հսկայ լերան վերայ
Զէնք ու զրահի են ընտանում։
Ահա վառում են՝ զինւում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արիւնը նրանց բորբոք սրտի մէջ եռում,
Թռչում, անցնում, անհամբեր,
Զերթ Սիփանայ պինդ քամին,
Սլանում են դէպի ցած,
Դաշտի միջին թշնամուն պատահում են
Եւ մեծ վրէժ անմոռաց—

Անեղ կուռում նրանից առնում,
Հատու սուսեր հանում,
Ցեղապետին են սպանում,
Եւ զերթ կիզող հուր վառում։
Այժմ բոլոր ցեղն ոտի կանգնած՝
Թշնամու դէմ մահառիթ մարտի է կանչում—
Արեան մեծ վրէժը թշնամուց պահանջում,
Եւ թշնամին պարտըւած՝
Թողնում փախչում սարէ սար՝
Յետ ձգելով մեծ աւար։
Արիւն թափեցին, արիւնի փոխանակ
Արիւն քամեց ծարաւի սուսեր,
Նրան յագեցած՝ դրեցին պատեան,
Ելնում են ի լեռ—սէգ Սիփանն ի վեր,
Սէգ Սիփանայ կանանչ գլխին յաղթող
Ցեղն անում է ոհ, մեծ խնդում,
Ամպերի թանձրութեան միջից
Սիփանն ամբողջ է թնդում.
Էլ չեն գալ մեզ մօտ թշնամիք,
Սուր տեսան մեր պողվատիք։

179 ԽՂՃՈՒԿԻ ԼԱՑԸ

Ի՜մալ պտի էնինք, ես լէ չեմ գինայ,
Որ չը Թուրքինք քոչինք մըր տուն ու վաթան,
Զունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,
Հիմիկուց յետև տեսնանք, փոխինք, զմեր բան։
Իդա խարիպութեն աւիրեց զմըր տուն,
Կը Թուրքինք հեռենանք ճըժերսի սիրուն,
Լալով մընք հաց կուտինք չուրի յիրիկուն,
Էլ Երբ միտք կու բերինք մըր խեղճ Խայաստան։
Սէֆիլցեր՝ կը դողանք բըդերու տաջ,
Տաճկին գանգատ կէնինք, չէ էնէ ականջ։

Ծանդըրցուցեր է մըր վրէն խարջ-խարաջ,
Խըճեցրեր պարտքնտէր, քեաֆիր խարկախան։
Թորկած խօրօտ հանդերս, թորկած սիրելիս,
Թորկած Ջամալ եղս, թորկած Մարալիս,
Եա Ստամբօլ կերթանք, եա թէ չէ Թիֆլիս։
Էնտեխ աչքներս առած ինք սև գերեզման։

180 ԾԱՂԻԿ ԷԻ

Ծաղիկ էի նորաբողբոջ
Սարի լանջում,—երկնի տակ,
Ինձ դիւթում էր առուի խոխոջ,
Ինձ ողջունում արեգակ։
Գիշերները աստղ ու լուսին
Բնից կտրած ու ապուշ՝
Ծաղկիս սիրուց երգում էին
Օրօր անդո՛րր ու անուշ...
Գառների հետ լուսադէմին
Եկար սարը, ջա՛ն աղջիկ.
Ինձ քաղեցիր, դրիր անգին
Կրծքիդ վրայ գեղեցիկ...
Այնտեղ, այնտեղ ես ապրեցայ
Քու արցունքով բուրեղիկ.
Բախտը ժպտաց քեզ, սևաչեա՛յ,
Ես չորացայ... ա՜խ, աղջիկ...

Աւ. Իսահակեան

181 ՀԱՅԴՈՒԿԻ ՆՇԱՆԱԾԻ ԵՐԳԸ

Հայաստանից եկած գինւոր,
Սիրականս—կեանքիս հատոր,
Քեզ կսպասէի օրէ օր,
Շողշողուն զէնքերիդ մատաղ։
Տուր զէնքերդ առանձին պահեմ,
Յոգնած—տանջուած հոգիդ շահեմ,

Վառ համբոյրով դէմքդ շոյեմ,
Թրթռան նեարդերիդ մատաղ։
Արկածալի կեանք խորհրդով,
Լեռներ ես անցել շտապով,
Արեգակն է այրել տապով.
Սևորակ պատկերիդ մատաղ։
Կգաս դու զոհերի երկրէն,
Պատմիր Մոկունքցի Եաթերէն,
Խօսիր Գիսակի խօսքերէն,
Սրտաշարժ խօսքերիդ մատաղ։
Ձով Սասունի հովէն կուգաս,
Վանայ ծփան ծովէն կուգաս,
Անդրանիկի քովէն կուգաս,
Զօրաց շէֆ զինուորիդ մատաղ։
Սերոբ փաշի գերեզմանը,
Տեսե՞լ ես իմ սիրեկանը,
Դիտել ես ողջ Հայաստանը,
Ապագայ յոյսերիդ մատաղ։
Սիրտս է դառել սիրոյ անօթ,
Տասն օր կեցիր՝ անհեմ կարօտ,
Յետոյ գնա Սաքոյի մօտ,
Թանկագին ընկերիդ մատաղ։
Արփենիկն եմ, լի բերկրանքով,
Գգուեմ պաշտելոյս բաղձանքով,
Քնենք ամուսնու տենչանքով,
Սիրուհու կարօտ սէրիդ մատաղ։

Ցահրատ

---

182 ՓԱԽԻՐ ԱՅԾԵԱՄ

Անհոգ ես չես գիտում ինչ կայ քո մասին,
Փնտռում են քո խեղճ անձի վնասին,
Գամբռներով բարակներով միասին,
Փախի՛ր այծեամ փախի՛ր որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս։

Որսկան ճրագով քեզի ման կուգայ,
Կուզէ իւր ձեռքը քո արիւնով լուայ,
Խղճալի քո տեղեակ սար ու ձոր կուլայ,
Փախի՛ր այծեամ փախի՛ր որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս։
Որսկան գութ չունի կանէ կրակը,
Կամ քեզ կսպանէ կամ քո զաւակը,
Ձուր չի անցնիլ հրացանի գնդակը,
Փախի՛ր այծեամ փախի՛ր որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս։
Դաշտում չես ման գար թէ մտածես լաւ,
Քեզ կվիրաւորեն կստանաս մեծ ցաւ,
Դուրս մի ելնիր խիտ անտառից դու բնաւ,
Փախի՛ր այծեամ փախի՛ր որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս։
Ձորեր մի մտներ այնտեղ վտանգաւոր է,
Որսկան ման կուգայ այնտեղ սովոր է։
Քարայրից խփելով քեզ կը գլորէ,
Փախի՛ր այծեամ փախի՛ր որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս։

Ջիւանի

---

183 ԻՄ ԻՂՁՍ

Սիրտս ուրախ կեանքս անվրդով
Ազատ խօսել կուզէի,
Հոգիս հանդարտ խաղաղ կերպով
Անվերջ գործել կուզէի։
Հայաստանի սուրբ երկիրներ
Գնալ տեսնել կուզէի,
Դաշտ և հովիտ բարձր լեռներ
Փութալ թռչել կուզէի։
Աւարայրի ասպարիզում
Նետս լարել կուզէի

Վատ թշնամու զինւած խմբին
Զարդել փշրել կուզէի։
Անի քաղքից քար մի բերէք
Վանայ Մշու մի բուռ հող
Հայաստանի ջրով շաղւած
Հայ մանուկը շինէ թող։

---

184 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՒԵՏԱԲԵՐ

Հայաստանի աւետաբեր,
Ո՛վ դու կռունկ ձայնդ անուշիկ.
Արդ եկել ես օտար վայրեր,
Ի՞նչ լուր բերիր ինձ պանդխտիս,
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար իմ ողջոյնս անդ հայերուն։
Ըսէ կռունկ հայ զաւակաց,
Թէ ձեր եղբայր օտար վայրեր
Բնիկ է բայց սիրտն չմոռցած,
Միշտ հայրենեաց կարօտ եղեր.
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար սիրոյս հետ և զիմ ողջոյն։
Մեր հարթ կանաչ մարգագետինք,
Ուր կագաւեն հայ օրիորդները,
Արդեօք քաղէ՞ իմ անուշիկ,
Սրտիս հատոր, սիրուն վարդեր.
Ո՜հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար անկեղծ սէրս անդ հայերուն։
Մայրս կ՚խորհեմ գիշերն ամեն,
Երբ աստեղք բարձր երկինս փայլեն,
Դառն արցունքներ աչքիցս վազեն,
Իբր կը յիշեմ իմ հայրենիքս.
Ո՛հ հայրենեաց կռունկ սիրուն,
Տար արցունքներս անդ հայերուն։

---

185 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկել եմ քիւրտերի մէջ,
Արնաշաղախ վէրքով լցւած,
Ինձ կարծել են մեռած,
Թողել գնացել են.
Ես այս արեան դաշտում,
Անտէր անտիրական,
Կիսամեռ թշւառս ի՞նչ անեմ,
Մնացել եմ անօգնական։
Երբ նայում եմ լուսնի լուսով,
Հազարներով փռւած գետին,
Սատկած և վիրաւոր,
Շարաֆ բէգի քիւրտեր,
Մրմնջում են մեռամաղձոտ,
Հէք գլօներ,
Տեսարանն ուրախալի էր,
Թեթեւանում էր իմ վշտերը։
Քրտական լաց—կոծի միջից,
Յանկարծ լսեցի մայրիկ ջան,
Ա՜խ, այդ ազդու—
Հառաչանքն էր հայկական,
Գնացի դէպ նորան,
Տեսայ՝ ընկերըս էր,
Զինուոր էր նա վէրք ստացած,
Արեան դաշտն ընկել ինձ նման։
Ձեռք մեկնեցի մտերմիս,
Ասի, նայիր չորս բոլորդ,
Տես և հոգի ստացիր,
Հայի յաղթութիւնից.
Մեծ է ջանփիտանը,
Փառք իւր գրօշակին,
Յաղթութիւնով ոգեւորւած,
Հեռացանք այն արեան դաշտից։

Երուսաղէմի դաշտի պէս,
Տեսէք վերքերուս տեղերը,
Հաւատացէք հայ զինուորի—
Ուղղութիւնը,
Որ չէ խնայում ձեզանից—
Իւր արիւնը,
Ազատութեան զոհերն ենք,
Կարեկից անձնուէր սրտով։

Ցանրատ

186 ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ

Նպատակիս գէթ մի մասը կատարուէր,
Եարալի բլբուլ եմ։
Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ.
Եար արի, տուն արի, շուտ արի բլբուլ.
Սարերի գիւլն եմ։
Ա՜խ իմ դարդս շատացել է չեմ կարող,
Եարալի բլբուլ եմ,
Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ,
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,
Սարերի գիւլն եմ։
Ա՜խ, անբաղդ հայդուկիս Տէր իմ, դու խղճայ,
Եարալի բլբուլ եմ,
Մի Թողնիր Թուրքի գնդակով զուր գնամ կորչեմ
Եա՛ր արի, տուն արի, շուտ արի բլբուլն եմ,
Սարերի գիւլն եմ։

187 ԽՆՈՒՍԻՑ ԳԱԼՈՂ

Խնուսից գալող հայ զինուորները քաջ,
Արեան դաշտից եկած և պարտաճանաչ,
Հին-հին վրէժներ առնել էր նրանց պահանջ,
Քաջի պէս վազեցին Թշնամու առաջ։

Մօտ Թւով տասն ու չորս և իրանք անվախ,
Ղեկավար Տիգրանն էր, գործում էր անկախ.
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին գիրք։
Թաթօն ընտրեց Մօսոյ, Շապուհ և Մխիկ,
Անուանուեցան սրանք խմբեր Թռուցիկ,
Խարխուլ Թաղի դիրքերումը միշտ անքուն,
Այրեցին ջարդեցին անգութ մօլի տուն։
Վրաստանի շքեղ Թիֆլիս քաղաքը,
Չէր ճանաչում կանխաւ իրա որդոցը
Երբ նրանք Մուղնու Թաղում կանգնեցան.
Այն ժամանակ հայերն ուրախացան։
Թէպէտ քաջ Մուշեղին նրանք զոհ տւին,
Անգութ Թշնամեացը շուտով յաղթեցին,
Կ՚լինի ազատութեան գրաւական,
Նրանք պատիւ բերին հայ Դաշնակցութեան։

188 ԽԱՆԱՍՈՐԻ ՄԱՐՏԸ

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,
Ֆիդային էր դաշնակցական վրէժ լուծում հովտումը։
Սոսկած քիւրդը քնաԹաԹախ մարդիկցին,
Չեր երազում ջնջել իսպառ ֆիդայիցը լուսաբացին։
—Եաման, Աստուած, ֆիդան եկաւ ուր փախչենք.
Ասաց, որդուն կրծքին սեղմած լեղապատառ բրդուհին։
Մի վախենար, հանգիստ կեցիր, բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ ֆիդան։
Մի ժամւայ մէջ Մազրիկ ցեղը ջնջւեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկւեցաւ։
Փչէ՛ր զեփիւռ, դէպ Աստուած մենք Թռչենք,
Դիրքեր բռնենք, պաԹայ հալւայ ձիւնի ջրով ճաշակենք։
Մերթ կռւում է, մերթ բարձրանում քաջ ֆիդան,
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան։

Չ'կար Կարօն, տխուր պատեց ամենքին,
Երանի է նրա հոգուն, որ զոհ դարձաւ այդ կռւին։
Քեզ ենք յանձնում ով պաշտելի Առաւել,
Կրծքիդ մէջը ամուր պահի անմահ զոհերն հայերուն։
Հայեր, յիշէք նւիրական այն օրը,
Յուլիս ամսի քսանհինգին կատարեցէք այս տօնը։

---

189 ԹԱԹՈՒԼԻ ԲՐՈՋ ԵՐԳԸ

Եղբայրս Թիւրքի բանտում,
Արև, լոյսի կարօտով,
Վա՜յ իմ սև օրերին, վա՜յ,
Ես ինչպէս հագնեմ կապեմ,
Նաշխուն շորեր նարօտով.
Աւա՜ղ, իմ սև օրերին, աւա՜ղ,
Ես զարդ ունիմ սարերով,
Թողէք վառեմ ցաւերով,
Վա՜յ անբաղդ եմ, վա՜յ անբաղդ,
Ահա տարին լրանում է,
Չեմ ստացել մէկ նամակ,
Վա՜յ իմ սև օրերին, վա՜յ,
Տխուր ու տրտում սիրտս,
Չունի ուրախ ժամանակ,
Աւա՜ղ իմ սև օրերին, աւա՜ղ,
Ես կրակոտ երգերով,
Թողէք վառւիմ դարդերով,
Վա՜յ անբաղդ եմ, վա՜յ անբաղդ։
Ես ինչպէս ուտեմ խմեմ,
Երբ նա բանտում ծարաւ է, քաղցած,
Վա՜յ իմ սև օրերին, վա՜յ,
Ես ինչպէս խնդամ, պարեմ,
Մի՞թէ խիղճըս է մեռած,
Աւա՜ղ իմ սև օրերին, աւա՜ղ.
Առանց նրան ո՞նց մնամ,
Լաւ է մեռնեմ վերջանամ,
Վա՜յ անբաղդ եմ, վա՜յ անբաղդ։

Յանրատ

190 ԿՌՈՒՆԿԻՆ

Բարով եկար սիրուն կռունկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս,
Խօսիր ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կ'նւիրեմ ես քեզ։
Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարուած գոյնը,
Նորա սիրուն տանջւում եմ,
Աչքերիցս կտրաւ քունը։
Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը.
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի կորիւնի նետերը։
Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կա՜ն,
Եդեմական դրախտավայր,
Նա կոչւում է Հայաստան։
—Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ի՞նչ կողաներ ի զուր,
Արի՛ անեմ իմ թևերուն.
Գնանք այնտեղ ուրախացուր։

....

191 ԻՄ ՍԻՐՈՒՀՈՒՍ

Սիրուններ դուք մի՛ք նեղենայ,
Մշտական եմ եարս եմ գովում.
Մի՛ք նախանձուի, մի՛ք զարմանայ,
Որ պատուական եարս եմ գովում.
Թէկուզ լինիք աստղ ու լուսին,
Անդաւաճան եարս եմ գովում.
Ինչ կայ նրան այն չկայ ձեզ,
Իմ աննման եարս եմ գովում։

Դուք խեղճերու արհամարհող,
Հարստութեան երկրպագող,
Պար ու խնջոյք—շռայլութիւն,
Աննպատակ ցոփ կեանք սիրող,
Կեանք մեռցնող կորուստներով,
Զարդի համար հոգի տուող,
Այդ բոլորին արհամարհող,
Իմ գիւղական եարս եմ սիրում։
Ձեր զէնքերը արդուզարդն է,
Յառաջ եկէք շորով ոսկով,
Աշխատէք որ մարդ գրաւէք,
Անբնական շինծու խօսքով,
Բնութեան չէք դիմանայ,
Խիստ աղքատ ու խեղճ էք գործքով,
Գործքով պահանջիս համաձայն,
Ինձ օգնական եարս եմ գովում։
Զարդամոլ կուռք, կանացի
Սիրտ, ոսկոյ մարգարտի ղուլ չէ,
Իսկական իւր փոքրերուն մայր,
Տնտեսական գործին ծոյլ չէ,
Փչած տիկ—ծակլտան տիկին—
Ների նման անգործ թոյլ չէ,
Գործքով եռուն, կազմով առողջ,
Իմ սիրեկան եարս եմ գովում։
Իւր մարդուն դրամը տալով,
Մեծ բարեգործ չէ ձեւանում,
Հօր կարողութեան արդիւնքով,
Բարերար չէ հանդիսանում,
Իւր շնորհ—ձիրք ու տաղանդով,
Փող աշխատում արցունք սրբում.
Դրա համար անուշ ազնիւ,
Իմ գիտնական եարս եմ գովում։

Ֆահրատ

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

192 Ա՜Խ ՏՒԷՔ ԻՆՁ

Ա՜խ, տուէք ինձ քաղցր մի քուն,
Կեանքից հեռու սլանամ
Այն աշխարհը, ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ։
Բնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բոյր զւարթագին,
Ծծեմ անվերջ ես անյագ։
Եւ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջէ,
Մի թարմութիւն եդեմային,
Զորս բոլորքս տարածէ։
Եւ ինձ ժպտի արշալուսին,
Գարնան մատաղ արեգակ,
Եւ գիշերով իմ ճակատին,
Խաղայ գողտրիկ վառ լուսնակ։
Եւ աչագեղ կոյսն ականջիս
Իւր մեղեդին նուագէ՝
Եւ հերարձակ սիրով վզիս
Փարէ, մեղմիկ փաղաքշէ...

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, չյագենամ...
Ա՜խ, տուէք ինձ քաղցր մի քուն,
Հեռու, հեռու սլանամ...

Յ. Յովհաննիսեան

193 Ա՛Յ ԻՄ ՍԻՐՈՒՆ

Ա՛յ իմ սիրուն, հազա՜ր սիրուն,
Դրախտի խնձո՜ր, աղուշ-մաղո՜ւշ.
Ա՛յ եղէգնի շաքար ծորուն,
Բայց նրանից քաղցր ու անուշ։
Սիրուններում ընտիր սիրուն,
Ի՛նչ լաւ Աստուած է քեզ գծել.
Կաթնով շաղուած են մոլորուն,
Քո թաքցրած շամամ ծծեր։
Եա՛ր, կըմեռնես—կը գայ օրը—
Ծոցդ երկինք չես ղրկելու.—
Ծիծուն կուտէ այդ բոլորը,
Մի՞թէ ինձ ես լոկ զրկելու։

Ն. Քուչակ

194 Ա՜Խ ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Ա՜խ, իմ սիրեկան, ինձմէ հեռացար,
Քեզ ի՞նչ գէթ արի, որ ինձ մոռացար,
Վերջդ թէ էդ էր, էլ ո՞ւր մօտ կացար,
Քու սրտի սէրը ինձ ո՞ւր խոստացար։
Սուր էշխիդ նետը սրտիս խփեցիր,
Քո սիրոյ կրակը ջանս գցեցիր։
Սրտիս վէրքերին մըհլամ չը քսեցիր,
Էրուած ու խորուած, մոտէդ քցեցիր,
Արի՜ սիրեկան, ինձ մէ ռահմ արա,
Երեսդ մի՛ շուռ տուր, ինձ մախկ արա,
Խղճա՛, քո ղուլին, մէ ականջ արա,
Քո քաղցր ձէնին ինձ արժան արա։

195 ԳԻՇԵՐ ՑԵՐԵԿ

Գիշեր ցերեկ մորմոքում եմ, ի՞նչ անեմ.
Կարօտդ քաշում եմ տարով նազանի,
Հանգիստ չունիմ, անդադար եմ քեզ համար,
Յուսերս թեթեւցուր սիրով, նազանի։
Մէկ տեսքդ տեսնողը քեզնից կամաչէ,
Ծանօթացի՛ր, սիրականիդ ճանաչէ,
Հագածդ զգեստդ ալ ու կանաչ է,
Փաթաթուել ես ճերմակ շարով նազանի։
Թալալօղլին խմեց երազումը թաս,
Քաղցրանուս, դու մեզի անուշ բարև տաս,
Երանի այն օրւան, որ մեր տունը գաս,
Պըտուիմ գլխովդ բարով, նազանի։

196 ԱՂՋԻԿ ԱՐԻ՛ ՄԷԿ ՊԱՉ ՏՈՒՐ

Աղջիկ արի՛ մէկ պաչ տո՛ւր, ջանիդ մատաղ,
Ես մեռնում եմ, քեզ ու քու նանիդ մատաղ,
Մատներումդ ոսկէ մատանիիդ մատաղ,
Նախշ ես անում քարգահ ու բանիդ մատաղ,
Կարմիր սուրաթ՝ սպիտակ կուլ չանիդ մատաղ։
Լաւութիւնը լաւ կուլի աշխարհումս,
Քեզանից աւել էլ ճար չունիմ ճարումս,
Թէ մարալ ես, ե՛կ մա՛ն արի սարումս,
Ես կաղնած եմ իմ տուած իղրարումս,
Հարսանիքդ կու նստի այս տարումս,
Ծծիդ վրէն կախած նշանիդ մատաղ։
Աշխարհումս չի ճարւիլ քո դօլիցը,
Թէկուզ բերեն Հինդ ու Ստամբոլիցը,
Խելքս գնաց՝ դուրս եկար էն ղօլիցը,
Ջէյրանի պէս տեսայ եկար չօլիցը,
Կաքաւի պէս ձայն ես տալիս քօլիցը,
Անուշ խօսքիդ՝ ճարտար բերանիդ մատաղ։

Ես քեզ համար մեռած եմ Թաղուածի պէս,
Գիշեր ցերեկ մալուլ եմ շաղուածի պէս,
Խելքս գլխէս դառել է քաղուածի պէս,
Զիգեարս էլաւ Նարին մաղուածի պէս,
Նարգիզ, սուսան, սըմբուլ ես քաղուածի պէս.
Բեր հոտ առնեմ վարդ ու բեհանիդ մատաղ։
Էշխի բանը խոմ գիտե՞ս ինչպէս կուլի,
Մինչի իրան հասնի ջանը կէս կուլի,
Մէկ պաչ չի տաս, Թէհրանը ինձմէն դէս կուլի.
Երկնքի մալաեքները քեզ պէս կուլի,
Ապա տեսնենք ում հագուստը էդ պէս կուլի,
Կարմիր շապիկ կանաչ մինթանիդ մատաղ։
Թէ բլուլբիւլ ես, բաս ինչո՞ւ չես բաղումը,
Կարմի՛ր վարդ ես, բաց էլած եարփաղումը,
Լուսնեակ ես չարխի մաղալլաղումը,
Կայսերի պէս կանգնել ես օթախումը,
Միսկին-Բուրջուն պահել մի դուԹաղումը.
Թամբահ արա, Թո՛ղ՝ քու դիւանիդ մատաղ։

---

197 ԱՍՏՒԱԾԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿԻՆ

Աստուածածնի սուրբ կիրակին,
Արևը դեռ չէր ծագել,
Գեղեցկուհին իջաւ այգի,
Կանաչ-կարմիրն էր հագել։
Եւ մանրաքայլ, յուշիկ-յուշիկ,
Պատրուսներին նա անցաւ,
Քաղեց խաղող-մեղր անուշիկ,
Շար շըմաթի մէջն ածաւ։
Բայց շըմաթը վեր քաշելիս,
Նրա տակից լուս ցօղաց—
Արև չը կայ, մէզն է լալիս,
Ինչո՞ւ այգին շողշողաց...

Իսկ խաղողը—այ դաւաճան—
Խայտաց ծոցում խնԹի պէս.
Լեզու առաւ, կանչեց «ջա՛ն, ջա՛ն,
Մուրազս առայ վերջապէս։
Լաւ է մի ժամ ինձ այս անուշ
Ծոցում քաղցր տրորել,
Քան մայր-ճիւղիս վրայ մուշ-մուշ,
Տարիներով օրօրուել»։

Ն. Քուչակ

---

198 Ա Ր Ա Զ

Արազն եկաւ լափին տալով
Ժեռ քարերին ափին տալով,
Ո՞րտեղ Թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս, տափին տալով։
Ա՛յ իմ Արազ, ջուրդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսա՞ր,
Ես չհասայ իմ մուրազիս,
Արա՛զ, եարաբ կարօտս առա՞ր։
Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,
Աստուծ սիրես, էրուած սրտիս,
Զուղապ բերես եկող տարին։
Գիշերն անքուն գիր կ'գրեմ,
Արտասուքս դետ կը շինեմ,
Արազ ծէգը ջրիդ չառած,
Իմ սև դարդը քեզ կ'բերեմ։
Կասես շողքը քարին ընկաւ,
Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ,
Կամար ունքից, Թուխ աչքերից,
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ։

Յ. Յովհաննիսեան

---

199 ՍԻՐԵԼԻԴ ԻՆՁ ԱՏԵԼ ԵՍ

Իմ սիրտս աղ ես արել,
Ջիգյարս դաղ ես արել,
Ինձանից հեռացել ես,
Ինձ բեզարմաղ ես արել։

Ինձ տեսնելուս տխուր բարով
Խորհուրդդ տաս գրով,
Ինձ հօ մորթել չես սրով,
Անսուր մատաղ ես արել։

Դու ես իմ սիրահարը
Բաշկա տանեմ քո ճարը,
Գլխիս տվել ես քարը,
Կիսակենդան ես արել։

Ի՞նչ է տամ իմ մեղը,
Հալվել է սրտիս եղը,
Երկու ծծիդ մեջ տեղը,
Բաղչա ու բաղ ես արել։

Շատ մարդկանց ես խաբել
Սիրուցդ ես եմ կրակվել,
Ինձ հօ թոկով չես կապել,
Ամա դուսաղ ես արել։

Դու ես իմ սիրականս,
Մի մաշիլ ջիւան ջանս,
Երեք տարվա դուշմանս,
Նոր բարեկամ ես արել։

Սիրելիդ ինձ ատել ես,
Ատել ես նախատել ես,
Ջիգյարս կտրատել ես,
Արնաշաղախ ես արել։

Մայիլ եմ դօշիդ խալին,
Անուշ խելք ու քեամալին,
Խղճալի Գուրջիմալին,
Կարկտահար ես արել։

200 ԳԻՇԵՐ ՑՈՐԵԿ ԿԸ ՀԱՌԱՉԵՄ

Գիշեր ցորեկ կը հառաչեմ, ա՛խ, օրիորդ քո սիրոյդ
Սև աչքերուդ վարդ այտերուդ զարնուեցայ, ի՜նչ օգուտ,
Աչքերուդ այտերուդ և ոսկէթել մազերուդ,
Միայն քեզի սա կ՚աղաչեմ որ ունենաս քիչ մը գութ։
Գիտես, անգո՛ւթ, որ իմ սիրտս չի դիմանար այս ցաւուն
Քեզի համար ալ չի դադրիր աչքիս արցունքն օրն ի բուն,
Քեզ միայն կըյիշեմ թէ քուն ըլլամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ միտքս կուգաս նոյնպէս և առաւօտուն։
Շատ աղւորներ թէև տեսայ, սիրտս միայն քեզ սիրեց,
Ո՛հ, չեմ գիտեր, ըսէ ինձի, թէ քու սրտիդ ո՞վ տիրեց,
Ա՜խ քո խաթուն բարի մայրիկդ իրեն փեսայ ո՞վ ընտրեց,
Գերի կըլլամ քու մօրկանդ, եթէ զիս զուրկ չի ձգեց։

Ուրախ էի, գիտե՞ս օր մը ես քեզի նստեցուցի,
Սա՛ ներսիդիս ինչ կայ չկայ, ամենքն ալ հասկցուցի,
Անոյշ բոյրդ զիս թովեց, քենէ վարդ մը փրցուցի,
Այն ինչ օր էր, ինչ ժամանակ, խելքս գլխէս թռցուցի։

201 ԳՆԱ՜Ց ԳՆԱ՜Ց

Գնա՜ց, գնա՜ց, սիրելիս գնա՜ց,
Է՛լ մի որոնէք, էլ մի փնտրէք,
Ա՜խ, նրան ո՛վ էր ճանաչում,
Նրա քաղցր ձայնն էլ ո՞վ է լսում.
Հիանալի էր նա, գեղեցիկ էր նա,
Նորա պէս սիրելի էլ ո՞վ կունենայ։
Ա՜խ սիրուն դու իմ սիրահար,
Է՛ր այդպէս գնաս սիրտ իմ մորմոքես,
Արի՛, սիրուն խնդրում եմ քեզ,
Աղաչում եմ քեզ խղճա՛ վիճակիս,
Հիանալի ես դու, գեղեցիկ ես դու,
Քեզանից սիրուն չեմ ունենալու։
Ի զուր այնպէս գգուեցի նրան,
Ինչպէս զեփիւռը ծաղիկ գարնան,
Ո՛հ քանի անգամ ժպտալով նրան,
Նրան տարուեցայ ջերմ համբոյրներով...
Էլ ի՞նչու ապրեմ մինչդեռ նա գնաց,
Նրա մահից յետ լոկ կսկիծ մնաց։

202 ԲՈՅԸԴ ԲԱՐՁՐ

Բոյըդ բարձր սարի չինար,
Աչքդ նախշուն, ունքդ կամար,
Դուն ստեղծուել ես ինձի համար,
Անգին ծաղիկ ես նոր բուսած։
Գոյնդ նման է մարմարի,
Հագիդ շորերն է յարմարի,

Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։
Քեզ տեսնելը ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ քեզ տամ պահէ,
Ինձնում եղած ինձ ինչ շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։
Գիշեր ցերեկ նստած լալով.
Աղի արտասունք թափելով,
Ինձ թողել ես տանջելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։
Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ փրկչին
Որ չը կտրէ յոյսն իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։

203 ԴԱՐԴԸՍ ԼԱՑԷ՛Ք

Դարդըս լացէք, սարի սըմբո՛ւլ,
Ալուան-ալուան ծաղիկներ.
Դարդըս լացէք, բաղի բըլբո՛ւլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...
Երկինք-գետինք գըլխուս մըթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Եարիս տարա՛ն — ջանիս տարա՛ն,
Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես...
Ա՛խ, եարս ինձի հանեց սըրտէն,
Անճար թողեց ու գընաց.
Սըրտիս սուգէն-խորունկ եարէն,
Անդեղ թողեց ու գընաց...
Դարդըս լացէք, սարի սըմբո՛ւլ,
Ալուան-ալուան ծաղիկներ.
Դարդըս լացէք, բաղի բըլբո՛ւլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...

Աւ. Իսահակեան

204 ՈՒՍՏԻ ԿՈՒԳԱՍ

Ուստի կուգաս, ղարիպ բըլբուլ,
Դու մի լաց լի, ես եմ լալու,
Դու վարդ փնդռէ ես գօզալին, —
Դու մի լաց լի, ես եմ լալու։
Արի, բըլբուլ խօսի բառն,
Օխնէի քու էկած սարն,
Քե վարդ էրեց, ինձ իմ եարն։—
Դու մի լաց լի, ես եմ լալու։
Ման եմ գալի դիդարի հետ,
Վունց ղարիպ բըլբուլը եարի հետ,
Դու վարդի հետ ես եարի հետ,
Դու մի լաց լի, ես եմ լալու։
Սալրիի նման կանաչ եմ,
Արի, խօսի, ձայնդ ճանաչեմ,
Դու վարդ կանչի, ես եա՛ր կանչեմ,
Դու մի լաց լի, ես եմ լալու։
Ղարիպ բըլբո՛ւլ, ձայնիցդ մալում,
Ես ու դու էրվենք մէ հալում,
Սայաթ-Նովէն ասաց՝ զալո՛ւմ
Դու մի լաց լի, ես եմ լալու։

205 ԴՈՒ ՉԵՍ ՀԱՒԱՏՈՒՄ

Դու չես հաւատում թէ քեզ եմ սիրում,
Թէ գիշեր ցերեկ անքուն անհանգիստ,
Միայն քեզ համար մտածում եմ միշտ,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում։
Թէ քո վառ սիրով ես հիւանդ պառկած,
Ուժս սպառած լեզուս չորացած,
Ասեմ քո սիրոյն հոգիս կաւանդեմ,
Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ։
Բայց եթէ յանկարծ ես խելագարեմ,
Ձեռներս ծոցիս փողոցներ շրջեմ,

Եւ սիրոյ երգը երգեմ սգալով,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում։
  Վերջապէս թէ քո սէրը յաղթելով,
Սպանէ յանկարծ վերջին շունչս տալով,
Քեզ համար միայն արիւնս թափեմ,
Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ։
  Թէ սառ դիակս ամփոփուած լինի,
Մի քանի չոր չոր տախտակների մէջ,
Ընկերներս տանեն դագաղս դրկած,
Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ։
  Ամէնքը դառն արցունք թափելով պիտի,
Ինձի համբուրեն հրաժեշտ տալով,
Դու չես մօտենալ գէթ վերջին անգամ,
Բարեւ տալու մինչև յաւիտեան։
  Ծնողք բարեկամք երկինք և երկիր,
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,
Որ սիրեմ անկեղծ դու էլ ինձ սիրես,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում։
  Երբ սև լուսին խաւարի յանկարծ,
Երբ ինձ իջցնեն խաւար գերեզման,
Գերեզմանիցս էլ մի ճիչ կարձակեմ,
Որ քեզ եմ սիրում էլ չես հաւատում...

---

206 ՈՎ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ

Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար
    քաշում է փափագ, ով սիրուն սիրուն,
Չի լինիլ քեզ պէս ամենայն երկիր
    փայլուն արուսեակ, ով սիրուն սիրուն,
Կ'ստանաս համբաւ, քիչ էլ սպասէ,
    կուգայ ժամանակ, ով սիրուն սիրուն,
Փառք ու պատիւդ քեզի կ'յանձնեն
    քոյրիդ նմանակ, ով սիրուն սիրուն,

Եղեմեան ծաղիկ, հայրենի հոգով
    սնուած մանիշակ, ով սիրուն սիրուն,
Հոգիդ անարատ, տեսքդ գերազանց,
    մէկ հատ օրինակ, ով սիրուն սիրուն։
  Սրտիս ու հոգույս մխիթարութիւն
    քեզանով է միշտ, ով դեղատու կին,
Յոյսս դրած եմ ես բոլորովին
    սիրելոյդ վերայ Աշխարհատիկին,
Ազնիւ թագուհի շնորհօք լեցուն,
    այցելութիւնդ է մեզ կաթողին,
Զարգացած մաքով Եւրոպացու պէս,
    թէև ասում են քեզ ասխածին,
Փնտռում են քեզի շատ սիրահարներ
    աշխարհիս մէջը սրտով լալագին,
Բացի քեզանից թէ լոյս էլ լինի,
    չէ մեզ ընդունակ, ով սիրուն սիրուն։
  Ի՞նչ կլինի արդեօք արժան համարես
    դէպի մեր կողմը գաս այցելութեան,
Փափագդ քաշող տեսնում ես շատ կայ,
    պատկերդ ցոյց տուր լինինք բաւական,
Քեզ սիրողներուն դու մի չարչարիր,
    քիչ խնամք արա, անոյշ սիրական,
Լո՛ւր պաղատանքս, ով իմ սիրուհի,
    վիրաւոր սրտիս տուր դեղ ու դարման,
Ո՛չ դու մեզի պէս կարող ես գտնել
    և ոչ մենք քեզի մէկ համանման,
Դու մեզ թագուհի մինչև յաւիտեան,
    մենք քեզ հպատակ ով սիրուն սիրուն։

Ջիւանի

---

207 ԻՄ ՍԻՐԱԿԱՆԻ ԿԱՐՕՏԻՑ

Իմ սիրականի կարօտից տարուած՝
Տեսայ փողոցում նրան իմ դիմաց,
Ծով-ծով աչքերը գետին խոնարհած,
Շիկնած, ամօթխած բարևեց կամաց։

Եւ ինչպէս շոգում՝ սառը աղբիւրին
Հանդիպի յանկարծ ծարաւած ճամբորդ,
Հըպի շըթունքով կենսարար ջրին
Եւ ծծէ ագահ այն ջրից յորդ-յորդ.
Ես խենթի նման նարիս գրկելով
Պինդ-պինդ պաչեցի աչքերը խորին.
Վա՜յ ինձ — նա գնաց լալով, կրկնելով
«Խայտառակ եղայ օրը կէսօրին»։

Ն. Քուչակ

208 ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

Հանդիստ իմ անուշ, անցար գնացիր,
Միայն վէրքն անբոյժ սրտումս թողեցիր.
Սոխակ գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում։
Բեղանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի.
Ցերեկը մենակ փակուած սենեակում,
Ողբում եմ անյագ ոչ ոք չէ լսում։
Գիշեր է գալիս մահիճ եմ մտնում,
Տրտում է հոգիս քունս չէ տանում.
Մազերը թուխ երկայն, աչերը գրաւիչ,
Ի՜նչ հասակ ինչ ձայն, ինչ հոգի կտրիճ։
Ո՜հ, սիրտս այրւած ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ եմ յիշում,
Անգութ ինձ խաբեց, ուրիշին սիրեց,
Ա՜խ, նա ինձ դեռ վաղ, պատրաստեց դագաղ։

Ս. Շահազիզ

209 ՍԵՒԻԿ ԱՉԵՐ

Վրդովեցիր խաղաղ կեանքս սիրական,
Անցուդարձովդ ինձ նայելով մշտական,
Չէի տեսել մէկ հոգեհան քեզ նման,
Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր։

Ի՜նչպէս մնամ ես առանց քեզ միայնակ,
Դուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,
Ակնարկելով գաղտնի ամէն ժամանակ,
Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր։
Անուշ անուշ խօսալովդ սիրուն կոյս,
Մաշուած սրտիս նորից տուիր կեանք և յոյս,
Առանց գինոյ արբեցուցիր խղճալոյս,
Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր։
Սիրոյդ սուր սուր նետերովը խոցւեցայ,
Իբրև ծաղիկ դեռ չբացւած գոցւեցայ,
Երբ քեզ տեսայ՝ կրակովդ լեցւեցայ,
Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր։
Սիրոյդ լարը պարանոցէս տուիր կախ,
Օր ու արև չունիմ գործս է ա՜խ ու վա՜խ,
Կրկին խօսէ գոնէ լինիմ ես ուրախ,
Սեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ ստէպ աշեցիր։

Ջիւանի

210 ՄԱՔՈՒՐ ՍՐՏՈՎ

Մաքուր սրտով, մտորուն
Դաշտիցը տուն դառնալիս՝
Յանկարծ տեսայ վառվռուն
Արեգակի պէս նարիս։
Իսկոյն անցաւ իմ մտքով.
«Արի, սրան տամ մի պաչ»,
Բայց նա սաստեց ինձ ունքով,
Խորհրդաւոր շըշընջաց.
«Մեր տուն կը գաս երբ մթնի, —
Հայրս ժամ է գնալու,

Մայրս էլ տուն չի մնի,
Հիւր է այսօր մնալու։
Հէնց որ անցար դռան շէմ՝
Իմ ծոցը քեզ կը բանամ,
Ինքան պաչեմ, պաչպչեմ,
Որ վերջապէս կշտանամ»։

Ն. Քուչակ

---

211 ՍԻՐԵՑԻ ԵԱՐԸՍ ՏԱՐԱՆ

Սիրեցի, եարըս տարան.
Եարս տուին ու տարան,
—Էս ինչ զուլում աշխարհ է,
Պոկեցին սրտս ու տարան։
Ցաւըս խորն է ճար չը կայ,
Ճար կայ, ախ, ճարող չը կայ.
—Էս ինչ զուլում աշխարհ է,
Սրտացաւ ընկեր չը կայ։
Լաւ օրերը գընացին,
Ափսոս տարին, գընացին,
—Էս ինչ զուլում աշխարհ է,
Սև դարդերը մընացին...

Ալ. Ծատուրեան

---

212 ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս, ասում եմ ես ախ,
Հալվում եմ հալվում, օտարութեան մէջ,
Ա՜խ, սիրտս խորովում ցաւիս չկայ վերջ,
Երբ կարմիր գինին բաժակումս ածած,
Սեղանիս վերայ առաջս է դրած,
Աչքս ակամայ վերան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում։

Տեսնում եմ և, ախ, միտքս է մոլորվում,
Դառն արտասունքով աչքս պղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհը մթնեց,
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց։
Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կը տեսնեմ,
Էն սև-սև աչերը՝ սև ունքով պատած,
Կարծես՝ երկնային ղալամով քաշած։
Էն սև-սև աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին՝ դժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կրակի էրուած, խորոված։
Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբ որ ձեր կարմիր թշերը տեսնում։
Բլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թռչում է, թռչում, ամպերում կորչում,
Եւ իր Արարչին տեսածն ասելիս,
Փառք քեզ, Տէր Աստուած փառք քեզ է կանչում։
Հայոց աղջիկներ՝ ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բէդամաղ կ'անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորված եմ ես։
Մոլորված եմ ես օտար աշխարհում,
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման.
Հայոց աղջիկներ՝ դուք էք աննման,
Ձեր սէրն է միայն սրտումս պահած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միայն էս կեանքս մաշւած,
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի։

---

213 ԷՆ ՄԻ ՊԱՉԸ

Էն մի պաչը, որ ինձ տուիր վերջապէս
Քո բերանով, սրտի կամով ու տաք-տաք,
Չէ պարգևել անուշ պտուղ նրա պէս
Տիեզերքի դեռ ոչ մի ծով, ոչ ցամաք։
Նա անուշ էր դրախտի տուած էն պտղից,
Որ վիճակւեց մեր նախահայր Ադամին.
Նա ուտելուց թէպէտ զրկւեց սուրբ տեղից,
Բայց մինչև մահ կարօտ մնաց էն համին։

Ն. Քուչակ

---

214 ՍԻՐԱԿԱՆԻ ԳԱՆԳԱՏԸ

Ես քեզ սիրի, որ դու ինձի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգով մարմնովդ խարկես,
Անիծեմ, տաս տարի տեղումդ պարկես,
Եօրղանի մէջ տնքայ կողերդ, աղջիկ։
Ում հետ էլ որ երթաս՝ հետդ չվարւի,
Պառկելուդ օրը՝ քողքդ սև կարւի,
Հօրդ տուն ու դուռը սև քարով շարւի,
Ա՛խ ու վախով մնայ ախպէրդ, աղջիկ։
Մօրդ լեզուն ուռի, բերանը փակւի,
Քառասուն օր տանջւի՝ հոգին չը քակւի,
Ինձնէն ղայրի հետդ ով որ պառկւի,
Իրեք օր չը վելէ սէրդ, ա՛յ աղջիկ։
Զ'գտնես խամ կտաւ էնես արխալուղ,
Էն բոլ աշխարհքի մէջ օրդ անցնի սուղ,
Հացդ կորեկ էղնի, գարին հետը կուղ,
Օձի պէս սակաւի քո կերդ, աղջիկ։
Ես մի խեղճ տղայ եմ, էրի քեզ գիւման,
Աստուածածինն էնէ քու մօրդ դիւան,
Իր կենաց մէջը նա՝ չունենայ սաղ ջան,
Որ ինձ էրաւ տնից դարբէդար աղջիկ։

Պատճառն ինչ էր, որ չ'հաւնաք դուք ընձի,
Կարծա էք դովլաթի, փափագ էք գանձի,
Առաջ խօսք տուողի լեզուն պապանձի,
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ։
Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,
Բեզի ընձնէն էրաւ քու քեաֆիր մէրդ,
Խնդրում եմ շատանայ վէրքերդ, աղջիկ։
Ես Ջուլալ-օղլին եմ, դարդովդ եմ կեցի,
Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի,
Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ աղջիկ։

---

215 ԹՈՂԷՔ ՈՐ ԳՈՌԱՄ

Թողէք որ գոռամ, գոռամ աշքարա,
Թո՛ղ աշխարհ ցնցւի իմ աղաղակից.
Հէյ քրիստոնեայ մարդ, խելքը գլուխդ արա,
Զգուշացիր սիրոյ ահեղ կրակից»։
Սէրն է աւազակ անսիրտ մոլեգին,
Աւազակ է նա ձեռն ու ոտ ունի.
Բայց դուք նայեցէք էն աւազակին։
Նա չունի ձեռին, կ'խփի, կ'սպանի։
Վա՛յ, կամաց-կամաց իմ ջանը մտած՝
Առանց գրողի հոգիս է հանում.
Չեմ ուզում գնալ, պողպատս չաթած՝
Անսիրտն, անհոգին զօրով է տանում։

Ն. Քուչակ

---

216 ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

Պաղ աղբիւրի մօտ կանգնած մի աղջիկ,
Ձեռին սափոր առած, ջուրն էր անուշիկ,
Աչք ու ունքը ղալամով քաշած գեղեցիկ,
Մայրիկ, զարմանեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

Պաղ աղբիւրի մօտը պարտէզում նստած,
Ունէինք լաւ գինի, գառան խորոված,
Երգում էին ու պարում աղջկերք բոլորած,
Մայրի՛կ զարնւեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։
Ման էր գալիս ընկերներով միասին.
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին,
Մազերն ոսկէգոյն ճակատը լուսին,
Մայրի՛կ, զարնւեցայ սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։
Ցերեկը անդադար նորան եմ յիշում,
Գիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում,
Տոչորւած ման կուգամ խեղճ մոլոր տրտում.
Մայրի՛կ, զարնւեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։
Երանի այն աւուր հազար երանի,
Տեսութեան ես կրկին լինիմ արժանի,
Առանց նորան երբէք չեմ մնայ կենդանի.
Մայրի՛կ, զարնւեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

Ջիւանի

217 ԿԱՊՈՅՏ ԵՐԿՆՔՈՒՄ

Կապոյտ երկնքում,
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը,
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Է արեգակը։
Կանաչ դաշտերում
Եւ այգիներում՝
Ծաղիկներ կան շատ,
Բայց չէ ոչ մինը

Վարդի նմանը,
Նա է բնութեան զարդ։
Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,
Ամեն տեղ շատ կան.
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակի է նման։

218 ՍԵՒ ԱՉԵՐԷՆ

Սև աչերէն շա՛տ վախեցի՛ր,—
Էն մութ, անծէր գիշեր է.
Մութն ա՛հ է, չարքեր շա՛տ կան,—
Սև աչերը մի սիրէ։
Տե՛ս իմ սիրտըս.—արուն-ծով է,
Էս չարքերը զարկեցին.
Էն օրւանէն դադար չունիմ,—
Սև աչերը մի սիրէ...

Աւ. Իսահակեան

219 ՂԱՐՍԵՑՈՑ ԵՐԳԸ

Ես վերէն կուգայի՝ դուն դուռը բացիր,
Ձեռքդ ծոցդ տարար՝ ա՛խ էլիր լացիր,
Ես էլ քեզի չառայ՝ տունը մնացիր,
Գընը՝ ղալլի խային, եար չեղար ընձի։
Ես սարէն կուգայի, շլակս բուրդ էր,
Վեզուդ ընձի համար վառած քուքուրթ էր,
Բօյդ ղարղու ղամիշ, յէրեսդ թուխթ էր,
Գընը՝ ղալլի խային, եար չեղար ընձի։
Երկինքը ամպեր էր, ի՞նչ անուշ թոն էր,
Էկայ դունէն անցայ, Զանանս հոն էր,
Էրեցայ-վառեցայ, էս ի՞նչը տուն էր.
Գընը՝ ղալլի խային, եար չեղար ընձի։

Էսօր շարաթ էղնէր, էգուց կիրակի,
Եարս գունէն անցնէր էրթար կրակի,
Լիզուն բանիք էղնէր, ծոցը փռանկի.
Գրնը՝ դալլի խային, եար չեղար ընձի։
Լեղուղ աշնայ իս՝ մօքդ խային.
Գլօխս առնիմ էրթամ վրր յէլման չային,
Մատմթ, հասէք Անդրէասի հաւարին,
Եար, մարամդ էն է օր՝ սպանիս ընձի։

220 ԵՐԿԱՐԻՐ ԳԻՇԵՐ

Երկարիր գիշեր. մեծ տարի դարձիր,
Դաժան, սև խաւար, իջիր, թանձրացիր,
Իմ մուրազն առայ այսօր իրիկուն—
Վերջապէս եկաւ հիւր, եարս թագուն։
Եօթ սարի յետև կանգնիր, արշալոյս,
Թէ չէ կը փախցնէ սիրածիս քո լոյս.
Թող յաւէտ այսպէս խաւարում մնամ,
Միայն եարս միշտ կրծքիս ունենամ։

Ն. Բուչակ

221 ՇՈՒՇԱՆ ՋԱՆ

Շուշան ջան քեզ համար՝ կեանքս կէս էլաւ,
Քու սրտի շահելը ոչնչով չէլաւ.
Ի՞նչ գէթ եմ արել քեզ, ասա, իմ հոգիս,
Ոտներդ կ՚ընկնեմ՝ մեղայ կուգամ քեզ։
Էտէնց էլ քարասիրտ չը պիտի էլնես
Անմեղ տեղը մարդուս՝ հալ ու մաշ անես,
Ի՞նչ ես ասում իժում քու խղճմտանքիդ,
Թէ որ մատաղ անես գլուխս՝ պատկերքիդ.
Ի՞նչ կուլի մէ ձէն տաս, ով իմ հոգեհան,
Մի սիրտս խիթարես՝ չը դաղես էդքան,
Քու անուշ բերանի մի համով խօսքն,
Զարչարանքիս դեղն է՝ իմ բաղդիս հիմքն։

Աստուած սիրունութիւն քեզ էնդուր էր՝ տո,
Որ ողորմած լինես՝ պարոն սիրականիդ,
Վարձք կանես, աչքի լոյս մէ տեսութիւն գաս,
Է՛ս ջուր տարածիս, մէ համբուրել տաս։

222 ՄԷԿԸ ՉԵՂԱՒ

Մէկը չեղաւ, որ իմանար դարդերըս
Քնքուշ ձեռքով դարման անէր վէրքերիս.
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերըս,
Անուշ բոյր տար, վարդի գոյն տար երգերիս։
Կեանքըս կը տամ սրտից բղխած համբոյրին,
Ա՜խ, թէ մէկը ինձ հասկանար ու սիրէր.
Ի՞նչ կայ երկրում, և՛ սրբազան, և՛ անգին,
Քան թէ գոհել, քան թէ լինել անձնուէր։
Բայց ես կեանքում շատ սիրեցի ու լացի,—
Մէկը չեղաւ, որ իմանար դարդերըս.
Սիրող սրտի ծարաւ, կարօտ մնացի,—
Մէկը չեղաւ, որ գուրգուրէր վարդերըս...

Ա. Իսահակեան

223 ՍԻՐՈՒՆՆԵՐ ՄԻՔ ՆԵՂԱՆԱՅ

Սիրուններ, մի՛ք նեղանայ,
Որ ես իմ եարին եմ գովում,
Դուք իմ դարդս չէք իմանում,
Էնդուր նրան եմ գովում։
Թէկուզ լինէք աղաւնեակ,
Թևիկներդ լայն բաց արած,
Ճախրելով վեր բարձրանաք,
Էլի եարիս եմ գովում։
Թէկուզ լինիք սիրամարգ,
Ձեր գեղեցիկ փետուրներով,
Կամ անուշիկ երգող սոխակ,
Էլի եարիս եմ գովում։

Մազերդ ոսկեթել է,
Ունքերդ նորածին լուսին,
Աչքերդ փայլուն աստղեր,
Էլի եարիս եմ գովում։
Որքան կուզեք զարդարուեք,
Ալ ու եշիլ գոհարներով,
Եարս սև՝ դուք ալ հագէք,
Էլի եարիս եմ գովում։
Ամէն մէկդ մէկ-մէկ փէրի,
Աչքիս առաջ ման էք գալի,
Բայց ինձի չէք գրաւի,
Էլի եարիս եմ գովում։

224 ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿ

Համեստ աղջիկ, ինձ մի տանջիր չարաչար,
Չարաչար սիրուն ջան, չարաչար։
Հոգիս հոգուդ մատաղ լինի ամեն ժամ,
Ամեն ժամ սիրուն ջան ամեն ժամ։
Ես հայ դու հայ մեր մէջ չկայ խտրութիւն,
Խտրութիւն սիրուն ջան, խտրութիւն։
Նազլու, Նազլու ինձ մի քցիր սարէսար,
Սարէսար սիրուն ջան, սարէսար։
Մատաղ կեանքումս ինձ մի դնիր գերեզման,
Գերեզման սիրուն ջան, գերեզման։

225 Ի՞ՆՉ ԷՔ ԲԱՄԲԱՍՈՒՄ

Ի՞նչ էք բամբասում, ինչ մեղք եմ արել.
Ես լոկ մի չքնաղ էակ եմ սիրել։
Բայց գիտեմ, երբէք դուք չէք դադարի.
Բամբասելը ձեզ հաճոյք է տալի.
Ուրեմն ձեզ տամ հաճոյք կրկնակի,
Այս գիշեր թող ձեր աչքը չը փակի։—
Դէհ, բամբասեցէք, նոր մեղք եմ արել.
Ես մի այլ չքնաղ էակ եմ սիրել։

Ն. Քուչակ

226 ՍԻՐՈՒՄ ԷԻ...

Սիրում էի երբեմն քեզ,
Այժմ ես տակաւին,
Իմ սրտումը դու ապրում ես,
Բայց ոչ ուժով քո նախկին։
Առաջ հնչում էիր մաքուր,
Որպէս բիւրեղ իմ հոգում.
Որպէս սիրոյ նախանձ և հուր.
Տաք արիւնս բորբոքում։
Այժմ որպէս վաղուց մեռած,
Բարեկամի յիշատակ,
Կամ մանկութեան օրով սիրած.
Մի հին երգի եղանակ։
Քո անունդ այժմ յիշելիս,
Էլ չեմ առում հոգեակս,
Չեմ աշխատում քուն մտնելիս,
Որ քեզ տեսնեմ երազում։
Բայց զարմանքով երբեմնապէս,
Մտածում եմ ակամայ,
Ի՞նչու էլ դու սիրելի չես,
Ինչո՞ւ ես քեզ մոռացայ։

227 ԼԵՌԱՆ ԳԼԽԻ

Լեռան գլխի ծաղիկներում
Պառկած էի գիշերով.
Ծաղիկները ջինջ եթերում
Բուրում էին անխառով։
Գլխիս վերև իմ սիրականն
Նման խմում էր գինի,
Իսկ ես անհոգ նրա ծնկան,
Տուել էի ինձ քնի։

Եւ ինձ թւաց. ազատ, թեթև
Թռաւ կաքաւ նա դառած.
Իսկոյն ընկայ նորա յետև
Ես բազէի թև առած:
Ծովի ափին հասայ նարիս,
Բռնի նորան բերի յետ,
Սակայն սէրը,—վա՜յ իմ օրիս,—
Սէրը թռել էր անհետ...

Ն. Քուչակ

228 ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐԻՑ

Առաւօտուն ելայ, աչքս ընկաւ երեսիդ,
Էլ չը մնաց ինձ վրայ հալ, փարի,
Տարար խելքս գլխէս, արիր սարսարի,
Մարդիկ ժողովիր գլխիս, արիր դալ, փարի:
Ասլըդ խաբար առնիմ, ըշկամ տուն դո՞ր ես,
Նախշուն շամամ ես, կարմիր խնձոր ես,
Էշխիդ ալաֆը ինձ էրեց մընձորեց,
Էլ չմնաց ինձ վերայ հալ, փարի:
Խօսքը որ կ'տաս՝ իլղարէտ մի դարձ,
Դօշդ ինձ դեօշակ, թևըդ գլխիս բարձ,
Զիլֆերդ ետ արա՛, մէ հրեսդ բա՛ց,
Տեսնամ ջավահիր ես՝ եօխտա լալ փարի:
Սալմաստեցի Յարութիւնն եմ, ջիւմլէին դաստան
Օրս էլ ընցուցիմ քիւլլի քիւրդիստան,
Իմ ու քոնը մնաց վերջին դատաստան,
Մինչ Քրիստոս իկայ ուռնէյիկալ, փարի:

229 ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Սիրում եմ քեզ մաքուր սիրով մշտավառ,
Չը կայ ոչինչ քո վարկից թանգ ինձ համար.
Այն օրից, ինչ արև շողաց իմ գլխին,
Քեզանից դատ ես չեմ սիրել ոչ մի կին:

Դու մի՛ կարծիր կիրքն է դէպի քեզ քաշում,
Կամ աղբիւրի ջրի ծարաւն է ինձ մաշում.
Հաւատա՛, եա՛ր, նոր եմ դառնում ես գետից...
Ես մաշւում եմ լոկ քո տեսի կարօտից:
Կարո՞ղ էիր երբևիցէ դու կարծել,
Թէ որչափ ինձ դու անհրաժեշտ ես դարձել.
Նայի՛ր դէմքիս, թօշնեց թշիս ալ վարդը,
Այստեղ քցեց ինձ տառապանքն ու դարդը:
Այո՛, երգս էր մի անխոհեմ, անփոյթ երգ,
Բայց դրա տեղ դու ինձ տուիր շատ խոր վէրք.
Ներիր ինձ, եա՛ր, ներիր, իմ եար քաղցրադի՛ն,
Չէ՞ որ սէրդ խելք չէ թողել իմ գլխին:

Ն. Քուչակ

230 ՔՈ ՓԱՓԱԳՈՎ

Քո փափագով վառվում եմ, արի՛, սիրեկան ո՞ւրտեղ ես,
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան, ո՞ւրտեղ ես.
Ճանապարհդ նայելով աչքերումս լոյս չը մնաց,
Ե՛կ երեւոյթ տեսանեմ, ազնիւ սիրաբան ո՞ւր տեղ ես:
Ի՞նչ պատահաւ անուշիկ, որ դուն հեռացար ինձանից,
Քաղցրախօս անոյշ լեզու, անւամբ գովական ո՞ւր տեղ ես,
Քանի՞ մէկ քանի՞ չարաչար տանջւիմ այլոց ձեռով,
Ո՛վ վեհապանծ անւանի, կեանքիս պահապան ո՞ւր տեղ ես:
Միր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առան,
Դուն արի՛ իմ միասին գնանք դատարան, ո՞ւր տեղ ես,
Թող միայն առեն, Ջիւա՛ն, սիրականդ կուգայ,
Թող տատանիմ քո սիրով մինչև յաւիտեան, ո՞ւր տեղ ես:

231 ԹՈՅԼ ՏՈՒՐ ՍՏՆԵՄ

Թոյլ տո՛ւր մտնեմ, խնձոր քաղեմ,
Ծոցդ—դրախտն Եդեմական,
Ծծերիդ մէջ գլուխս պահեմ,
Քնեմ քընով անմահական:

Քո շրթունքից ծծեմ գինի,
Ծծեմ, հարբեմ, ինձ մոռանամ,
Յետոյ թող գայ Գրողն ինձ տանի,
Դժոխք թէկուզ յետոյ գնամ։
Բայց ի՞նչ անեմ, եա՛ր, ա՛խ ու վա՛խ,
Ուրիշինն ես, ո՛վ ինչ կասի։
—Տօ, մի՛ նայիր, մտի՛ր անվախ,
Լեզուն չորնայ, ով բամբասի…

Ն. Քուչակ

---

232 Ի՞ՆՉ ՃԱՐ ԱՆԵՄ

Սիրտս դառել է մի մանուկ լալկան,
Զուր եմ խաբխբում նրան շաքարով.
Նա լալիս է միշտ, անուշ սիրական,
Եւ քեզ է ուզում օր ու գիշերով։
Ես նրան ի՞նչ ճար անեմ։
Ինչքան աշխարհում սիրուններ որ կան,
Ցոյց տալի աչքիս, զուր եմ համոզում.
Քեզանից բացի, անուշ սիրեկան,
Նա ուրիշ ոչոք, ոչոք չէ ուզում։
Ես նրան ի՞նչ ճար անեմ։

Ն. Քուչակ

---

233 ԾՆՒԵԼՈՒՍ ՕՐԻՑ

Ծնւելուս օրից մինչև հիմա դեռ
Չէ խոստովանցրել ինձ ոչ մի տէրտէր.
Հէնց որտեղ տէրտէր ես աչք եմ ածել,
Շեղել եմ ճամբէս ու թաք եմ կացել։
Բայց երբ տեսնում եմ մի կին գեղադէմ,
Գըժի պէս իսկոյն հէնց վազում եմ դէմ.
Նրա ծոցն եմ ինձ ես տաճար անում.
Նրա ծծերին եմ խոստովանում։

Ն. Քուչակ

234 ՎԱՐԴ ՑԱՆԵՑԻ

Մէկ սիրտ էրա, հէյ անջիգեար,
Արի մեր տուն ներս մտիր,
Ես հիւանդ եմ քո դարդովը,
Եկ քո սիրով ճար գտիր։
Վարդ ցանեցի, փուշ քաղեցի,
Եար փնտռեցի եարայ գտայ։
Աչքս մնաց ա՛խ քո ճամբին.
Արի տեսնեմ երազով,
Մէկ էլ տեսնեմ շեղւայ բոյդ,
Չը լինի մեռնեմ մուրազով։
Թէ սարեր կան ճամբիդ վերայ,
Թև առ թռիր անցկացիր,
Թէ չարքեր կան սրտիդ վերայ
Դուրս վանդէ շուտ հասիր…

Տալեանց

---

235 ԿԱԺՏԻՑ ԴԵՆ

Կաժտի դեն՝ կաժտի չաս, դուշա մայեա, պօճնիու վաս,
Ի՞նչ կուլի՝ ղադամ փոխես, լայեաղ անես՝ մօտս գաս,
Եադ օղլու համդամ օլայ՝ գեալ արան մաննան բեաս,
Սարի Խուդա համշարի, սուխան միզուխամ ռաս։
Շէնի ճիրիմէ, աք մօ, էխլա շէն սատ միդիխար,
Եաղինան աշնա օլինջա՝ օլ մանըմ իչուն աղեար,
Վիպիօմ կրանի վինօ, բաղիգըրայիմ գիտար,
Է՞յ զուլում, եք չար բինա թու մարա մեհմանի դիգեար,
Ծծերդ գիր բերանս, թէ չէ՝ ես կուլիմ անմաս։
Տար ու բուզ գիւլիշանդա լալ էյլադըմ բիւլբիւլի,
Որ իմ կամքը կատարես, սաս տեսնեմ ի՞նչ կուլի,
Բէդափ էշխա դուշարմ՝ դաղըթդըմ դունիա փուլի,
Էխլա մէ մօկուտէ՝ արարիս շէնի սուլի,
Վիյ նի Բող, վիյ նի անդէլ, ըշտօ խատիտէ ատ նաս։

Ջուն բէլա բաղան ու միսան՝ բուխր՝ ղաբաղջա երէ,
Գրակի պէս շափաղ գիփուն աշխարհքս կու էրի,
Կուզա պայգիօշ, պըաշու մենխա սաաբօյի բերի,
Եք սահաթ սաբր բըքուն՝ բխանամ ղաղալի շէհրի,
Էրթի օրի պոօշտի էխլա միւցի ամաս։
Խէյլի հարիֆ մարդ պիտի որ խօսքերս իմանայ,
Պայտի սուդա, սկադալայ մընէ ադին բաղ անա,
Մօտի էրթի դարձանդի, գենացվալի, չեմ թանայ,
Ղուրբանի թու, դարգիմանդ, բիա՝ մերիմ ջամխանա,
Միւկին Բուրջի էյլիր ինդի սանա իլթիմաս։

236 ԿԱՅԾԱԿ ՇԱՆԹԵՑ

Կայծակ շանթից մթնեց իմ երկին,
Ընկաւ ու հանգաւ աստղս անմեկին—
Եարս ինձ թողեց, չանսաց իմ «կաց»-ին,
Գնաց—բիւր ծաղիկ յետևից լացին։
Գուցէ ես նորան տանջեցի խանդով,
Գուցէ սիրեցի պակաս եռանդով...
Գրեցի նամակ լացով, հառաչով,
Արտասուքի մէջ թաթախուած գրչով.
Մէջը փակեցի շատ պաչ ու գգուանք,
Իսկ իմ մէջ թողի բոլոր տառապանք։

Ն. Բուչակ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

237 ԾԱՄԹԵԼ

—Իմ գլխու փուլթէն կիտամ
Դէ խանա ծամթելն ի ծոլէն,
—Լոզվորի մէկ լէ ես եմ,
Զեմ խանա ծամթելն ի ծոլէն,
—Իմ գլխու չամբար կիտամ,
Դէ խանա ծամթելն ի ծոլէն,
—Լոզվորի մէկ լէ ես եմ,
Զեմ խանա ծամթելն ի ծոլէն։
Եար ունի, եար ունի,
Եարսի եօթ ախպէր ունի,
Եար ունի, եար ունի,
Եօթ լէ գացած բանելու,
Եար ունի, եար ունի,
Նախրադնէն ուռի ծառ,
Եար ունի, եար ունի,
Խնձոր թալեմ արի տար.
Եար ունի, եար ունի,
Խնձորի կէս կծած էր,
Եար ունի, եար ունի,
Զորս բոլորն արծըլթած էր,
Եար ունի, եար ունի,
Ախպէրս ուզեց չը տուի,
Եար ունի, եար ունի,
Անուշ եարի դրկած էր,

—Իմ խաքի շապիկ կիտամ,
Դէ խանա ծամթելն ի ծոլէն.
—Իմ դօշի սրտնոց կիտամ,
Դէ խանա ծամթելն ի ծոլէն,
—Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծոլէն։
—Իմ թևի թևնոց կիտամ,
Դէ խանա ծամթելն ի ծոլէն։
—Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծոլէն.
—Իմ վզի վզնոց կիտամ,
Դէ խանա ծամթելն ի ծոլէն։
—Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծոլէն։
—Իմ ծամի ծանրութենէն,
Ծամթելս կտրե ընկե ի ծով,
Իմ ծամթելն խան տուր ի գիս,
Թու ջընել արևն յարով։
—Իմ ջուխտակ աչիչ վրայ,
Ծամթելդ խանեմ ի տամ քըզի,
Ե՞ք կիտա յըն օրն Աստուած,
Օր էրանէկ իտան մըզի։

238 ՀՈՎ ԱՐԷՔ ՍԱՐԵՐ

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարերը հով չեն անում.
Իմ դարդին դարման անում։
Ամպեր, ամպեր, մի քիչ զով արէք,
Վարար անձրև թափէք, ծով արէք,
Գէշ մարդու օր-արևը,
Սև հողի տակով արէք։

Հով արէք, ամպեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք.
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։
Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրներ,
Մի վեր կացէք իմացէք,
Տեսէք իմ սըրտի ցաւեր։
Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք.—
Սարերը հով չեն անում.
Իմ դարդին դարման անում։

239 ՄԱՐՋԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Արարան գնացող եղբայր,
Սիրականիս բարև արա,
Սիրտս այրւում է չարաչար,
Սիրականիս բարև արա։
Արինք մէջներս անսուտ երդում,
Ուրախ անցնել օրերս տրտում.
Նա ծնւել է Մելիք-քեանդում,
Սիրականիս բարև արա։
Ի՞նչ եմ անում դանձն աշխարհի,
Երբ չեմ բռնում ձեռքն իմ եարի,
Մեղքոն քեօխւի հարսին բարի,
Սիրականիս բարև արա։
Սիրելիս հագին ալ ունի,
Ուսին թանկագին շալ ունի,
Սալւին սիրուն ման գալ ունի,
Սիրականիս բարև արա։
Ես էրւում եմ սիրականից,
Չկայ մէկը ինձ կարեկից,
Շիրակեցի Մարջանեանից
Սիրականիս բարև արա։

240 ՀԱԽԱՐ ԶՈՒԼՕ

Հաւա՜ր Զուլօ, մադա՜թ Զուլօ,
Քեզի տեսայ, վա՜ռայ Զուլօ,
Բացւի՜ր, բացւի՜ր, բացւի՜ր,
Բացւի՜ր, իմ վարդ Զուլօ:

Ես Ալէքն եմ Մաստարեցի,
Սի՜րուն, արի՜, մեր տուն կեցի,
Դէմ աղօթրան եկեղեցի.

Հաւա՜ր Զուլօ, մադա՜թ Զուլօ,
Քեզի տեսայ, վա՜ռայ Զուլօ,
Բացւի՜ր, բացւի՜ր, բացւի՜ր,
Բացւի՜ր, իմ վարդ Զուլօ:

Արեն ելաւ կամար կամար,
Զուլօն կապեց ոսկէ քամար,
Ես կը մեռնեմ քեզի համար:
Արեն ընկաւ ամուր բերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թող գիս քերթին:
Դու դաշտ կուգաս հոլա հուլա,
Կու նըրմանիս բամբկի քուլա,
Աչքս տեսաւ, սիրտս կուլայ:
Մեր ջուխտ պուլթան դաշտ կու բանի,
Զուլօ խաթուն հաց կու տանի,
Աչքով, ունքով մարդ կու սպանի,
Հելե՜լ-վելե՜լ, Մըսրու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ Քեալաշու փէշ,
Զուլօն եղնի ինձի փէշքէշ:

241 ԾԱՄԵՐԴ ԾԱՄԵՐԴ

Ծառի վերայ բացւել է կարմիր վարդը
Քեզի ղուրպան ես կը տանեմ քու դարդը·
Ծամերդ, ծամերդ·
Շեկոյ ջան մազերդ,
Սիրունիկ ունքերդ:

Զօր ու գիշեր կքաշեմ քու կարօտդ,
Զմեռնէի քիչ մնայի քու մօտդ...
Ծամերդ, ծամերդ...
Լալէն աչքերիս մէջն է ցաւն ընկել,
Քո սիրովդ ես շատ դռներ եմ ընկել.
Ծամերդ, ծամերդ...
Թէկուզ հոգիս էլ որ ելնի բերանիցս
Քո անունը դուրս չեմ հանի մտքիցս.
Ծամերդ, ծամերդ...
Քանի անգամ ձեր դռներէն անցել եմ,
Ձեռքս դռան վրայ դրած լացել եմ.
Ծամերդ, ծամերդ...

242 ՀՕ՛Յ ՆԱԶԱՆ ԻՄ

Հօյ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Նազա՛ն, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար,
Նազա՛ն, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր սօլերով եկար.
Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հօյ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Ինձ համար աղունիկ ես.
Ջա՛ն Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Գլխիս վրով պտիտ տուր,
Հօյ, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Նախշուն թև թիթեռնիկ ես:
Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,
Եա՛ր ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար.
Խոր խոր ձորերով եկար,

Եա՛ր ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Կարմիր սօլերով եկար։
Ճամբա՛յ տուէք՝ առաջ գամ,
Սիրած եարիս բարև տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ։
Սա՛րեր, ձո՛րեր, յետ կացէ՛ք,
Իմ եարի ճամբէն բացէք.
Եար եարի հետ խօսելիս
Ականջ արէք, իմացէք։
Նշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Էրանէկ էն աղջըկան՝
Սիրած եարին թուշ կըլնի։

243 ԲԱՑ ԽՈՒՐՋԻՆԸ

Կանգնել ես ախա-բախա,
Ալթուն ուստան գեօք սինաբաղ աթմիշամ հէյ
աթմիշամ եա՛ր աթմիշամ.
Լաչագիդ տուտը կախա,
Բաց խուրջինը տո՛ւր դանակը, խնձոր կտրեմ
տար եարիս գիլիմ, գիլիմ, գիլիմ.
Թուխ տղայ սիւտակ աղջիկ,
Բռնել են իրար եախա։
Պուճուր աղջիկ գալում ես,
Մազերդ սղալում ես,
Խունջիկ—մունջիկ մի անի,
Ինձ առնելու կամ ունես։
Բիւլբիւլ արի՛ մեր բաղը,
Ասա՛ իմ եարի խաղը,
Խաղիդ միջով բարև,
Հասցրու եարիս թաղը։

Նոր եմ եկել հնձանից,
Դու մի փախչի ինձանից,
Ձեր տուն Աստուած քանդի,
Թէ որ շուտ գաս ինձանից։

244 Ա Լ Ա Գ Ե Ա Զ

Ալագեազ բարձր սար է, եա՛ր,
Ջուրը հիւանդի դեղ է, եա՛ր,
Ես սիրեցի խալխը տարաւ իմ սիրած եարը,
Օրթէ չառնեմ ես կը մեռնեմ, իմ անուշ եարը,
Սիրածը սիրածին չեն տալ,
Էս ինչ անօրէն դեղ է։
Լուսնեակն է կայնել դարին,
Պատկերքն է քու պատկերին,
Լուսնեակ ջան, թէզ մի էրթայ,
Ջուր մէկ լէ գալող տարին։
Երկինքը կամար կապեց,
Սև մազերս սպիտակեց.
Փիս մարդի սուտ խօսքերը,
Ինձ քեզանից շուտ ջոկեց։
Ղուշը կշտովս անցկացաւ,
Թռաւ գնաց, անցկացաւ,
Էրկուսիս մէջտեղովն,
Որ սրտամեռն անցկացաւ։

245 ՍԻՐՈՒՆ ՋԱՆ

Սի՛րուն ջան, սիրուն ջան,
Սի՛րուն ջան, սիրտդ մի բանայ,
Նըշանած դինուոր եմ,
Ես չեմ դիմանայ։
Սի՛րուն ջան, սիրուն ջան,
Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի՝ ալ-վալայ ա,

Հեռու տեղ մի եար ունեմ՝
Նըրան հասակ, լալայ ա։
Սիրուն ջան, սիրուն ջան, և այլն։
Էս գիշեր էս դուս եկայ,
Թախախ ձընիկ թացել ա.
Կը կաթէր մարմար քարին,
Եարիս աչքն ա՝ թացել ա։
Լուսնակը բակ ա գըցել,
Քեզ ամպի տակ ա գըցել,
Իմ կուրացած բախտըն էլ
Ինձի մենակ ա գըցել։
Ամպել ա կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Դու ուրիշ միտք մի անի,
Մի ջան ունիմ քեզ համար։

246 ԷՍ ԳԻՇԵՐ

Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Վա՜յ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜,
լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜,
Ձիւնն եկեր, գետին նախշեր,
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանալ,
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.
Աչքըդ դէմ արա՝ պաչեմ,
Վա՜յ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜,
լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜,
Կեռ ունքեր կարմիր թըշեր։
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանալ,
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.
Ա՜յ գիշեր, դարձիր տարի,
Հացըս թող լինի գարի,
Մենակ եարըս ինձ համար
Սրտով խօսքը կատարի։

Ա՛գջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.
Դու իմ խօսքին ականջ դիր,
Ես մօրըդ հաւան կանեմ։

247 ՄԻ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի լար բլբուլ քեզ մի տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ.
Վարդդ սիրուն, վարդդ կարմիր,
Թփից պոկեց ու տարաւ։
Կանցնեն օրեր կ՚գայ կրկին,
Մի նոր գարուն վարդաբեր,
Եւ մոռացած քո վիշտը հին,
Նորից կ՚երգես վարդի սէր։
Բայց վա՜յ կեանքին այն խեղճ երգչի,
Որ վաղաժամ որբացաւ,
Իւր սիրելի խօսող վարդից,
Նա յաւիտեան զրկուեցաւ։
Երգչի համար գարուն չի գայ,
Եւ ոչ նոր վարդ կ՚սիրէ,
Նա պէտք է լայ, պէտք է սգայ,
Մինչ յաւիտեան պիտ՚ լռէ։

Ա. Տ.

248 ՄԱՆԱՆԻ ԵՐԳԸ

Արի էյ Մանան, արի գնանք մեր տունը,
Գիշեր ու զօր կորաւ աչքերիս քունը.
Եա՜ր, եա՜ր, Մանան ջան եա՜ր,
Ջանան ջան եա՜ր։
Մանանիս հայրիկը չըլտըր ղասապ է,
Ինձի Մանանիս քով երթալ յասաք է.
Եա՜ր, եա՜ր, Մանան ջան եա՜ր,
Ջանան ջան եա՜ր։

Մանանը վիրէն կուզար շալկինը ժախ էր,
Ոսկէթել մազերը թիկունքից կախ էր․
Եա՛ր, եա՛ր, Մանան ջան եա՛ր,
Ջանան ջան եա՛ր։
Երկինքը ամպել էր, գետինքը թաց էր,
Մանանիս ծըծերը կիտէն հետ բաց էր․
Եա՛ր, եա՛ր, Մանան ջան եա՛ր,
Ջանան ջան եա՛ր։
Գիշերը դուրս էլայ ինչ անուշ թօն էր,
Կաղնած մայլի էլայ Մանանիս հոն էր․
Եա՛ր, եա՛ր, Մանան ջան եա՛ր,
Ջանան ջան եա՛ր։
Գիշերը դուրս էլայ ոտքս բոբիկ էր,
Արծաթէ քամարը մէջքիս զօտիկ էր․
Եա՛ր, եա՛ր, Մանան ջան եա՛ր,
Ջանան ջան եա՛ր։

---

249 ՍՈՆԱ ԵԱՐ

Սոնա եա՛ր, Սոնա եա՛ր,
Սոնա սիրուն, Սոնա եա՛ր,
Վարդավառը գալիս ա,
Սոնա եա՛ր, Սոնա եա՛ր,
Ծաղիկը ցընծալիս ա․
Սոնա սիրո՜ւն, Սոնա եա՛ր,
Ա՛յ գիւլում կանչող աղջիկ,
Սոնա եա՛ր, Սոնա եա՛ր,
Ջէնըդ ծըլվըլալիս ա։
Սոնա սիրուն, Սոնա եա՛ր։
Կանաչ տեղը՝ բաղում ես,
Պարի մէջին խաղում ես,
Կաքաւի պէս սորալով,
Տըղաներին դաղում ես։

Կարմիր գինին թասումը,
